

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35րդ. ՏԱՐԻ ԹԻԻ 15 (1715) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 25, 2015
VOLUME 35, NO. 15 (1715) SATURDAY, APRIL 25, 2015



Պաշտօնաթիւրք
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104



1915  2015



ՀԻՇՈՒՄ ԵՄ ԵՒ ՊԱՀԱՆՋՈՒՄ
I REMEMBER AND DEMAND

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ, ՉԱՓԱՆԻՇ՝ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԵՎ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԹՕՆՔԻ

Մենք, գիտակցաբար գանց առիճ մեր ներկայ խմբագրականի վերնագրին «նանաչում» բայը, որ սովորաբար կը նախորդէր «դատապարտել» եւ «հատուցել» բայերուն: Մենք, նախապէս, շեշտը կը դնէինք Օսմանեան Թուրքիոյ իրագործած Ցեղասպանութեան նանաչման մեր պահանջատիրութեան վրայ: Թուրքիա կ'ուրանար միշտ եւ կը խեղաթիւրէր պատմական իրողութիւնները, անգամ, կ'աշխատէր, առ ի չգոյէ փաստարկութիւններ յօրինել միջազգային հանրային կարծիքին ապացուցանելու համար, որ նման բան պատահած չէ, ընդհակառակը՝ հայերն են եղած ջարդարարները...:

Նման բարբառանքներ մատնոց մը ջուր չէին լեցներ անշուշտ, քանի պատմական փաստերը կու գային ապացուցանելու ճիշդ հակառակը, թէ՛ Օսմանեան Թուրքիոյ հայժողովուրդի դէմ իրագործած Ցեղասպանութիւնը անվիճելի իրողութիւն էր: Ցեղասպանութիւն մը, որուն վկայութիւններն էին անելի քան մէկ ու կէս միլիոն անմեղ գոհերը: Վկայութիւնն էր, նոյն թուաբանակով աշխարհի չորս ցամաքամասերուն վրայ ապաստան գտած Ցեղասպանութենէն վերապրող հայութիւնը: Վկայութիւնն էին բռնագրաւուած Պատմական Հայրենիքի Արեւմտեան Հայաստանը եւ Ցեղասպանութիւնը նանչցող յառաջադէմ բազմաթիւ երկիրներու երկար շարքը, ուր շատեր կը ֆրէակնացնէին անիկա:

Այսօրուան դրութեամբ, օրէ օր յաւելում կ'արձանագրէ Ցեղասպանութիւնը նանչցող երկիրներու թուաբանակը: Յառաջադէմ անելի քան 22 երկիրներ, ոչ միայն կը նանչնան եւ կը դատապարտեն Ցեղասպանութիւնը, նաեւ կը յորդորեն արդի Թուրքիոյ, որ իր կարգին նանչնայ եւ դարձանէ իր նախորդներուն գործած չարիքը՝ հայ ժողովուրդի դէմ: Անոնց շարքին կը դասուին ԱՄՆ-ի 44 նահանգները, որոնք կը պահանջեն իրենց կեդրոնական կառավարութիւնէն ընդունի՛լ Ցեղասպանութեան փաստական իրողութիւնը եւ դատապարտել՝ ցեղասպան Օսմանեան Կայսրութիւնը:

Բաց ասդի, Եւրոպական Միութիւնը կը մերժէ իր կազմէն ներս ընդունիլ Թուրքիոյ անդամակցութիւնը, գոր կը պայմանաւորէր Ցեղասպանութեան նանաչումով: Նաեւ՝ յիշեցնենք, որ Հիմնուելով 1987թ-ի Յունիսի 18-ին իր կողմէ ընդունուած «Հայկական հարցի ֆաղափական լուծման մասին» բանաձեւին վրայ, ՄԱԿ-ի, Ցեղասպանութիւններու կանխարգելման եւ յանցանքները պատժելու մասին պայմանագրութեան եւ շարժմը այլ միջազգային փաստաթուղթերու վրայ՝ Եւրախորհրդարանը կը վերահաստատէ թէ 1915-1917 թուականներուն Օսմանեան կայսրութեան տակ հայերու հանդէպ բռնութիւնները ցեղասպանութիւն էին, եւ «խստօրէն կը դատապարտէ անոնց հերքումը»: Արդարեւ՝ անոր 100-ամեայ տարելիցի առիթով, Եւրոխորհրդարանը Ապրիլ 24-ը կը հռչակէ «Հայոց Ցեղասպանութեան Յիշատակի Օր»:

Այդ բոլորին վրայ, կարելի չէ անտես անցնիլ միջազգային վարկի արժանացած յառաջադէմ անելի քան 200 թուրք մտաւորականներու, գրողներու, բժիշկներու, փաստաբաններու եւ համալսարաններու դասախօսներու, անգամ պետական դէմքերու եւ ֆաղափական կուսակցութիւններու ժողովրդական լայն մասսաներու՝ երկրի իշխանութիւններու դէմ բանեցուցած ճնշումներուն վրայէն, որոնք կը պահանջեն թուրք իշխանութիւններէն, Ցեղասպանութեան 100-ամեակի առիթով, առերես գալ իրենց անցեալի պատմութեան հետ, նանչնալ գայն եւ ներողութիւն խնդրել հայերէն...:

Շոնքալիցը այդ բոլորի վրայ՝ Վատիկանի Սրբ. Պետրոս Տանարի մէջ ամփոփուած ծիրանաւորներու, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսիսեանի, Ն. Ա. Օծնութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա-ի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԲ-նի եւ բազմաճակատ հայ եւ օտար ֆաղափագէտներու ու աշխարհով մէկ տարածուած մէկ միլիար հաշուող կաթողիկէ համայնքի հաւատացեալներու վիթխարի բազմութեան առաւելած իր խորիմաստ նշանակութիւն ունեցող պատգամով, Սրբազան Գահանայապետը, Ֆրանսիսկօ Պապը, պիտի գար պաշտօնապէս նանչնալու եւ հաստատելու հայոց դէմ իրագործուած աշխարհի առաջին Ցեղասպանութիւնը, որուն «անպատժելիութիւնը պատմաւոր հանդիսացաւ Ստալինեան, Հիթլերեան եւ մեր արդի ժամանակներուն՝ Գամպուտիայի, Ռուսոտայի, Պուրուգոտիայի եւ Պոստիմի մէջ տեղի ունեցած եւ տակաւին շարունակուող ցեղասպանութիւններուն: Սուրբ Գահանայապետը իր խօսքի աւարտին պիտի պատգամէր միշտ յիշել մեր նահատակները, հակառակ դէպքին, «եթէ չկայի շատակը՝ չարիքը բաց է...» պիտի ըսէր ան:

Սրբ. Գահանայապետին պատգամը՝ լոնելայն յորդո՛ր էր Թուրքիոյ իշխանութիւններուն առերես գալու իրենց պատմութեան հետ եւ աշխատելու դարձանել Օսմանեան Կայսրութեան՝ հայ ժողովուրդի դէմ իրագործած ազգակործան մեղքը, յանուն արդարութեան եւ աշխարհի խաղաղութեան:

Վերոյիշեալ մատնանշուած փաստարկութիւնները ցոյց կու տան, որ հայոց Ցեղասպանութեան «նանաչման» հարցը, արդէն իսկ կը գտնուի իր դրականապէս լուծման ընթացքին մէջ, ինչ որ մեծ յոյս կը ներշնչէ աշխարհին:

Հայժողովուրդը կը հաւատայ, որ նշարտութիւնը ուշ կամ կանուխ պիտի յաղթանակէ եւ աշխարհ պիտի նանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը, առանց կարեւորութիւն ընծայելու, աշխարհի այսպէս կոչուած՝ մարդասէր, արդարասէր եւ ժողովրդավար՝ անգամ գերօր քանի մը երկիրներու, թող տալով անոնց, որ շարունակեն կարեւորել իրենց պետական գծուած շահարկումները: Անոնք, որոնք իրենց խիղներուն վրայ ֆար դրած, իրենց պետական շահերը կը գերադասեն փոքր ազգերու դէմ կիրարկուող անարդարութիւններուն, ջարդերուն, նախնիրներուն, ցեղասպանութիւններուն՝ պիտի առաւելագոյնս մեղադրուին եւ գամուին անարգանքի սիւնին մարդկային պատմութեան կողմէ...:

Ցեղասպանութեան 100-ամեակի տարելիցին ներկայ հանգրուանին, Հայժողովուրդը կը գտնուի Ցեղասպանութեան Դատապարտութեան եւ Հատուցման հիմնական պահանջատիրութեան ազգային պատասխանատու դիրքերու վրայ, թող որ Թուրքիա տակաւին շարունակէ ուրանալ գայն ամէն արհամարհանք, նուաստացում եւ ազգային արժանապտուութիւն ոտնի տակ առնելով: Թուրքիա, այսօր, Ցեղասպանութիւնէն հարիւր տարի անց, ոչ միայն կ'ուրանայ, այլ նաեւ, ինքն իր կարգին կը շարունակէ անիկա: Անոր իրագործման մերօրեայ ապացոյցներն են Հրանդ Տիմիւր անարգ սպանութիւնը, հիւսիսային Սուրիոյ Հալէպ ֆաղափ հայկական եկեղեցիներու եւ թաղամասերու ուժակոծումները, Թուրքիոյ սահմանակից հայկական պատմական օրրան՝ Գէսապ ֆաղափ բռնաբարման ու շէնքերու ֆանդման նկրտումները եւ Տէր Զօրի Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հրոյ նարակ դառնալը եւ ներկայ վերջին օրերուն, Հոռմի Սուրբ Գահանայապետ՝ Ֆրանսիսկօ Պապի հայոց Ցեղասպանութեան նանաչման կապակցութեամբ վաւերական կեցում արդողած՝ Թուրքիոյ նախագահ Էրտողանի սպառնալիքը՝ «100 հազար հայ կըրնայ արտահանել իր երկրէն»:

Թուրքիոյ այս ժխտական վերաբերմունքին մէջ անհասկնալի ոչինչ կայ:

Այդ ո՞ր է տեսնուած, որ գողը ընդունած ըլլայ իր գողութիւնը: Այդ ո՞ր է լսուած, որ ոճրագործը ընդունած ըլլայ իր ոճրագործութիւնը: Իսկ Թուրքիա, որ իր ուսերուն կրած ունի անելի քան մէկ ու կէս միլիոն հաշուող անմեղ գոհեր, բազմամիլիար տոլարի շարժում եւ անշարժ կալուածներու վնասներու հատուցման պարտաւորութիւն, իր խղճին վրայն տած անսփոփելի, անզնահատելի, անդարմանելի՝ հայժողովուրդի մշակութային ժառանգութիւններու բնաջնջման պատիժի անխուսափելիութիւն, ու պատմական երկիր՝ Արեւմտեան Հայաստանի ոճրային բռնաբարման վերջ տալու եւ զանիկա իր իրաւատիրոջ՝ հայժողովուրդին վերադարձնելու պարտադրանքի անխուսափելիութիւն...: Ի՞նչպէս չուրանայ, Թուրքիա, որուն արիւնոռուշտ նախահայրերուն՝ հայ ժողովուրդի դէմ կատարած Ցեղասպանութիւնը, աւագակութիւնը, մշակութային վանտալիզմը, ստեղծագործ հանճարեղ գանկերու ջախջախումը եւ անոր պատմական հայրենիքի բռնագրաւումը, կը ծանրանան միայն ու միայն իր ուսերուն վրայ:

Մենք, իբրեւ հայ, ալ կ'անտեսենք հայոց դէմ իրագործուած Ցեղասպանութեան Թուրքիոյ ուրացումը: Բաւ է մեր 100-ամեայ բարեմտութիւնը: 100 անգամ հարիւր տարի ալ սպասելու ըլլանք՝ Թուրքը իր վայրենի բնագոյններով պիտի մնայ նոյն թուրքը: Ան պիտի ուրանայ իր նախահայրերուն իրագործած Ցեղասպանութիւնը: Ան մշտատեւ պիտի հետապնդէ իր ժանգոտած առաջարկութիւնը, այն երազային յոյսով, որ օրին մէկը պիտի կազմուի իր հաւանութեան ենթակալ վատահելի «պատմաբաններու» մարմին մը, որ ֆնէ գայն, տեսնելու համար եթէ Օսմանեան Կայսրութեան՝ հայոց դէմ կատարածը իսկապէս Ցեղասպանութիւն էր: Եթէ առիթը ներկայանայ՝ ան պատրաստ է նոր ցեղասպանութիւններ նիւթելու հայոց դէմ: Ինչքան իմաստալից է կարիքի մահացու խայրոցին պատմութիւնը...

Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի յաղթական ոգեկոչումը անվիճելի վկայութիւնը հանդիսացաւ մահը մերժող հայ ժողովուրդ մը ըլլալուն, ինչպէս պիտի բնութագրէր հայագիտ երախտաշատ գաւակ Ուիլիըմ Սարոյեան: «Վերապրող հայժողովուրդի մէն մի անհատը Հայոց Ցեղասպանութեան՝ ի յոյս աշխարհ բացուող նշարտութեան ապացոյցն է», ինչպէս պիտի վկայակոչէր Ցեղասպանութեան 100-ամեակի տարելիցին նուիրուած միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական պատմական նշանակութիւն ունեցող հոգեհանգստեան պաշտամունքի գլխաւոր բանախօս՝ Լ. Նու Աննելըսի ֆաղափապետ Էրիկ Կարսեթին...:

Այսօրուան դրուածքով, հայ ժողովուրդը ալ համոզուած է, որ իր արդար դատին լուծման բանալին կը գտնուի իր ազգային միասնութեան բռնցքաւորման եւ համերաշխ գործակցութեան մէջ: Զկայ՝ այլ ընտրանք: Այս է մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն պատգամը:

Արդարեւ, Հայաստան-Արցախ-Սփիւռք, իրենց հետեւողական աշխատանքով, տէ՛ր պիտի կանգնին իրենց սուրբ եւ արդար պահանջատիրութեան: Անոնք պիտի չմոռնան իրենց նահատակները: Պիտի չթուլան իրենց պայքարին մէջ: Պիտի չսակարկեն իրենց գոհերուն թանկ արիւնը: Փոխընտրանք պիտի չընդունին իրենց պահանջատիրութեան մէջ, երբե՛ք: Այս է պատգամը մեր անելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն, «Պայքար, պայքար մինչեւ վերջին յաղթանակ» սրբատար լոզունքի ներքեւ:


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՎՐԱՏ ՀՆՁՄԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵՆՍ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

Պոլիս. Փարամազին Լուիրուած Գիրքի Շնորհահանդէս

Պոլսոյ կալաթասարայ թաղամասի ձէգայիր համալիրին մէջ երէկ տեղի ունեցաւ Հնչակեան անմահ դեկավար Փարամազի մասին թրքերէն լեզուով հրատարակուած գիրքի շնորհանդէսը, ներկայութեամբ Պոլսոյ մտաւորականներու, ընկերակարականներու, գրողներու, ֆիլմարուեստագետներու, քաղաքական գործիչներու: «Արդի Յիշողութեան Վերակառուցում. Հայ յեղափոխական Փարամազը» գիրքին հեղինակն է գրող եւ քաղաքական գործիչ Քատիր Աքընը, որ նախապէս դարձեալ Պոլսոյ մէջ կազմակերպած էր Հնչակեան Քսան անմահներու յիշատակի հանդիսութիւնը՝ 2013 թուականին: Ան իր խօսքին մէջ նշեց,



Ընկ. Ալեքսան Բէօշկէրեան եւ գիրքի հեղինակ՝ Քատիր Աքըն



որ քանի մը տարի առաջ ծանօթանալով Փարամազին եւ անոր գործունէութեան, անպայման ուզած է բացայայտել Փարամազի աշխատանքը եւ ընկերակարական շարքերուն մէջ անոր դերը: Գիրքին մէջ ներկայացուած է Փարամազի ընկերակարական գործունէութիւնը, անոր քաղաքական եւ յեղափոխական աշխատանքը Օսմանեան թուրքիոյ մէջ, նաեւ Հայոց Յեղապանութեան արհաւիրքը՝ իր գանազան հանգրուաններով: Նշենք, որ Փարամազ կը համարուի Պոլսոյ մէջ ընկերակարական շարժումի գլխաւոր հիմնադիրներէն մէկը: Հանդիսութեան ընթացքին նաեւ խօսք առաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Ալեքսան Բէօշկէրեան: Ան յատկապէս իր խօսքը ուղղեց բոլոր ժխտողներուն եւ հարց տուաւ, որ ազգերու ինքնորոշումի իրաւունքն աւելի արդար ի՞նչ սկզբունք կարելի է հետապնդել: «Մեր ժողովուրդը ուզեց ապրիլ ազատ եւ անկախ, իր պապերու հողերուն վրայ: Այս պատճառով, ազգայնամոլ թուրքերը

ընչ որ հայերը պատճեցին Յեղապանութեամբ», ըսաւ Ընկ. Բէօշկէրեան: Ան հաստատեց, թէ օրին մէկը թուրքիոյ Հանրապետութիւնը պիտի ճանչնայ յեղապանութեան փաստը:

Անոր հրատարակած նորագոյն գիրքին համար: Պատուիրակութիւնը Նոր Զարթօնք կազմակերպութեան կեդրոնին մէջ տեսակցեցաւ վերջերս Քոպանի-Այն Արապի մէջ զոհուած Սիւպհի Նեժաթի ծնողքին հետ: Նշենք, որ Նեժաթ իր յեղափոխական անունը ընտրած էր Փարամազ Քզըլպաշ: Անոր ծնողները ընդունեցին Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի ներկայացուցած յուշանուէրը: Անոնց համաձայն, Սիւպհի



Սիւպհի Նեժաթ (Փարամազ Քզըլպաշ) ծնողքը կը ստանան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի յուշանուէրը

Նեժաթ փոքր տարիքէն մտած էր յեղափոխական պայքարի մէջ, ապա ծանօթանալով Փարամազի գործունէութեան, որոշած էր Փարամազի անունը կրել որպէս մարտական անուն:

Լուիւրուած Գիրքի Շնորհահանդէս 100-ամեակը



Խաչքարի մօտ աղօթք կը կատարէ Տէր Թադէոս Ապտալեան

Ամերիկայի հարաւը գտնուող Լուիզիանա նահանգի փոքրաթիւ հայութիւնը նշեց Հայոց Յեղապանութեան 100-եայ տարելիցը:

Կիրակի, Ապրիլ 19-ին, Պատն Ռուժի Ս. Կարապետ եկեղեցին լեցուած էր հայութեամբ, որոնցմէ շատեր եկած էին Նիւ Օրլէյնզէն եւ մօտակայ նահանգներէն:

Պատարագեց եւ ապա նահատակներու յիշատակին հոգեհանգիստ կատարեց, Եկեղեցւոյ հովիւ Տէր Թադէոսի Ապտալեան:

Եկեղեցական արարողութեան ներկայ էր տեղական ABC հեռատեսիլի ալիքի նկարահանող խումբ, որ եկած էր հաղորդում պատրաստելու երեկոյեան իրենց լուրերու բաժինին համար:

Պատարագէն ետք ժողովուրդը ուղղուեցաւ եկեղեցւոյ սրահը, ուր հոգեճաշ մատուցուեցաւ եւ ապա գործադրուեցաւ պատշաճ յայտագիր, նուիրուած 100-ամեակին:

Օրուայ հանդիսավար, Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ Վազգէն Գալթաքճեանի բացման խօսքէն ետք, Տիկ. Ազատուհի Մութաֆեան ապրումով ասմունքեց Յովհաննէս Շիրակի Բողոքում եմ բանաստեղծութիւնը, մեծապէս խանդավառելով ներկաները, որոնց մէջ ուշագրաւ թիւ կը կազմէին երիտասարդները:

Օրուայ բանախօս որպէս Լոս Անճելըսէն հրաւիրուած էր «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմի անդամ Գրիգոր Խոտանեան: Ան իր ելոյթին մէջ անդրադարձաւ Եղեռնի 50-ամեակէն ի վեր հայութեան արձանագրած յաջողութիւններուն՝ Յեղապանութեան ճանաչման ուղղութեամբ:

«Հակառակ թրքական կառավարութեան յաւակնութիւններուն, 100-ամեակի առթիւ հակազդելու եւ կանխելու ճանաչման աշխատանքները, էրտողան իշխանութիւնները այս օրերուն կը կրէ հսկայ պարտութիւններ, միջագային թատերաբեմի վրայ», ըսաւ բանախօսը, յատկապէս յիշելով



Ելոյթ կ'ունենայ օրուայ բանախօս՝ Գրիգոր Խոտանեան

Հռոմի Ֆրանչիսկոս Պապի պատմական ելոյթը եւ Եւրոպական Միութեան Խորհրդարանի բանաձեւը: «Մինչեւ Ապրիլ 24-ը տակաւին կան մի քանի օրեր եւս ե մենք ականատես կրնանք ըլլալ նոր անակնկալներու», ըսաւ բանախօսը:

Ան իր խօսքին մէջ կոչ ըրաւ Միացեալ Նահանգներուն չենթարկուել թրքական ճնշումներուն ու հաւատարիմ մնալով իր դաւանած մարդկային իրաւանց իրաւունքներուն, հետեւելու Պապի օրինակին:

Փակման խօսք կատարեց Տէր Թադէոս Ապտալեան, անդրադառնալով Ապրիլ 23-ին Ս. Էջմիածինի մէջ տեղի ունենալիք 1.5 միլիոն նահատակներու հաւաքական սրբացման: Տէր հայրը յիշեցուց, որ ներկաներէն իւրաքանչիւրը հարազատներ կորսնցուցած է Եղեռնի պատճառաւ եւ հետեւաբար իւրաքանչիւր հայ, սուրբի մը ժառանգորդը կը դառնայ:

Ելոյթներէն ետք, ներկաները ուղղուեցան եկեղեցւոյ կից հայոց գերեզմանատունը, ուր կը գտնուի Նահատակներու յիշատակի խաչքարը: Հոն գետեղուեցաւ ծաղկեպսակ ու կատարուեցաւ աղօթք:

Armenian Genocide Commemorative Event
Alex Theatre, 216 N. Brand Blvd.
Sunday, April 26, 2015 | 7:00 P.M. (Doors will open at 6:30 P.M.)

ԼՈՒՐԵՐ

Նեւատայի Մէջ Հաստատուեցաւ Հայաստանի Պատուոյ Հիւպատոսութիւն



Պատուոյ հիւպատոս Անտի Արմէնեան կը կտրէ բացման ժապաւենը

Ապրիլ 18-ին, Լաս Վեկասի մէջ կատարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոսութեան պաշտօնական բացումը: Այս առթիւ տեղի ունեցած միջոցառումներուն ներկայ եղան տեղական քաղաքական ղեկավարներ, Լոս Անճելըսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Պր. Սէրկէյ Սարգիսով, Արեւմտեան Թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան եւ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ այլ անձնաւորութիւններ:

Շուրջ 20 հազար հայութիւն հաշուող Նեւատա նահանգէն ներս պատուոյ հիւպատոս նշանակուած է Պր. Անտի Արմէնեան, որ հիւպատոսարանի բացման հանդիսութեան ընթացքին յայտարարեց թէ, հիւպատոսարանը պիտի ծառայէ որպէս մշակութային կեդրոն շրջան հայութեան համար եւ նաեւ անցագրերու եւ վիզայի գործողութիւններու պիտի կատարէ Հայաստանի քաղաքացիներուն եւ Հայաստան այցելողներուն համար:

Հիւպատոսարանի բացման հանդիսութիւններուն ներկայ էր նաեւ ՄԳՀ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի անդամ Կէրի Սինանեան, որ այս առթիւ յայտարարեց. «Պատուոյ հիւպատոսութիւնը մեծապէս օգտակար պիտի դառնայ Լաս Վեկասի օրէ-օր աճող հայկական գոհացումներուն համար եւ պատուոյ հիւպատոսի ներկայութիւնը դրական յաւելում մը պիտի դառնայ նահանգին համար»:

Ընկ. Սինանեան նաեւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Նեւատայի նահանգապետ Պրայըն Սանտովալ Ապրիլի 19-26-ը յայտարարեց Հայկական Յեղասպանութեան յիշատակման օրերը: «Որպէս այս նահանգի բնակիչ եւ հպարտ եմ մեր կոնսուլարիչին կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումով», ըսաւ Կէրի Սինանեան:

Նահատակ գրողներու նուիրուած դասախօսական երեկոյ

Շաբաթավերջի չիշարժան ձեռնարկներէն մին էր Ուրբաթ 17 Ապրիլի 2015, երեկոյեան տեղի ունեցած դասախօսական երեկոն, նուիրուած նահատակ գրողներու: Յեղասպանութեան 100րդ տարեկիցի միջոցառումներուն հետ առնչուող սոյն երեկոն կազմակերպուած էր Կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մշակութային յանձնախումբին կողմէ, եկեղեցւոյ սրահին մէջ: Հիւսիսային Ամերիկայի Կաթողիկէ Հայոց առաջնորդ Միքայէլ Եպս. Մուրատեանի հովանաւորութիւնը վայելող վերոնշեալ ձեռնարկին ներկայ էին հայկական քաղաքական եւ մշակութային տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ: Հայր Անտոն Վրդ. Նորատուկեան իր բացման խօսքին մէջ ողջունելով ետք ներկաները, պարզեց օրուան նպատակը, ոգեկոչելով չիշատակը 20րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ զացած մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն: Սփիւռքահայ հանրաժանութիւնը պիտի կրէ իր պարտքը զիջողութեան հիմնական գիւղերու հեղինակ Սարգիս Վահագնի վիճակուած էր ներկայացնելու մեր նահատակ գրողները: Նիւթը շատ

ընդարձակ եւ բազմաբնոյթ ըլլալով, յարգելի դասախօսը բաւարարուեցաւ ներկայացնելով անոնցմէ չորսը միայն...: Երկու բանաստեղծներ՝ Դանիէլ Վարուժան եւ Սիւսաննա Երկու արձակագիրներ՝ Գրիգոր Զոհրապ եւ Երուստան: Սարգիս Վահագն իրեն վիճակուած կարճ ժամանակամիջոցին կրցաւ ամփոփ կերպով ներկայացնել իւրաքանչիւրի կեանքն ու ոբերգական վախճանը, շեշտը դնելով անոնց թէ քերթողութեան եւ թէ արձակի գեղագիտական ստեղծագործութեան մեծ արժանիքներուն վրայ: Իր խօսքի աւարտին Ս. Վահագն ըսաւ «Ոճիւրը իր հաւաքող կազմակերպութեամբ իսկ չի կրցաւ անճիտել արեւմտահայ շքեղ մեր գրականութիւնը, շնորհիւ նախնիներէն հրաշքով ազատած կամ պարագաներու բերումով թուրքիայէն դուրս գտնուած նոյն համաստեղութեան այն բախտաւորներուն, որոնք կը կոչուէին՝ Թէքէեան, Յակոբ Օշական, Զոպանեան, Զապէլ Եսայեան, Լեւոն Շանթ եւ Կոստան Զարեան: Անոնք իրենց ներկայութեամբ հմայքով ու ներդրումներով, ներշնչարանը հանդիսացան նոր գրողներու կազմաւորման, հայ-

Մեծ Եղեռնի 100րդ Տարեկիցի ոգեկոչման հանդիսութիւններ

ԽԱԶՔԱՐԻ ՔՕՂԱԶԵՐԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Հայոց Յեղասպանութեան 100րդ տարեկիցին առթիւ Հայ Աւետարանական Եղբայրներու եկեղեցին, Կլենտէյլի իր կեդրոնատեղիի շրջաբակին մէջ, հրապարակային համագործակցին միջոցառում մը կազմակերպած էր, նուիրուած նորահաստատ խաչքարի քոյակներուն:

Շաբաթ Ապրիլի 18ին, 2015 կայացած սոյն հանդիսութեան ներկայ էին Կլենտէյլի քաղաքապետ՝ Զարեհ Սինանեան, Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան ատենապետ՝ Գաբրիէլ Մոլոյեան, Ամերիկայի Հայ Աւետարանական ընկերակցութեան ներկայացուցիչ՝ Լեւոն Ֆիլիեան, ինչպէս նաեւ քաղաքային այլ անձնաւորութիւններ եւ հայ մամուլի խմբագիրներ:

«Եւ այս քարերը... չիշատակ պիտի ըլլան յաւիտեան» կարգախօսին ներքեւ խօսք առին Յակոբ Յովհաննիսեան, Վեր. Ճօ Մաթոսեան, քաղաքապետ Զարեհ Սինանեան, Արտաշէս Քասախեան, Վեր. Ճիմ Սմիթ, Լեւոն Ֆիլիեան, վեր. Տիգրան Շանթեան եւ ուրիշներ: Անոնք իրենց ելոյթներով պանծացուցին չիշատակը Օսմանեան թուրքերու կողմէ ցեղասպանութեան զոհ զացած մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն: Միաժամանակ կոչ ուղղեցին ճանչնալ ցեղասպանութեան փաստը եւ արդար հատուցում տալ պահանջատէր հայ ժողովուրդին:

Օրուան գեղարուեստական յայտագրի զարդը կը կազմէր «Հայաստան» լարային քառակող (գեղարուեստական ղեկավար՝ Արմէն Մանկասարեան: Այնուհետեւ ծափահարութեանց ներքոյ քոյակներուցաւ գեղակերտ խաչքարը: Յետոյ ներկաները մէկական սպիտակ վարդեր գետեղեցին խաչքարի պատուանդանին, որ խորհրդանշական կերպով ցոյց կու տայ ցեղասպանութեան անժամանցելիութիւնը:

ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ ՓԱՍՏԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ

Շաբաթ Ապրիլ 18, 2015 կէսօրէ ետք ժամը Յին խուռներամ բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ Փաստօրինա քաղաքի «Մէմորիալ Բարք» գրասրահին

մէջ վերջերս կառուցուած Մեծ Եղեռնի 100րդ տարեկիցին նուիրուած յուշարձանի քոյակներուն արարողութիւնը:

Տարբեր շրջաններէ եկած բազմութեան մէջ կը նշմարուէին Արեւմտեան Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի պատուիրակութիւնը գլխաւորութեամբ նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի Հայ Աւետ. համայնքի ներկայացուցիչները գլխաւորութեամբ՝ Վեր. Ճօ Մաթոսեանի, Հայ Կաթողիկէ համայնքի առաջնորդ՝ Արհ. Միքայէլ Եպս. Մուրատեան, Փաստօրինայի քաղաքապետ՝ Պիլ Պոկարտ, Լոս Անճելըսի վերակացու՝ Մայք Անթոնովիչ, Ս.Գ.Հ.Կ.ի ատենապետ՝ Գաբրիէլ Մոլոյեան, Ռ.Ա.Կ-ի եւ Հ.Յ.Դ-ի ղեկավարներ, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Հանդիսութիւնն սկսաւ դրօշակի եւ ամերիկեան ուխտի արարողութիւններով, ինչպէս նաեւ ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգերու ունկնդրութեամբ:

Օրուան գլխաւոր բանախօսներն էին՝ Ռ. Համբարեան եւ յուշարձանի յանձնախումբի անդամ Լեւոն Ֆիլիեան: Անոնք իրենց ելոյթներով դատապարտեցին 20րդ դարու առաջին ցեղասպանութեան հեղինակ օսմանեան կառավարութիւնն ու երիտթուրքերը միաժամանակ պահանջելով ցեղասպանութեան ճանաչում եւ հատուցում իրաւատէր հայ ժողովուրդին:

Հայ ժողովուրդի արդար դատին ի նպաստ գորակցական խօսքերով հանդէս եկան նաեւ Փաստօրինայի քաղաքապետ՝ Պիլ Պոկարտ եւ Լոս Անճելըսի վերակացու՝ Մայք Անթոնովիչ:

Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին ՀԲԸՄի Վաչէ Թամար Մանուկեան, ինչպէս նաեւ Յովսէփեան եւ Սահակ Մեսրոպ Վարժարաններու աշակերտները:

Այնուհետեւ կղերականներէ եւ հոգաբարձուներէ բաղկացած թափօրը առաջնորդութեամբ Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեանի ուղղուեցաւ դէպի յուշարձան, ուր տեղի ունեցաւ անոր քոյակներուն, որոտընդոտ ծափերու ներքեւ:

Միջոցառումն իր աւարտին հասաւ բոլոր կողմէ միաբերան երգուած «Հայր Մեր»ով:

Հախումբը, ղեկավարութեամբ՝ մայիսթրօ Կրէյկ Սարոյեանի, ընկերակցութեամբ դաշնակահար Վարդուհի Պաղտասարեան ու տուրուկահար Ռուբէն Յարութեանի: Իր փակման խօսքին մէջ պահանջատիրական պերճախօս ելոյթով մը հանդէս եկաւ Արհիպապատիւ Միքայէլ Եպս. Մուրատեան, միաժամանակ դրուատելով Ֆրանսիսկոս Պապի հայանպաստ պատմական ելոյթը:



ՆԵՐԿԱՆ ԱՆՑԵԱԼԻՆ ՄԵՉ 2 x 1,500,000 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Ինչպես որ Հայկական Եղեռնը հիմք հանդիսացաւ Ռաֆայէլ Լեմբինին, յօրինելու «Ցեղասպանութիւն» (Genocide) եզրը, զարմանալի պէտք չէ ըլլայ, որ մեր եւ այլ ազգերու պատմութիւնը հիմք հանդիսացած ըլլար Ժորժ Սանթալանային, արտաբերելու իր նշանաւոր խօսքը. «Անոնք որոնք չեն յիշեր անցեալը, դատապարտուած են կրկնելու զանիկա»: Մանաւանդ, դարերու վրայ երկարող մեր պատմութիւնը եւ մեր ձախաւերութիւնը դասեր քաղելու անկէ: Մեր անցած ուղիի պատմութեան վերջիշու մը կարծէք միայն կը ծառայէ ուրախ ժամերու մակերեսային հպարտանքի արտայայտութեանց եւ տխուր ժամերու սիրտիանքի կամ միտքարական խօսքերու: Ոչ ուրախութիւնը եւ ոչ ալ տխրութիւնը հիմնաւորուած են, այլ կը ծառայեն պարզապէս «հելլ յասօրն ալ անցընենք»ի, անիմաստ ժամերուն մեծ-մեծ «Չարդելու» եւ կամ վատ ժամերուն մեր բախտը լալու հոգեվիճակներուն: Բայց ոչ՝ դասեր քաղելու անկէ եւ ծառայեցնելու մեր յառաջդիմութեան:

Եղեռնի հարիւրամեակի սեմին, վերելի խորհրդածութիւնն է, որ կը գերիշխէ մեր մտածումներուն վրայ: Չենք կրնար մեր մտքէն վանել հետեւեալ պատկերները.

-Հարիւրամեակ մը առաջ ենթարկուեցանք Չարդի եւ բռնի տեղահանուեցանք մեր պապենական հողերէն, զոհ տալով 1,500,000 նահատակներ: Ներկայիս, ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետութեան հիմնումէն ի վեր, ԿԱՄՈՎԻՆ կ'արտագաղթենք մեզի մնացած մեր պապենական հողերու պատանուիկէն, 1,500,000 պանդուխտ տալով աշխարհին: Այս ազգաբանդ արտագաղթի հաւանական առեւտրի հետեւանքներու մասին մտածումն իսկ սոսկումով պէտք է լեցնէ բոլորիս սրտերը:

-Հարիւրամեակ մը առաջ նահատակուեցանք, որովհետեւ փոքրամասնութիւն դարձած էինք մեր իսկ հողերուն վրայ: Ներկայիս, հայրենի հողի վրայ մեր թուաքանակի նուազումով, խոցելի կը դարձնենք մենք զմեզ նորանոր վտանգներու առջեւ:

-Հարիւրամեակ մը առաջ Պոլսոյ, ինչպէս նաեւ Թիֆլիսի եւ Պաքուի հայ մեծահարուստները կոչու ու խուլ մնացին զաւաճելու հայրենի իրավիճակին, անոնց պարտազան կանչերուն եւ այդ բոլորէն բխող վերահաս վտանգներուն, գերադասելով կրնուած մնալ միայն իրենց անհատական շահերու հետապնդմամբ: Ներկայիս, Հայաստանի մեծահարուստները չբաւականանալով կողոպտել երկրի հարստութիւնը, զայն դուրս կը հանեն երկրէն (\$6.5 միլիարդ անցած 10 տարիներուն միայն), խուլ մնալով գիւղերու եւ սահմանային շրջաններու թշուառ ժողովուրդին եւ նոյնիսկ Հայաստանի երկրորդ մեծագոյն քաղաք՝ Գիւմրիի բնակիչներու արդարացի կանչերուն եւ այդ բոլորէն բխող վերահաս վտանգներուն:

-Հարիւրամեակ մը առաջ չարաչար պարտուեցանք ու նահատակուեցանք, որովհետեւ մեզի պակսեցաւ հաւաքական ուժի եւ ըստ այնմ համագործակցելու գիտակցութիւնն ու անհրաժեշտու-

թիւնը: Ներկայիս դժբախտաբար ոչինչ փոխուած է անցեալի մտայնութիւնէն:

-Հարիւրամեակ մը առաջ նահատակուեցանք հոն, ուր հլու հնահանգներուն կամ սին խոստումներուն, բայց փրկուեցանք հոն, ուր դիմադրեցինք եւ ապաւինեցանք մեր ուժերուն: Ներկայիս, Արցախեան ազատամարտի հիմնալի նուաճումէն ետք, կը դժուարանանք ամրակայել մեր յաղթանակը՝ չէնցնելով ազատագրուած տարածքները եւ վնաս կը հասցնենք մեր մարտական հոգեվիճակին՝ գնեւրալ-զօրավարներու դէպի պիզնես-մէն-ձեռնարկատէրերու վերափոխումով:

-Հարիւրամեակ մը առաջ, օտար պետութեանց կողմէ մէջտեղ նետուած Հայկական Բարենորոգումներու ծրագիրը փոշի ցանեց մեր աչքերուն ու շահագործուեցաւ Օսմանցիէն օգուտներ կորցելու համար: Ներկայի Հայկական Ցեղասպանութեան ճանաչման արշաւը որքանով կը տարբերի անցեալի օրինակէն: Ինչո՞ւ համար մեր ուժերը կը սպառենք օտարէն ճանաչում աղերսելու եւ արդէն իսկ ընդունուածը վերընդունիլ տալու, փոխանակ մեր ինքնակազմակերպութեան ու ինքնահզօրացման նպատակով:

-Հարիւրամեակ մը առաջ, երբ արմատախիլ եղանք մեր պապենական հողերէն, մեր մնացորդացը մեծամասնութեամբ ապաստան գտաւ Հայաստանի սահմանամերձ արաբական աշխարհին մէջ, ուր վերակազմաւորուեցաւ եւ ինքնագիտակից ու հայրենասէր սերունդներ տուաւ: Ներկայիս, կը հեռանանք նաեւ արաբական աշխարհի եւ 400-ամեայ Պարսկական մեր գաղութներէն: Աշխարհի մեծ թէ փոքր պետութեանց կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչումը մը պիտի կասեցնէ՞ այդ աղետաբեր տեղաշարժը: Ո՛չ: Ուրեմն ինչո՞ւ առաջնահերթութիւնը կու տանք ճանաչման գործընթացին, փոխանակ Հայաստանի սահմանամերձ գաղութներու հայաթափման լուծումներ փնտռելու:

-Հարիւրամեակ մը առաջ, Կոմիտաս Վարդապետ հետեւեալ խօսքերով կը նկարագրէր մեր ազգին վիճակը. «...Հոտն անհովիւ՝ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներն յախուռն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չկայ: Աւերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մէկ կողմէն, անտարբերութիւն, օտարամոլութիւն ու ցեխոտ սրտեր միւս կողմէն: Փառասիրութիւն, փութկոտութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտօնն զգեցած է իբր հանդերձ, յոր մերկութիւն մտաց ծածկի ի միամիտ աչաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կեանքը դիակնացած...: Ո՞ւր է մեր խոհական խորենացին. թող ելլէ՛ արիւնքամ հողու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց պաշտօնին փարած էին անձնահեղ-ձութեամբ, իսկ մենք կը յափշտակենք գործն՝ ընչաքաղցութեամբ: Միտս փլած է:» Մեր ազգի պար-

զած ներկայի պատկերը որքանով կը տարբերի անմահն Կոմիտասի պարզած պատկերէն:

-Հարիւրամեակ մը առաջ, 1912-ին, Պոլսոյ մէջ հայ գրի եւ տպագրութեան 400-ամեակի տօնակատարութեան առթիւ, Գրիգոր Զոհրապ կը գրէր. «Եթէ քննենք ազգի մը ինչպիսի պատճառները, պիտի տեսնենք, թէ այն ազգը որ եսականութեամբ օժտուած է, որքան յոյս եւ կենսունակութիւն ալ որ ունենայ իր մէջ, նորէն կ'իյնայ այդ ազգը: Իսկ երբ եսականութեան տեղ ալլասիրութիւն եւ ազգասիրութիւն տիրէ, որքան ալ յուսահատ ըլլայ այդ ազգը, նորէն չմեռնիր: Մեզի պէս պղտիկ ազգերը իրենց վերականգնումի յոյսերը իրենց հոգիին, իրենց սրտին եւ այսօրուան պէս իրենց իշխատակներուն մէջ կը կրեն»:

Դժբախտաբար նոյնիսկ Եղեռնը չկրցաւ չբացնել կամ մեղմել հայ անհատի նկարագրի շեշտուած եսականութիւնը կամ եսասիրութիւնը: Մեզ նման Եղեռն ճաշակած հրեայ ազգը, ազգասիրական գաղափարներէ տոչորուած, յաջողեցաւ իր անկախութեան նուաճման առաջին 20 տարիներուն երկրի բնակչութեան թիւը ԲԱՌԱՊԱՏԿԵԼ, մինչ մենք նոյն միջոցին ԿԻՍՈՎ դատարկեցինք մեր երկիրը: Եթէ Զոհրապի ցանկութեամբ, մեր մէջ թիչ մը ազգասիրութիւն տիրէր, փոխանակ իրարու վրայ կոխկրտելով ամէն մէկ հայ միայն ինքզինք բարձրացնել փորձելու, իրարու հետ համագործակցելով կրնայինք բոլորիս ալ վիճակը բարելաւել: Ասիկա ցոյց կու տայ, որ մենք դժբախտաբար անընդունակ եղած ենք մեր պատմութիւնէն դասեր քաղելու: Եթէ ընդունակ ըլլայինք, ապա խորենացի «Ողբ»ը բաւարար պիտի ըլլար մեր «փոքր ածու»ն մեծցնելու եւ մեզ հասցնելու շատ աւելի տիրական դիրքերու: Եթէ ընդունակ ըլլայինք, ապա հաւատացող պիտի ըլլայինք ժողովրդավարական սկզբունքներու յարգման, մարդկային առաքիչ-նութեանց դրսեւորման, օրէնքի գերակայութեան գործադրման եւ տարրական իրաւունքներու պաշտպանութեան ու պիտի չ'ունենայինք այն խայտառակ իրավիճակը որ ներկայիս ունինք մանաւանդ Հայաստանէն ներս ու պիտի չ'ի հանդուրժէինք այն նուաստացումները որոնց ականատես կ'ըլլանք յաճախակիօրէն: Եթէ ընդունակ ըլլայինք, ապա փոխանակ երկրէն \$6.5 միլիարդ արտահոսքի արհեստաբանութեան, անկէ շատ աւելին կրնայինք ներմուծել Հայաստան, ամրակայելով մեր պետականութիւնը եւ արժանապատիւ կեանք ապահովելով անոր բնակչութեան: Չմոռնանք, որ աշխարհի ամենահարուստ միայն 5 հայերու ունեցումածքը կը գնահատուի աւելի քան \$20 միլիարդով:

Մտահոգիչ կը գտնենք այն հոգեվիճակը զոր կը բոլորէ մեր սերունդը՝ 60-ականներուն իր գիտակցական տարիքը բոլորած մեր սերունդը: Մենք դաստիարակուեցանք Եղեռնէն ետք հասակ առած որբերու եւ սփիւռքեան պայմաններու մէջ ծնած առաջին սերունդին կողմէ: Անոնք մեր մէջ հիմնաւորեցին իրենց կորսնցուցած հայրենիքին վերատիրանալու, Հայաստանը ազատ ու անկախ տեսնելու երազները, զանոնք դարձնելով մեր



աւօրեայ մտածումներուն կարեւոր մէկ մասը: Ու եկաւ այն օրը, երբ ականատես դարձանք Հայաստանի Գ Հանրապետութեան հռչակման, մեր երազի իրականացման: Ամէն մէկս, մեր կարողութեան սահմաններուն մէջ, խանդավառութեամբ եւ համոզուածութեամբ ընդառաջ գացինք մեր լուծման ներդրելու վերջապէս իրականութիւն դարձած մեր ազատ ու անկախ հայրենիքի հզօրացման: Դժբախտաբար շատ չանցած, մեր երազած պատկերացումները փուլ եկան բիրտ իրականութեան դէմ յանդիման եւ սկսանք հիասթափութիւն ապրիլ, ոչ միայն մենք սփիւռքահայերս, այլ մանաւանդ հայրենի ժողովուրդը, որ ինչպիսի ազգասիրական վեհ առաքիչութիւններէ զուրկ պատահապաշտ եսասէրներու անխիղճ լուծին տակ, սկսաւ հեռանալ իր պապենական հողէն:

Այո՛, մտահոգիչ է վաղ հասակին վեհ երազներով սնած ու հասուն հասակին այդ երազներուն աղճատման ականատես դարձած մեր սերունդի հոգեվիճակը: Սերունդ մը, որ լիցքաւորուեցաւ մեր 1,500,000 նահատակներու կտակով, բայց հիասթափուեցաւ 1,500,000 արտագաղթողներու բիրտ իրականութեան դէմ հանդիման: Սերունդ մը, որուն ուխտել տուին՝ «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարգայ նախատինք», բայց միթէ 1,500,000 կամովի արտագաղթն ալ չարիք չէ՞: Սերունդ մը, որ չհասցուցած լեցնել 1,500,000-ին թողած բացը, ականատես ու մասնակից դարձաւ նոր 1,500,000-ի նուազումին:

Ի՞նչ պիտի ըլլայ մեր պատասխանը մեր զաւակներու հարցումին թէ, ինչո՞ւ կը պնդէք որ օտար ափերու վրայ ծնածներս հայ ազգի ապագայով մտահոգուինք, երբ 1,500,000 հայ կ'արտագաղթէ իր հայրենիքէն:

Ի՞նչ պիտի ըլլայ մեր սերունդի աւանդը գալիք սերունդին, ի տես մեր ապրած հիասթափութեանց:

Մեր սերունդի քանի՞ տոկոսը պիտի յաջողի այս գորշութեան մէջ պահել իր յամառ լաւատեսութիւնը հայ ժողովուրդի պայծառ ապագայի նկատմամբ:

Շատ ծանր է այդ փոքր հատուածին վրայ ինկած պարտականութիւնը:

Ու թէեւ մենք կը մնանք համոզուած, որ միայն 3 տեսիլք ունեցող առաջնորդներու եւ անոնց երկտասնեակ մը աշակերտներուն շնորհիւ Երդ դարու ՈՍԿԵԴԱՐԸ կերտած մեր ազգը տակաւին ատակ է իր արգանդէն ծնելու նոր օրերու Ոսկեդարի կերտիչները, չենք կրնար չ'ափսոսալ, որ ինչո՞ւ համար անգամ մը եւս բաց կը թողուք մեր «փոքր ածու»ն մեծցնելու եւ հզօրացնելու առիթը:

ԷՐԴՈՂԱՆԸ ԴԱՐՉԱԲ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ ԼԱԻԱԳՈՅՆ ԶՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԱՐ ԶԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Վերջին տարիներին, երբ աշխարհապատերազմը հայերն սկսեցին ծրագրել Հայոց ցեղասպանության հարիւրամեակի ոգեկոչումը, նրանք երկու հիմնական մտահոգություն ունեին՝ ինչպիսի միջոցառումներ ձեռնարկել, որոնք առաւելագոյնս պատշաճ լինեն այս մեծաշուք աւիթով, եւ ինչպէ՞ս թաքցնել իրենց ծրագրերը թուրքական կառավարութիւնից, որպէսզի այն չկարողանայ խափանել կամ ձախողել դրանք:

Մենք չէինք իմանում, որ թուրք ղեկավարներն ի վերջոյ ակամայ դառնալու են մեր լաւագոյն «դաշնակիցները», եւ հարիւրամեակի ծրագրերը ձախողելու փոխարէն այնպիսի անհետեւ յայտարարութիւններ են անելու, որ ամբողջ աշխարհում պրոպագանդան Հայոց ցեղասպանութիւնը՝ գերազանցելով մեր բոլոր ակնկալիքները:

Որեւէ հոյիվուդեան սցենարիստ չէր կարող աւելի լաւ գործ անել, քան էրդողանը որպէս վարչապետ, իսկ այնուհետեւ՝ նախագահ՝ ապահովելով աշխարհում ամենամեծ հնարաւոր լսարանը 100-րդ տարելիցի ոգեկոչման համար:

Հարիւրամեակի տարեակզբից շատ առաջ էրդողանը պարարտ հող պատրաստեց իր տարօրինակ յայտարարութիւններով՝ փչացնելով իր եւ իր երկրի հեղինակութիւնը. նա յայտարարեց, որ մահմեդականները չաչտաբերել են Ամերիկան Կոլումբոսից առաջ. որ մահմեդականների համար անհնար էր ցեղասպանութիւն գործելը. եւ սասց հեռուստահաղորդավար Չառլի Ռոզին, թէ քանի որ Ստամբուլում դեռ հայեր կան, ապա հնարաւոր չէր, որ ցեղասպանութիւն եղած լինէր:

Այնուհետեւ էրդողանը փակեց «Յուլթուբն» ու «Թվիթերը», քանի որ որոշ բաներ դրանց բովանդակութիւնից իրեն դուր չէին գալիս. ձեռքաւարեց մի պատանի ուսանողի շարագրութիւն գրելու համար, որը չէր արժանացել ժամանակակից սուլթանի հաւանութեանը. բանտարկեց լրագրողներին եւ ծաղրանկարիչներին իր քաղաքականութիւնը քննադատելու համար. հետապնդեց մահմեդականների կրօնական առաջնորդ Ֆեթուլլահ Գիւլինի հետեւորդներին եւ բարձրաստիճան գինուորականներին՝ Նորին մեծութեան դէմ նրանց կազմակերպած դաւադրութեան պատրուակով. հրամայեց կրակել խաղաղ ցուցարարների վրայ Ստամբուլի Գեզի զբօսայգում. եւ գաղտնալուծած հեռախօսազրոյցում յանձնարարեց որդուն, թէ ինչպէս կոծկել տասնեակ միլիոնաւոր կանխիկ տոյարները...

էրդողանն իր կոշտ յայտարարութիւններով եւ կոպիտ պոթկուծներով կարողացաւ թշնամացնել բազմաթիւ երկրների ղեկավարներին, որոնց հետ գործակցում էր, ներառեալ Միացեալ Նահանգները, Ֆրանսիան, Գերմանիան, Իրանը, Իրաքը, Եգիպտոսը, Յունաստանը, Ռուսաստանը եւ Միւրիան: Ըստ հուլիան, նա իր «զրօ խնդիրներ հարեւանների հետ» արտաքին քաղաքականութիւնը վերածեց՝ «զրօ հարեւանների՝ առանց խնդիրների»:

Այս տարեկսգբին՝ Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ, էրդողանը հասաւ իր գոր-

ծունէութեան գագաթնակէտին: Նա «փայլուն» միտք յղացաւ Գալլիպոլիի տօնակատարութեան օրը տեղափոխել Ապրիլի 24-ին, եւ աւելի քան 100 երկրների ղեկավարների հրաւիրելով Թուրքիա՝ համայն աշխարհի ուշադրութիւնը շեղել այդ նոյն օրը Երեւանում կայանալիք Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման արարողութիւններից: Թուրքիայի նախագահը փորձեց վերաշարադրել պատմութիւնը՝ մեղադրելով Հայաստանին Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի ամսաթիւը Ապրիլի 24-ին փոխելու համար...

Նման մանկամիտ խորամանկութիւնները չէին կարող վրիպել միջազգային հանրութեան ուշադրութիւնից: էրդողանի կեղտոտ հնարքները բացայայտող բազում յօդուածներ գրուեցին: Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման արարողութիւնները ձախողելու փոխարէն թուրք ղեկավարներն յաջողեցին պրոպագանդել Ցեղասպանութեան հարիւրամեակը՝ նախքան հայերի կողմից որեւէ միջոցառում կազմակերպելը...

Իսկ յետոյ եկաւ Հոռոմի Ֆրանցիսկոս պապի Ապրիլի 12-ի յիշարժան քարոզը՝ մեղադրելով Թուրքիային հայ ժողովրդի դէմ «20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը» գործելու համար... Ի պատասխան՝ էրդողանը լեռ կանչեց Թուրքիայի ղեկավարին Վատիկանից, իսկ յետոյ, սովորաբար իր սառը դատող վարչապետ Դաւութօղլուի եւ թուրք չինովիկներին ողջ անձնակազմի հետ միասին սկսեց վիրաւորել Հոռոմի պապին, Կաթոլիկ եկեղեցուն, եւ նոյնիսկ Պապի ծննդավայր Արգենտինային... Այսպիսով, մի քանի օրուայ ընթացքում Թուրքիայի ղեկավարները կարողացան իրենց դէմ հանել աւելի քան մէկ միլիարդ կաթոլիկների ամբողջ աշխարհում:

էրդողանը գոռուացրեց Հոռոմի պապին, որ լրացուցիչ գործողութիւններ է ձեռնարկելու ընդդէմ Կաթոլիկ եկեղեցուն՝ նկատի ունենալով, որ կարող է Ստամբուլի հին յունական Սուրբ Սոֆիայի տաճարը վերածել մզկիթի: Եթէ նա գնայ նման ծայրայեղ քայլի, ապա Թուրքիայի դէմ կը հանի մնացած քրիստոնէայ աշխարհը:

Հոռոմի պապի պատմական քարոզից մի քանի օր յետոյ Եւրախորհրդարանը դարձեալ բանաձեւ ընդունեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման վերաբերեալ: Այդ ընթացքում, էրդողանը շարունակում էր իր հակաեւրոպական եւ հակաքրիստոնէական խիստ քննադատութիւնը՝ մեղադրելով եւրոպացիներին հակաթուրքական եւ հակախլամական կեցուածքի համար: Բնականաբար, եւրոպացիների մօտ հարց առաջացաւ, թէ ինչպէս կարող է նման խելագար ղեկավար երբեւէ միանալ եւրոպական ընտանիքին...

Հազարաւոր թերթեր, հեռուստաընկերութիւններ եւ կայքէջեր հաղորդում էին թուրք ղեկավարների կատաղի արձագանքի մասին եւ քննադատում նրանց կողմից Հայոց ցեղասպանութեան ժխտումը: Աշխարհի ուշադրութիւնը սեւեռուել էր հայերի վրայ՝ Քարդաշեանների Հայաստան կատարած այցի, Հոռոմի պապի ուշադրաւարողի եւ Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ Եւրախորհրդարանի բանաձեւի լայնօրէն լուսաբանման շնորհիւ: Հայոց ցեղաս-

ԿԵՑՑԷ՛ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՆ ՄԵՐՈՒ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Դէպի մահ քայլել պարտադրեցին մեզի, բայց մեր ազգը մահի աչքին ուղիղ նայելով քայլեց անոր մէջէն, տակէն ու վրայէն եւ աւերի ու արիւնի մահաստաններէն դուրս գալով ոտքի ելաւ ու դէպի կեանք նայելով բռնեց կեանքի ճամբան:

Մեռած ազգի մը նմոյշ կամ օրինակ ուզեցին ցուցադրել մեզի իրենց թանգարանին մէջ, սակայն մեր ազգը հերոսամարտերով իր գոյութեան հայրենիքը հիմնեց եւ աշխարհի ամէն տեղ ցուցասրահներ բացաւ ցոյց տալու իր անմահութիւնն ու գոյութեան փաստը եւ Ուիլեամ Սարոյեանի բառերով "Փոքր Հայաստան" ներ ստեղծեց:

Անպատիժ մնալ փորձեցին մեր դահիճները փախչելով ու պահուրտելով աշխարհի տարբեր անկիւններուն մէջ, սակայն մեր վրիժառու ազգը հարիւր քառասունք եւանոնց հետքը գտնելով մէկ առ մէկ շանսատակ ըրաւ գանոնք ձեռամբ իր հերոս գաւակներուն:

Հիմա, հարիւր տարի ետք, հարիւր տարի սգալէ, յիշելէ եւ յուշարձաններ կանգնեցնելէ ետք, անվարան կարելի է ըսել, կեցցէ՛ մեր ազգային ներկան:

Մեր ներկան իր ազատ ու անկախ հայրենիքով եւ Արցախ ազատագրող արի բանակով:

Մեր ներկան, որու մէջ աշխարհին կը ներկայանանք մեր համահայկական հռչակագրով որպէս մէկ սիրտ ու մէկ հոգի, որպէս մեր նահատակներու արեան տէր ու պահանջատէր:

Մեր ներկան, ուր այլեւս չկան երկու հակադիր ազգային եկեղեցիներ եւ չկան հարիւրամեայ քիւնախնդրութեամբ գործող կուսակցութիւններ ու չկան իրարմէ հեռու կեցող առաքելական կամ կաթոլիկէ կամ աւետարանչական եկեղեցիներ ու համայնքներ այլ կան քայլ - քայլի իրար հետ քալող եւ իրար մօտ կեցող համայնքապետեր ու կուսակցապետեր, որոնք իրար հանդէպ յարգանք կը տածեն եւ իրենց նահատակաց դատին համար ամէնքն ալ իրար չեն խոչընդոտեր եւ ամէնքը առանց բացառութեան, այդ դատի յառաջադէմ գինուոր դարձած են:

Ապրիլեան եղեռնի այս Ապրիլ ամսուն, երբ մեր նահատակներու հոգիներուն համար կ'ահնկալուի տխրիլ ու յուզուիլ, վստահ եմ բոլորս ալ ուրախութեան արցունքներով դիտեցինք Վատիկանի մայր տաճարին մէջ ներկայութիւնը մեր պետական կազմին եւ կաթոլիկոսներուն ու համայնքապետերուն, որոնք քով-քովի կեցած լսեցին արդի ժամանակներու ամենասուրբ

Պապին կոչը մարդկութեան, որ այլեւս կարելի չէ ուրանալ հայկական ցեղասպանութիւնը: Մարդասիրական եզակի յատկութիւններով օժտուած օրհնեալ Ֆրանցիսկոս Պապը Վատիկանի իր մաքրամաքուր նկարագրի վեհանձնութեամբ հայ ցաւի ճշմարտութիւնը փոխանցելով մարդկութեան, օրուայ մը համար հայութիւնը ամբողջ կաթոլիկ դարձուց իր անձին հանդէպ մեր ունեցած սիրոյ եւ երախտագիտութեան զգացումով:

Այո՛, կեցցէ՛ մեր ազգային ներկան (թէեւ խեղճ է մեր տնտեսական ներկան) որու մէջ ամէն տեղ քայլարշաւներով կը քայլէ մեր ժողովուրդը, մեծով ու պոտիկով, մանաւանդ հայ դատի պահանջատէր երիտասարդներով, աշխարհին ըսելու, թէ՛ կը յիշեմ ու կը պահանջեմ մինչեւ որ յարգանք բերեմ իմ նահատակներու յիշատակին եւ ճանաչում ու արդարութիւն անոնց անտեսուած դատին:

Կեցցէ՛ն միջազգային համբաւ շահած հռչակաւոր հայերը, որոնք որեւէ ժամանակէ աւելի հայ կը զգան եւ իրենց համբաւը ի սպաս կը դնեն տարածելու մեր ձայնը եւ պահանջքը. եւ կեցցէ՛ վերանորոգ գեղեցկութիւնը մեր ժողովուրդի աղջիկներուն եւ կանանց որ գողցուած էր մեզմէ... աքսորի եւ տարագրութեան ճամբաներուն վրայ:

Յառաջիկայ Ապրիլ 24-ին, Միծեռնակաբերդի յուշահամալիրը լեցնող մեր ժողովուրդը եւ անոր բարեկամ աշխարհի տարբեր երկիրներու ներկայացուցիչները պիտի քայլեն դանդաղ քայլերով դէպի ամառ կրակը, որպէսզի հոն դնեն ծաղիկներ ու մեխակներ եւ յարգեն յիշատակը մեր նահատակներուն: Ամէն շարքերէն առաջ պիտի քայլէ հայ բանակի գինուորը ծաղկեպսակի ձեռին եւ հիանալի գինուորական քայլերով առաջին անգամ ինք պիտի հասնի այդ սուրբ կամարներուն գետեղելու համար ծաղկեպսակը: Հալալ է իրեն այդ պատիւը: Անոր քայլերուն հետ պիտի քայլեն հոգիները անցեալի եւ ներկայի մեր նահատակ ֆէտայիներուն ու բանակայիներուն, որոնք մեռան որպէսզի հայը ունենար հող ու հայրենիք այդ յուշաբերդը կանգնելու եւ իր անթաղ նահատակներուն հայրենի հանգստավայր մը տալու:

Հարիւր տարի սգացինք, յիշեցինք եւ արդարութիւն պահանջեցինք մեր նահատակներուն համար: Յաջորդ տարիները յոյսով ենք, որ պիտի ըլլան մեզ լսելու, յարգելու եւ հաշուի առնելու տարիներ:

Ծախսէին եւ 100 փիար ընկերութիւն վարձէին...

Թարգմանութիւնը՝ Ռուզաննա Աւագեանի

պանութեան 100-րդ տարելիցի նախօրէին հայերը չէին կարող հասնել նման լայն հրապարակայնութեան, եթէ նոյնիսկ մէկ միլիարդ տոլար



ԻՆՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՋԷ ՊԱՏԱԲԱՆՆԵՐՈՒ ՔՆՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՅԱԿՈՒ ՏԵՐԵԱՆ

Անցնող մօտ 9 տարիներէ, Հայոց Յեղասպանութիւնը ժխտող թուրք դիւանագիտութեան «Գիւտը» պատմական հարցերը պատմաբաններուն ձգելու առաջարկն է, որ յաճախ կը լսուի պետական բարձրաստիճան այն պաշտօնեաներու բերնէն, որոնք երգուած են հաւատարիմ մնալ իրենց յօրինած սուտերուն ու կ'աշխատին ամբողջ աշխարհին ալ պարտադրել որ ընդունին այս սուտերը, որպէս բացարձակ ճշմարտութիւն:

Մարտ 18-ին նման կոչ մը ըրած է դարձեալ թուրքիոյ նախագահ Թայյիպ Էրտողան, ուր չիշեղէ ետք թէ «պատերազմի տարիներուն Անատոլիոյ հայերը հազարաւոր մահացածներու վնաս հասցուցած են», «որոնց փաստաթուղթերը ունին» եւ «որոնց համար յայտնաբերուած հազար շատ քան ունին», սակայն իրենք «այդ բոլորը որպէս քաղաքականութեան գործիք չեն գործածեր», այլ պարկեշտօրէն կ'ըսեն՝ «մեր արխիւները բաց են», «բոլոր փաստաթուղթերը հոս են», «դուք ալ բացէք ձեր արխիւները», «պատմագէտներ, իրաւագէտներ պաշտօնի կոչենք, թող անոնք քննեն եւ որոշեն իրականութիւնը»:

Այս բոլորէն ետք առանց հայելիի մէջ նայելով ինքզինք տեսնելու, հեզնական արտայայտութեամբ մը կ'ըսէ, «բոլոր երկիրներու մէջ մէկ առ մէկ պատելով, բոլորին մէջ ալ դրամ խաղցնելով, բարոյականէ դուրս արարքներ գործադրելով, թուրքիոյ դէմ որոշումներ առնել տալով ոչ մէկ տեղ չէք կրնար հասնիլ»:

Եթէ ուշադրութեամբ կարդանք այս «չակերտաւոր» պարբերութիւնը, պիտի տեսնենք որ ըսուածը որքան բառացիօրէն շիտակ եւ անառարկելի կերպով կը համապատասխանէ իրենց՝ այսինքն թրքական գործելակերպին, ուր բոլոր այն երկիրներու մէջ ուր որոշումներ կ'առնուին հայոց ցեղասպանութիւնը հաստատող, մէկ առ մէկ պատելով, բոլորին մէջ ալ դրամ խաղցնելով, բարոյականէ դուրս արարքներ գործադրելով, Եգիպտոս եւ այլուր հայկական արխիւներն ու փաստաթուղթերը փչացնել տալով, պատկան երկիրներու հետ մերթ դիւանագիտական յարաբերութիւնները խզելու, յանգերգով եւ մերթ նիւթական մեծ առեւտուրներու համաձայնութիւնները ջնջելու սպառնալիքներով եւ մէկ խօսքով իրենց պետական համակ ուժի քաղաքականութիւնը ի գործ դնելով, կ'աշխատին վիժեցնել ցեղասպանութեան ի նպաստ իւրաքանչիւր որոշում ու ջանք կը թափեն իրենց «բարոյականէ դուրս» եւ անմարդկային գործելաոճով «տեղ հասնիլ»:

Խորքին մէջ սակայն այդ բոլոր խորհրդարանները մէկ առ մէկ կարենալ համոզելու եւ իրենց տեսակէտին յարմարցնելու աշխատանքները, թէ բարոյական եւ թէ նիւթական տեսակէտէ իրենց վրայ շատ ծանր կշռելէն բացի, յաջողութեան որոշ յոյս մըն ալ չեն ներշնչեր:

Ահա թէ ինչու կ'աշխատին պատմաբաններու քննարկման տանիլ հարցը, ուր շատ աւելի դիւրին պիտի ըլլայ «դրամ խաղցնելով» գրաւել անհատ պատմաբանները, քան ամբողջ երկիրներու խորհր-

դարանները, ուր երբեմն պիտի հանդիպին նաեւ բարոյական սկզբունքի տէր ու պարկեշտ երեսփոխաններուն, որոնք իրենց արժանապատուութիւնը դրամով չեն վաճառեր»:

Ահա պատճառը որ համակ թուրք կառավարութիւնը ոգի ի բռին լծուած է ցեղասպանութեան հարցը փոխադրել պատմաբաններու քննարկման: Եթէ կարելի ըլլայ այս դաւադրութեան մէջ ներքաշել հայերուն, այդ օր վստահաբար թաշկինակ ձեռք առած պիտի պարեն իրենց նպատակին հասած ըլլալու հրճուանքով:

Սակայն տեսնենք թէ ինչ արդիւնք կ'ակնկալեն պատմաբաններու քննարկումէն:

Գիտենք որ իրենք արդէն իսկ որոշած եւ վճռած են արդիւնքը:

Քանի անգամներ լսուած են էրտողանի, Տալուրդուլուի, ձեմիլ Չիչէքի, Եուսուֆ Հալլաօղլուի եւ նմաններու բերնէն, իրենց վճռական արտայայտութիւնները թէ «իրենք ամենեւին ցեղասպանութիւն չեն գործած» թէ «իրենց անցեալի պատմութիւնը եղած է միշտ մաքուր», թէ «իրենք պատճառ մը չունին երբեք իրենց անցեալին ամչնալու», թէ «իրենց ճակատը միշտ բաց եղած է», թէ «այս «սէօգտէ» ցեղասպանութիւն ըսուած հայկական պնդումները բոլորովին սուտ են» եւ այլն:

Երբ այս է թուրք պետական այրերուն վճռական որոշումը, ալ ինչ կը մնայ պատմաբաններուն քննարկելու...: Երբ իրենք արդէն իսկ քննարկած ու որոշած են ամէն բան, դիւրաքանցելով նաեւ պատմաբաններուն գործը... որոնց կը մնայ առանց յղուածութեան վաւերացնել միայն իրենց (թրքական տեսակէտի) որոշումը... ու վերջ...:

Էրտողանի երկրորդ առարկութիւնն ալ այն է, թէ խորհրդարաններ ու անհատ քաղաքական գործիչներ պէտք չէ որոշեն թէ ցեղասպանութիւն եղած է, այլ պատմաբանները միայն պէտք է զբաղին այդ հարցով:

Սակայն այսպիսի առարկութիւն ընող էրտողան ինչպէս կը համարձակի թէ ինք եւ թէ իր խորհրդարանը վճիռ արձակել եւ ըսել թէ «ցեղասպանութիւն չէ եղած, սուտ է»: Միթէ ինքն ալ քաղաքական գործիչ մը չէ: Միթէ իր խորհրդարանն ալ խորհրդարան մը չէ: Միթէ իրենք բացառիկ առանձնաշնորհում ունեցող խորհրդարան եւ քաղաքական գործիչ են, կարենալ որոշումներ արձակելու...:

Ու այսպէս խօսքով ու գործով ինքզինք հակասող էրտողան իր ամբողջ ճարպիկութիւններով կ'իյնայ իր իսկ փորած փոսին մէջ:

Տակաւին 2009ին էր, ուր թուրք պատմութեան կաճառի նախորդ նախագահ Եուսուֆ Հալլաօղլուն, խօսելով «Անգարայի ի ձեռին ունեցած մէկ միլիոն փաստաթուղթերուն» վրայ, կ'առաջարկէ պատմաբաններուն յանձնել ցեղասպանութեան հարցին քննարկումը, որպէսզի... «ցեղասպանութեան ժապաւէնը դարձեալ ծայրէն սկսի...» ուր երբ պատմաբաններու յանձնարումը չկարենայ յստակ կերպով փաստել թէ ցեղասպանութիւն կատարուած է, այն առնել հայկական պնդումները ամբողջովին աղբանոց պիտի նետուին...:

Սակայն այսպէս խօսած պա-

հուն իսկ ներքին վախ մը կ'անհագատացնէր զինք, քանի որ նոյն ատեն ան կը զգուշացնէր պետութիւնը, որպէսզի «յանձնախուբ մի անդամակցութեան չհրաւիրուին այնպիսի պատմաբաններ, որոնք նախապաշարուած մարդիկ եղած ըլլան»: Այսինքն անզգուշութեամբ թրքական տեսակէտին հակառակ եղող պատմաբաններ չհրաւիրուին յանկարծ» եւ կամ կարծրատիպ անհատներ, որոնք կարելի չըլլայ գրաւել «դրամ խաղցնելով» քանի որ այդ պարագային կրնայ ստացուիլ ճիշդ հակառակը եւ «թրքական պնդումները ամբողջութեամբ աղբանոց կը նետուին»:

Այդ վախը չէ՞ր միթէ, որ նախագահ էրտողանին ըսել պիտի տար, որ «մենք արդէն որոշած ենք մեր պատմաբանները»:

Թուրքիա իր բոլոր մեքենայութիւնները ի գործ դրած է ցեղասպանութեան հարցը պատմաբաններու քննարկում կարենալ բերելու համար: Անոր մէջ է որ կը տեսնէ զինք օր ու զիշեր տանջող հայկական մղձաւանջին լուծումը:

Սակայն հայութիւնը այն աստիճան միամիտ է միթէ, որ արեւի լոյսին պէս տեսանելի ու անհերքելի ցեղասպանութեան իրականութիւնը կասկածի տակ առնէ եւ պատմաբաններուն հետ քննարկման անցնի, որպէսզի «ցեղասպանութեան ժապաւէնը դարձեալ ծայրէն սկսի...»:

Ահաւասիկ, թուրք մտաւորական, փաստաբան եւ գրող Ֆէթհի Չէթին յստակ կերպով կ'ըսէ, թէ «Հայկական Յեղասպանութիւնը փաստի չի կարօտիր»:

Այսօր Ա.Մ.Ն. ու 43 նահանգներ եւ աշխարհի 24 երկիրներ առաւել, օտար եւ հայ գրողներ ու պատմաբաններ վաւերացուցած են ցեղասպանութեան իրականութիւնը:

Ինչ ըսել մանաւանդ տասնեակներով թուրք պատմաբաններուն, գրողներուն, մտաւորականներուն, լրագրողներուն, քաղաքական գործիչներուն, որոնք արխիւներէն հանուած փաստաթուղթերով եւ ցեղասպանութեան կազմակերպիչներուն, մանաւանդ Թալլաթին գրած գաղտնի նամակներուն բացայայտումներով եւ ցեղասպանութիւնը ապրած հազարաւոր տարիքաւորներու վկայութիւններով ու փաստերով, ոչ միայն կը հաստատեն ու կը ընդունին ցեղասպանութեան իրականութիւնը, այլ կը քննադատեն ու կը մեղադրեն իրենց թուրք կառավարութիւնը, որ քաջութիւնն ու պարկեշտութիւնը չունի առերեսուելու իր պատմութեան հետ, ընդունելու իր գործած ոճիւրները, այլ կը շարունակէ իր ուրացումի ամօթալի քաղաքականութիւնը:

Տակաւին կը տեսնենք թրքական կազմակերպութիւններ ու կուսակցութիւններ, որոնք կոչ կ'ուղղեն իրենց կառավարութեան որ ընդունի ցեղասպանութիւնը եւ ներողութիւն ինդրէ հայերէն:

Դեռ թարմ է բոլորին մտքին մէջ թէ ինչպէս երկու տարի առաջ, հազարաւոր թուրքեր ներողութիւն



կը խղնրէին հայերէն իրենց դէմ գործադրուած ահաւոր բարբարոսութիւններուն ու բոլորին ծանօթ ցեղասպանութեան համար:

Թրքական կառավարութիւնը միշտ քննադատած է հայ թէ օտար բոլոր պատմաբանները, լրագրողները, գրողները, քաղաքական գործիչները, երկիրներու խորհրդարանները, որոնք կը դատապարտեն թուրքիան ցեղասպանութիւնը ուրանալուն համար, թշնամութիւն տեսնելով անոնց քննադատութիւններուն մէջ: Սակայն լուրջութիւն կը պահէ իր ազգակիցները եղող բոլոր այդ թուրք պատմաբաններուն ու գրողներուն նկատմամբ:

Հոս կարելի է միջանկեալ ըսել որ եթէ կասկածելի կէտ մը եղած ըլլար ցեղասպանութեան պնդումներուն մէջ, անպայմանօրէն պիտի գտնուէին որոշ հայեր որոնք կասկած պիտի յայտնէին ցեղասպանութեան վրայով: Սակայն կարելի է գտնել հայ մը որ կասկած չայտնած ըլլայ ցեղասպանութեան հանդէպ: Ո՛չ, քանի որ իւրաքանչիւր հայ իր մորթին վրան է որ կը զգայ անոր ցաւն ու հետեւանքները, տակաւին 100 տարի ետք իսկ:

Իսկ երբ կը տեսնենք հազարաւոր թուրքեր, պատմաբաններէն, գրողներէն լրագրողներէն մինչեւ ժողովրդային խաւերը, որոնք փաստաթուղթերով ու վկայութիւններով կը ներկայացնեն ցեղասպանութեան իրականութիւնը, ասկէ անդին տակաւին ինչպէս կարելի է ուրանալ, երբ արդէն իսկ թուրքերն են վկայողները...:

Սակայն ինչու էրտողան եւ իր արբանեակները լուռ են բոլոր այս «արդարամիտ» բաց իրենց համար «դաւաճան» նկատուող այդ թուրքերուն հանդէպ:

Լուռ են անոր համար որ նախ հակափաստարկներ չունին անոնց անհերքելի փաստերուն դիմաց, երկրորդ անոնց հետ լեզուակուռի մէջ մտնել չեն ուզեր, քանի որ այդ պիտի նշանակէր աւելի արծարծել հարցը եւ առիթ տալ որ աւելի խորանայ ցեղասպանութեան քննարկումները, որոնք աւելի պիտի բացայայտեն իրենց յանցագործութիւնները:

Որով լաւագոյն կերպը պիտի ըլլար լուրջութիւն պահել, այդ «դաւաճան» թուրքերուն հանդէպ, ու շարունակ ցեղասպանութեան հարցը պատմաբաններուն քննարկման տանելու իրենց պնդումը, ապաւինելով միայն ու միայն իրենց «Ուժի քաղաքականութեան»:

ՀՈԳԵԽՈՅԸ ԵՒ ՀԱԼԱԾԱԽՏԸ

Հայոց ցեղասպանութեան քաղաքական-քաղաքացիական Հոգեբանութեան Մէջ ՍԱԼԻ ԳԱՄՊԱՐԵԱՆ

«Անշուշտ չենք կրնար անցեալը փոխել եւ կատարուածները չկատարուած համարել... սակայն նուազագոյնը՝ կրնանք ցեղասպանութեան մեղքին յաջորդած եւ անոր շարունակութիւնը եղող ժխտումի եւ ուրացումի փաղափակութեան վերջ մը դնել...»

Պետութեան պատկան կառոյցներէն կը պահանջեմ, որ ազատագրուին ամօթի այս զգացումէն ... անոնցմէ կը պահանջեմ, որ մեզ բոլորս, իմա՝ այս երկրին փաղափակները ազատագրեն հայոց ցեղասպանութիւնը ուրացող պետութեան մը փաղափակները ըլլալու խիստ ամօթէն...

Համոզուած եմ, որ պետութիւնները Բայլ առնելու մոռցնեն ժողովուրդներն են: Ժողովուրդներն ու իրենց խիղճը՝ երաշխիք են ո՛չ միայն անցեալին հետ առերեսուելու, այլ այս հողերուն վրայ անգամ մըն ալ նման ամօթներ չապրելու...»:

Ֆէրիքի Զեքի

Հայ ժողովուրդի ցեղասպանութենէն 100 տարիներ ետք, իր հայրենիքէն արմատախիլ եղած կեդրոնագրակ, աշխարհացրիւ տարագիր հայը թէ՛ է իր խորքերուն մէջ ինչ որ չափով դեռ կը տառապի իր հաւաքական հոգեխոցի (Mass Trauma) ցաւէն, բայց ցեղասպան թուրքն ալ boomerang-ի անգիր օրէնքով՝ նոյնքան եւ աւելի կը տառապի տակաւ սաստկացող իր անբուժելի հալածախտէն (Persecution Complex):

Մանաւանդ վերջին 10-ամեակին, Թուրքիոյ թէ՛ քաղաքական թէ՛ քաղաքացիական ծանծաղուտին մէջ եռեւեփող հոգեբանական բարդոյթները եւ անոնց հետեւանքով ի յայտ եկած տագնապները, այսօր աւելի քան երբեք կուգան հաստատելու, որ ջուրն ալ կը բռնկի, որ իրօք «պումերանկ»ը յետադարձ պտոյտով կը հարուածէ նոյն ինքն՝ զայն նետողը եւ քողագերծելով երկրին քաղաքական գաղափարախօսութեան ոճրածին էութիւնը, ձեղքեր կը բանայ անձեռնմխելի համարող հարգելիքներու «թապուներու» պատուարին մէջ ու կը խոցէ թրքութեան մտացածին արժանապատուութեան Աքիլլեան կրունկը:

Տարագիր հայ ժողովուրդի հաւաքական հոգեխոցի եւ թուրքերու հալածախտի հոգեբանական ոլորտներու մէջ տեղի ունեցող երկկողմանի պատերազմը, մանաւանդ թուրքիոյ պարագային, պարբերաբար նոր երեւոյթներով կը սպառնայ երկրին քաղաքացիական բռնաբարուած գիտակցութեան կաշունտութեան, կը խախտէ մտային մթնոլորտի արդիւնքով ձեռք բերուած արհեստական հաւասարակշռութիւնը եւ ասպարէզ կը դառնայ աննախընթաց էութեամբ տեղի ունեցող պայքարներու:

Թուրքիոյ մէջ, Պումերանկի տրամաբանութեամբ տակաւ ձեւաւորուած իրատես մտաւորականներու փաղանգին տարած բազմաբնոյթ աշխատանքներուն շնորհիւ, մերթ արագընթաց, մերթ չամբաքայլ կը զրոյթով կը փշուրին կոշկոռ կապած մտակաղապարներ ու հարգելիքներ, որոնց կարեւորագոյնը նկատուած հայ ժողովուրդի ցեղասպանութեան «թապու»ին վերացումը՝ ըստ երկրին յառաջապահ մտաւորականութեան համոզումներուն, պէտք է դիտել եւ ընդունել որպէս անշրջանցելի, անփոխարինելի եւ հրամայական պահանջք երկրին իրական ժողովրդավարացման ճանապարհին, այս պատճառով մտաւորականութեան այս դասակարգը անտեղիտալի պայքար կը տանի հայատեացութեամբ առաջնորդող պետական պաշտօնական գաղափարախօսութեան դէմ, պարզապէս մեկնելով այն գիտակցութենէն, որ քաղաքական հար-

գէլքներ ունեցող պետութիւնը երբէք ժողովրդավար չի կրնար ըլլալ, հետեւաբար բոլորովին ալ պատահական չէ, որ հայ ժողովուրդի ցեղասպանութեան հարցի արծարծումը՝ կամայ թէ՛ ակամայ դառնար հայատեացութեան վրայ հիմնուած պետական պաշտօնական գաղափարախօսութեան դէմ պայքարելու առանցքային գործօն, գուցահեռաբար եւ՝ մեկնակէտ իր պատմական յիշողութեան վերականգնումին, քողագերծելու դար մը ամբողջ իր գիտակցութենէն հեռու մնացած սեփական պատմութեան արատաւոր ծալքերը, պատմութիւն մը, որ 1928-ին, Մուսթաֆա Քեմալի սահայէլական հնարքով՝ օսմաներէնը լատինատար թրքերէնով փոխարինուելէն ետք դադրած էր ընթացող դառնալէ ... դարձած էր անթեղուած անցեալ եւ յիշողութեան շիրմաքար, մինչ լատինատար պատմագրութեամբ Թուրքիան կը դառնար անցեալ չունեցող բացարձակ սկիզբ, ուր «թրքութեամբ» հարատեացուլու «Երանի» անոր, որ թուրք է ... » Քեմալական արտոյական պարտադրանքը, իր խորքերուն մէջ կը թաքցնէր ցեղասպան թուրքին հալածախտի անբուժելի հոգեբանութիւնը:

Եւ այսօր, լոկ 100 տարուան պատմութիւն մը ունենալու իրողութիւնը՝ խորապէս կը վիրաւորէ, կը գայթակղեցնէ ու կ'ըմբոստացնէ ոչ միայն թուրք իրապաշտ եւ ողջախոհ մտաւորականութիւնը, այլեւ անոր ազդեցութեան ոլորտին մէջ գտնուող հասարակական գիտակցութիւնը, կը խզուի 100 տարիներու պարտադիր լուծութիւնը, ցաւագին խարխափումներու մէջ տակաւ կը վերականգնուի բռնաբարուած յիշողութիւնը, կը բացայայտուի իրերայաջորդ վարչակարգերու ոճրածին գաղափարախօսութեան հենքը, այս բոլորին արդիւնքով Քեմալական հանրապետութեան առասպելը տակաւ կը կորսնցնէ «հերոսապատում»ի, «գերհզօրութեան», «անպարտելիութեան» եւ «գերազատութեան» իր հմայքն ու արժէքային հեղինակութիւնը...

Եւ ո՛չ միայն այդքան, պատերազմական ոճիրներով ձեռք բերուած կասկածելի յաղթանակներու թղթածրարները քննողներն ու տուժածներու յամառ հետապնդումները՝ այսօր հարցականի տակ դնելով թրքութեամբ հարատեացուլու բարոյական «տոկմա»ն, հոգեբարոյական լուրջ տագնապներ եւ պառակտում կը ստեղծեն Քեմալական հալածախտը ժառանգած երկրին քաղաքական-քաղաքացիական խճանկարային ոլորտներուն մէջ, ուր տեղի կ'ունենան տարականոն տեղաշարժեր:

- Պատմամշակութային ոլորտի մէջ, թուրք մասնագէտները

չյայտարարուած բայց տարողունակ զգայախաբուութեան հետեւանքով լուրջ տագնապ կ'ապրին:

- Թուրք պատմաբաններու միջեւ գոյացած պառակտումը եւս կը վկայէ, որ պետական պաշտօնական պատմութիւնը պաշտպանող պատմաբաններու սուտի եւ կեղծիքի վրայ հիմնուած թէգերու բացայայտումով, կասկածի տակ կը դրուի երկրին անթեղուած անցեալը եւ զայն վերատեսութեան ենթարկելու պահանջք կը դառնայ պետական համապատասխան կառոյցներուն ուղղուած լուրջ մարտահրաւէր, այս ուղղութեամբ Թուրք պատմագէտ Փրոֆ. Թանէր Աքչամի եւ իր նմաններուն կատարած գիտական ծանրակշիռ ուսումնասիրութիւնները կ'արժանանան մտաւորական առողջ շրջանակներու ուշադրութեան եւ հիմք ու ատարձ կը դառնան ակադեմիական չափանիշներով կատարող գիտական հետազոտութիւններու եւ վերլուծութիւններու, որոնցմէ օրինակի կարգով կ'առանձնացնենք Թ. Աքչամի եզրակացութիւններէն հետեւեալը՝

«Այսօր աւելի քան երբեք յստակ է, որ Թուրքիոյ Հանրապետութեան մայր կառոյցը հիմնուած է քրիստոնէական մշակոյթի վերացման եւ երկրին ոչ-մուսլուման հատուածի ինչքերու բռնազաւթումին եւ իւրացման վրայ...»

Պաշտօնական թուրքիոյ հայոց ցեղասպանութեան հանդէպ բռնած ժխտողական քաղաքականութեան դիրքը՝ մեծապէս կ'առնչուի հատուցման խնդիրին, որովհետեւ ճանաչումի պարագային Թուրքիան հարկադրաբար պիտի կանգնի հայերու վնասները հատուցելու անխուսափելի խնդիրին առջեւ...

Փոխհատուցումը կարելի չէ սահմանափակել լոկ ինչքերու վերադարձը ձեւաբանող օրինագիծերով պարզապէս, որովհետեւ ան աւելին է քան անոր նիւթական սահմանումը, միւս կողմէն անհնար է նաեւ հայերու նիւթական կորուստներու անչափելի տարողութեան հաշուեկշիռը պատկերացնել, սակայն ինչ ալ ըլլան հատուցումին չափն ու ձեւերը, անոնք կը մնան խորհրդանշական եւ երբեք չեն համապատասխաներ կորուստի իրական չափերուն...

Այս բոլորին ընդմէջէն կը յստականայ հայ ժողովուրդի ցեղասպանութիւնը «թապու» ի վերածելու բուն պատճառը, այլապէս պէտք է ընդունել, հանրապետական թուրքիան կերտած հերոսներու շարքին տեսնել մարդասպաններու, աւազակներու եւ թալանիչներու գործօն ներկայութիւնը ... Հանգամանք մը՝ որ աւերիչ ազդեցութիւն պիտի ունենայ հանրապետութեան հեղինակութեան եւ ազգային ինքնութեան մասին թուրքերու ունեցած անխախտ համոզումներուն վրայ...»:

Գիտական անաչառութեամբ եւ մտաւորական պարկեշտութեամբ առաջնորդող նման եզրայանգումներ ինքնըստինքեան ձախողութեան կը մատնեն պարբերաբար շրջանառութեան մէջ դրուող հայ-թուրք հաշտութեան յանձնախումբերու կազմութեան եւ պատմաբաններու համատեղ յանձնաժողովի մը յառաջացման առաջադրանքները, այս ուղղութեամբ, 2005-ին նախագահ Ապտուլլահ Կիլի

պատմաբաններու յանձնաժողովի մը կազմութեան նախաձեռնութիւնը, քաղաքական ձախող մարտավարութիւն մը ըլլալու կողքին, նաեւ կը բացայայտէ Թուրքիոյ պետական քաղաքականութեան հոգեբանութեան ախտաւոր կենսակերպը...

- 2008-ին, համացանցի վրայ Ահէմտ Ինսէլի, Պասքըն Օրանի, ձէնկիզ Աքթարի եւ Ալի Պայրամօղլուի նախաձեռնութեամբ «Հայերէն ներողութիւն կը խնդրենք» կոչով տեղի ունեցած ստորագրահաւաքի արշաւը եւս պումերանկի օրինակով սուր տագնապ ստեղծեց Թուրքիոյ քաղաքական-քաղաքացիական գիտակցութեան մէջ, պառակտեց երկրին մտաւորականութիւնը եւ անգամ մը եւս հայերուն հանդէպ բոլորեց թուրք ազգայնական-ծայրայեղական շրջանակներու ատելութիւնը, որոնց համար խնդրոյ առարկայ կոչը՝ թուրք ժողովուրդի միասնականութեան ուղղուած հարուած մըն էր, միանգամայն հայոց ցեղասպանութեան ճանաչման առաջնորդող քայլ մը, որ նոյնաբնոյթ մարտավարութեամբ մը պէտք էր հակակշռել, հակադարձութիւնը սկիզբ առաւ հանգստեան կոչուած 60 թուրք դիւանագէտներու ներողութեան արշաւը պարսաւող այլ կայքէջի մը ստեղծումով, սպայակոյտի հրամանատարութիւնը եւս չուշացաւ «ներողութեան կոչ»ը բնութագրելու իբրեւ երկրին շահերուն վնասող արարք, մինչ միւս կողմէն, հայ գանգուածին մէջ եւս «կոչ» ին ստեղծած հոգեբանական տուայտանքը՝ հակադիր անդրադարձներ արձանագրեց:

Թուրքիոյ քաղաքացիական-հասարակական ոլորտներուն մէջ ի յայտ եկած ինքնութեան տագնապը եւս, հակառակ նորահաս սերունդներու հոգեբանութեան մէջ հայերու հանդէպ հետեւողականօրէն ներմուծող մաղձին, թոյնին եւ ատելութեան իր նոր երեւոյթներով կը սպառնայ երկրին բռնապետական մոլուցքով առաջնորդող քաղաքականութեան, այստեղ մեծ դեր կը խաղան ցեղասպանութեան իրողութիւնը հաստատող կարեւոր հրատարակութիւններ, մամուլին մէջ լոյս տեսնող ողջախոհ մտաւորականներու հրապարակումներ, վաւերագրական ժապաւէններ, մշակութային ձեռնարկներ եւ այլաբնոյթ նախաձեռնութիւններու օրէնքօր աճող քանակն ու որակը: Այս պարունակի մէջ հրապարակ ելած ցեղասպանութեան ընթացքին բռնի կրօնափոխ դարձած հայերու հարցախնդիրը ինքնին՝ երկրի ողջ տարածքին ինքնութեան տագնապ յառաջացնող առաջնագոյն գործօնը կը համարուի, որուն տարողունակ դրսեւորումը ի յայտ եկաւ Հրանդ Տինքի յուղարկաւորութեան եւ անոր յաջորդած դատավարութիւններու ընթացքին ցուցաբերուած ժողովրդային լայն գանգուածներու մասնակցութեամբ, այստեղ մեծ է դերը իրաւագէտ Ֆէթհիյէ Չէթինի, որ իր «Մեծ Մայրիկա» (2004) եւ «Թոռներ» (2009) հատորներով կը հանդիսանայ Թուրքիոյ տարածքին ինքնութեան կայծը բռնկեցնող կարեւորագոյն հեղինակութիւններէն, ըստ որուն՝ թուրքին ինքնութեան տագնապն

ՀՈԳԵՆՈՅԸ ԵՒ ՀԱԼԱԾԱՆՏԸ

Շարունակում է 8-էն

ու հալածախտը պիտի շարունակեն խորանալ ու բարդանալ այնքան ատեն, որ ան կը շարունակէ ուրանալ իր գործած մեղքը, կամ լաւագոյն պարագային կը շարունակէ խաղալ իր կրաւորական հանդիսատեսի դերը, որուն մտայնութեան մէջ, գործուած մեղքը դադարելով յանցանք նկատուելէ ազգային աւանդոյթ-սովորոյթ դարձած է, մինչդեռ հակառակը պէտք է պատահի, որովհետեւ «իրական դատաւորը ժողովուրդներն ու անոնց խիղճն է...»:

Յետ հայոց ցեղասպանութեան, Եւրոպայի կպած առաջին ֆաշական պետութիւնը հանդիսացած Թուրքիոյ քաղաքական-պետական ոլորտներուն մէջ բոյն դրած հալածախտի հոգեբանական տաղանապարհ առաւել եւս սրելով, հաշուեյարդարի ենթակից երկրին տարածքին վրայ գտնուող այլ փոքրամասնութիւններ, ինչպէս յոյներն ու ասորիները, գուգահեռաբար հայ ժողովուրդի ցեղասպանութեան ուրացման քաղաքականութիւնը հետեւողական կշռոյթով, ժամանակի ընթացքին բացարձակ անտեսումէն անցաւ ժխտումի ապա խեղաթիւրումի փուլերէն՝ 40-50 ականներուն, Թուրքիոյ սպայակոյտի զօրավարներէն էսաս Ուրագըի առաջնորդութեամբ սկսած խեղաթիւրման քարոզարշաւը ընդլայնեցաւ 70-ականներուն Թուրք դիւանագէտներուն դէմ շղթայագերծուած արարքներէն ետք, եւ թափ ստացաւ Իհսան Սաքարիայի, Քամուրան Կիւրիւնի, Եոսուֆ Հալաօղլուի եւ այլոց կատարած արխիւներու ապակողմնորոշիչ հատուածներու հրապարակումներով, պարզապէս շփոթ ստեղծելու միջազգային հանրային կարծիքին մօտ:

1993-ին, ժխտողական քաղաքականութեամբ առաջնորդուող Թուրք դիւանագիտութիւնը յաջողեցաւ ՄԱԿ-ի տեղեկագիրներուն մէջ մոտք գործած, 1944-ին Լեմբինի սահմանումով «ցեղասպանութեան եզր»ը հանել տալ:

1980-2010 որդեգրուած քաղաքականութիւնը կը խուսափի փաստերու քննարկումէն, փոխարէնը թէ՛ տեղական թէ՛ միջազգային հարթակներու վրայ կը ծաւալէ խեղաթիւրումի կազմակերպուած քարոզարշաւ, այս առանցքին մէջ կաշառելով միջազգային լոպպիստական կառույցներ, օտար պատմաբաններ, միջազգային լրատուական ցանցերու մէջ հեղինակութիւն վայելող վարձկան լրագրողներ եւ արեւմուտքի համալսարաններուն մէջ ժխտումի քաղաքականութիւնը հունաւորելու կոչուած գիտաշխատողներ, դասախօսներ եւ ամպիրոններու ղեկավարներ, այս մասին ըստ ցեղասպանագէտներու միջազգային ընկերակցութեան նախագահ՝ Կրեկորի Սթենթոնի «ժխտումը ցեղասպանութեան վերջին փուլն է, որ տուժող կողմին հոգեբանօրէն եւ մշակութային առումով ոչնչացնելու, այդ խումբի անդամներուն նոյնիսկ իրենց հարազատներուն մասին ունեցած յիշողութեան գրկելու շարունակական փորձ է, եւ անա Թուրքիոյ կառավարութիւնը այս է, որ կ'ընէ աշխարհասփիւռ բոլոր հայերուն նկատմամբ...»:

Ամէն տարի Ապրիլ 24-ի նախօրէին Թուրքիոյ պետական ոլոր-

տի բաղկացուցիչ քաղաքական եւ դիւանագիտական կառույցները հոգեբանական լուրջ տագնապ կ'ապրին եւ զօրաշարժի կ'ենթարկեն իրենց ենթակայ կազմակերպութիւնները, խափանելու ցեղասպանութեան ճանաչման նպատող որեւէ փորձ, մանաւանդ երբ ԱՄՆ-ի Քոնկրեսի ներկայացուցիչներու պալատի օրակարգերուն մէջ տեղ գտած ըլլայ ցեղասպանութեան բանաձեւի քննարկման հաւանականութիւն մը, այդ կազմակերպութիւններու ամենէն ազդեցիկը կը համարուի 1956-ին ԱՄՆ-ի մէջ կեանքի կոչուած

«Թրքական Միութիւններու Դաշինք»ը, որուն կառույցը կը համակարգէ ԱՄՆ-ի մէջ գործող աւելի քան 40 թրքական եւ ազգապէջմանական կազմակերպութիւններու գործունէութիւնը, զօրավիզ ունենալով 1991-ին Նիւ Եորքի մէջ ստեղծուած Turkish Forum համացանցային կայքէջը:

Հայաստան-Թուրքիա «Արձանագրութիւններու» նախաձեռնութիւնը եւս, իր երեւութապէս մեղու ձեւական տրամադրութիւններու ստեղծումով, խորքին մէջ գայթակղեցուց եւ լուրջ անհանգստութիւն պատճառեց երկրին ազգայնական, ցեղապաշտ եւ այլամերժ հատուածներուն, որոնք պարբերաբար իրենց կազմակերպած զրգուիչ ցոյցերով չեն վարանիր իրենց հայատեացութեամբ վառող զգացումները յայտնել:

Պէտք է ըսել, որ իր ունեցած հալածախտին պատճառով, Թուրքիա այսօր աւելի քան երբեք ապաբարոյական միջոցներով իր բոլոր ուժերը լարած է ոչ այնքան ճանաչումի պահանջքը շրջանցելու, այլ շուրջ դարու առաջին ցեղասպանութեան գոհ դարձած, իր բնօրրանէն արմատախիլ եղած, բայց իր իրաւունքներու ձեռք բերման հետամուտ հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարի 100-ամեակը խափանելու:

Այս բոլորին առընթեր, հակադիր բեւեռի վրայ հայ ժողովուրդին ժառանգական հոգեխոցը կը շարունակէ կոտորել, այնքան ատեն որ Եւրոպայի սահմանամերձ առաջին ֆաշական պետութիւնը՝ Թուրքիան, միջազգային իրաւական օրէնքներու լոյսին տակ, հայ ժողովուրդի ցեղասպանութեան 100 տարիներ ետք դեռ պատասխանատուութեան չէ կանչուած, դատապարտելի իրականութիւն մը, որ իր սանձեր նոր ցեղասպանութիւններ գործելու անոր յաւերժական մոլուցքը եւ դեռ աւելին՝ յիշողութեան բռնաբարումն ու անպատժելիութեան ցատու մը 1.500.000 անշիրիմ նահատակներու սուգը կը դարձնեն անվերջ: Փաստօրէն Թուրքը խոչընդոտելով պատմական ճշմարտութեան փոխանցութիւնը դեռ կը շարունակէ գործել իր ցեղասպանական ոճիրը, անցեակին բնաջնջումով միաժամանակ կը գրոհէ նաեւ ներկային ու ապագային վրայ, մէկը ոչնչացնելով միւսին գոյութիւնը հարցականի տակ կը դնէ:

Իրենց բնօրրանէն ամատախիլ եղած զանգուածներուն համար ռազմական նշանակութիւն ունեցող հողին կորուստը ինքնին՝ հաւաքական տագնապին հիմնական պատճառը հանդիսացած է, երկրային յենարան չունենալու սարսափը եւ հաւաքական յիշողութիւնը թիրախ դարձուցած սպառնալիքները

խոցելով հոգին, մեծ դեր խաղցած են տարագիր հայուն հոգեբանական կենսակերպի ձեւաւորման մէջ:

Հաւաքական հոգեխոցը ծանրօրէն կրած ցեղասպանութեան եւ անոր յաջորդած առաջին սերունդի հայ կիներու կեանքը եղած է աւելի անտանելի ու դաժան քան մահը ինքնին, բռնաբարուած ու բռնի կրօնափոխ դարձած հայ կանանց եւ աղջիկներու հոգեխոցը աւելի սուր է եւ աւելի ցաւագին քան հրաշքով փրկուած վերապրողներու հոգեկան ծանր ապրումները, առաջինները երբեք չեն ուզած իրենց ողբերգութեան մասին արատայայտուիլ, լռիկ-մնջիկ կրած են թէ՛ իրենց հարազատներուն կորուստի ցաւը թէ՛ կրծած են իրենց սպաննուած արժանապատուութեան ամօթը եւ փակուած իրենց սգաւոր ներաշխարհին մէջ, անկախ այն հանգամանքէն, որ Թուրքի մը կամ քիւրտի մը կիներ ըլլալով անոր գաւակներուն ծնունդ գտող օրինակ կը ծառայեն Ֆէթհիյէ Չէթինի «Մեծ Մայրիկս» եւ «Թոռներ» գիրքերը, ինչպէս նաեւ Կիւլչիչէ Կիւնէշ Թեքինի «Սեւ Պատանք»ը, Քեմալ Եալչընի «Վերապրողները», Յակոբ Խաչիկեանի եւ Ժան Իվ Սուսիի համահեղինակութեամբ «Ամառ Առանց Այգաբացի» վէպերը եւ Սուգան Խոյըշեանի բեմադրութեամբ «Մեծ Մօրս Դաջուած քները» ժապաւէնը:

Միւս կողմէն, հայկական ճարտարապետական կոթողներուն, եկեղեցիներուն եւ վանքերուն աւերն ու աւարը, մանաւանդ հոգեւոր կառույցներու եւ գերեզմաններու պղծումը եւս, խոր ակօսներ բացած են զանոնք կորսնցուցած զանգուածին հոգեբանական աշխարհին մէջ: Եղեռնի արհաւիրքը մարած բայց կերպով մը ողջ մնացած երեխաներու հոգեբանական տագնապներով նշանաւորուող կեանքը եւս դարձած է երկարաձիգ լուսթիւններու ուղի:

Յետ ցեղասպանութեան, Թրքութեամբ հպարտանալու եւ անխոցելի ազգ ըլլալու բարոյական տոկման՝ երկրին ազգային, էթնիկ եւ կրօնական խայտաբղէտ պարունակի հոգեբանութեան մէջ նոր խոցեր ստեղծելով, առաջին հերթին իր թիրախը դարձուց տեղւոյն հայ զանգուածը: Գաւառներու մէջ բռնի կրօնափոխ դարձած հայերու քաղաքացիական կարգավիճակը աւելի քան ողբերգական ըլլալով, պարզապէս շարունակուող ցեղասպանութեան այլ տարբերակ մըն էր, որուն կենդանի գոհներուն հոգեբանական կառույցը՝ համապատասխան բնագաւառի գիտական ուսումնասիրութիւններու աննախընթաց նիւթ կը համարուի, իսկ ապօրինի տուրքերու որպիսին էր ունեւորութեան տուրքը, չպատճառաբանուած բռնութիւններու, հալածանքի, խտրութեան, թշնամական վերաբերմունքի եւ ընդհանրապէս հոգեւոր, մշակութային, կրթական եւ հասարակական բնագաւառներու մէջ եղած ճնշումները, իրենց ստեղծած սարսափի մթնոլորտով հաւաքական հոգեխոցը աւելի կը խորացնէին:

Մինչ տարագիր հայութեան աշխարհասփիւռ բեկորներու հոգեվիճակը, մանաւանդ Միջին Արեւելքի մէջ ստեղծուած հայ գաղութներու բաբախուն կեանքին շնորհիւ, համեմատաբար աւելի բարեյոյս պատկեր մը կը ներկայացնէր, սակայն գերծ չէր հոգին գալարող ցաւերուն յաճախանքէն: Այսօր, ցեղասպանութեան 100

տարիներ ետք, հայ-թուրք հակամարտութեան առանցքին մէջ տեղի ունեցող պարբերական տեղաշարժերը իրենց դրական թէ բացասական անդրադարձերը կ'ունենան հայ անհատի հոգեբանական ոլորտին մէջ, այս իմաստով վիրաւորական եւ գայթակղեցուցիչ են Թուրքիոյ մղած քարոզչական պատերազմի բաւիղներուն մէջ, հետեւողական կշռոյթով հրապարակուող՝ ցեղասպանութիւնը ժխտող եւ ճանաչումի ու պահանջատիրութեան իրաւունքները ոտնահարող ոչ միայն պետական պաշտօնական թէզերը, այլեւ այդ սայլին լծուած օտար պատմագէտներու եւ քաղաքագէտներու ունեցած բացասական մտակեցուածքները...: Հոգեբանական տագնապներ կը ստեղծեն նաեւ ողջախոհ Թուրքին՝ իմա՝ «միւս Թուրքին» առկայութեան հանդէպ որոշ կեցուածք որդեգրելու տուայտանքը, միջազգային հանրային կարծիքին որձ եւ էգ քաղաքականութիւնը, համահայկական չափանիշներով որոշումներ ընդունելու եւ համապատասխան կեցուածք որդեգրելու անկարողութիւնը, Հայաստանէն ահաւոր չափերու հասած արտագաղթը եւ Միջին Արեւելքի աւանդական գաղութներուն քայքայումը ...:

Արդ՝ Մեկնելով 100-ամեակի մը ընթացքին մեր ունեցած փորձ ու փորձառութեան արժեւորումէն, պէտք է ըսել, որ

- Համահայկական չափանիշներով չենք կրցած համապատասխան հակաղեցուցիչ ցուցաբերել եւ Թուրքիոյ ու անոր ջաղագքին ջուր լեցնող վարձկան գործիչներու կեղծ ու ստալոթ թէզերը բացայայտող՝ համարժէք փաստարկներով պատմութեան նենգափոխութիւնը հակադրելու, այս իմաստով ցաւալի իրականութիւն է, որ ցեղասպանութեան թեման միջազգային չափանիշներով գիտական ուսումնասիրութեան առարկայ դարձնելու համար, ցարդ չենք կրցած լաւագոյնս օգտագործել առկայ բազմաթիւ հնարաւորութիւններ, մինչ Թուրքիոյ գուգահեռ, Ազրպէյճանական կողմը եւս, այլ ճակատի վրայ իր դիւանագիտական շրջանակներուն տարած անխոնջ աշխատանքով անտեղիտալիօրէն կը նկրտի միջազգային իրաւագիտական տարողութեամբ «խոջալու»ի մտացածին դէպքին իբրեւ «ցեղասպանութիւն» գնահատական ապահովել:

- Եւ ո՛չ միայն այդքան, Թուրքիա եւ Ազրպէյճան իրենց դիւանագիտական աշխարհատարածներ-կայացուցուցութիւններու, միջազգային լրատուամիջոցներու եւ արեւմուտքի համալսարաններուն մէջ գործող կաշառուած պատմագէտներու, գիտաշխատողներու եւ լրագրողներու միջոցաւ կը տարածեն այնպիսի նիւթեր, ըստ որոնց իբրեւ թէ հայերը Թուրքերուն դէմ ցեղասպանութիւն գործած են ... հետեւողական ուժականութեամբ կատարուող այս աշխատանքները կը միտին ապակողմնորոշել միջազգային հանրային կարծիքը, միաժամանակ աղաւաղել ու մրոտել հայուն կերպարը, անոր հանդէպ Թուրքին ստեղծութեան զգացումները միշտ բոլոր պահել, եւ մանաւանդ այսպիսով ձգտել հակադրուելու երկրին մէջ տակաւ ձեւաւորուող յառաջապահ մտաւորականութեան ունեցած ազդեցութիւնը երկրին քաղաքացիական ոլորտներուն մէջ, եւ անա ճիշդ այս

ԹՈՒՐՔ ՈՂՋԱՄԻ ԿԱՆՈՒՄԻ ՄՏԱԼՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Թուրքի ողջամիտ մտաւորականները, եւ ի մասնաւորի այն մտաւորականները որոնք այս կամ այն ձեւով ընդունած են Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը առանց վախ ունենալով Թուրքիոյ պետութեան թիւ 301 կամ այլ նման օրենքներու հետեւանքներէն, ներկայիս հաւելեալ թափ մը կուտան մեր տարած աշխատանքերուն եւ մեր արդար պահանջներուն: Թիւ 301 հազարներով չեն, բայց վստահ անոնք հարիւրներով են: Պատմաբաններ, գրողներ, քաղաքագէտներ, փաստաբաններ, լրագրողներ, մատենագիտներ, արուեստագէտներ եւ այլն. անոնցմէն թիւով 60ի մասին արդէն հետազոտութիւններ կատարուած են մեր կողմէն եւ թերթերու ու կայքէջերու մէջ լոյս տեսած եւ մնացածողներուն ցանկը երկար է ու երթալով միշտ նոր անուններ կաւելնան, բոլորն ալ նոյն մակարդակի մտաւորականներ:

Թուրք պատմաբան եւ ընկերաբան փրոֆէսոր Թաներ Աքչամ առաջիններէն էր որ անդրադարձած է Հայոց ցեղասպանութեան եւ փաստած անոր տեղի ունենալը. ան շարք մը գիրքեր հրատարակած է անգլերէնով, գերմաներով եւ թուրքերէնով հայոց ցեղասպանութեան մասին եւ դեռ կը շարունակէ. ներկայիս ան կը գլխաւորէ ԱՄՆ-ի (Clark University - Massachusetts) հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութիւններու բաժինը:

Թուրք վիպասան Օրհան Փամուք հարցազրոյցի մը ընթացքին 2005թ., յիշած է թէ մէկ միլիոն հայեր սպանուած են Թուրքիոյ մէջ պատերազմի տարիներուն. ան դատապարտուած է Թուրքիոյ ատենախորհուրդի կողմէ, մահուան սպանալիքներ ստացած հասարակ ժողովուրդէն եւ ներկայիս երկրէն դուրս կապրի. Փամուք 2006 թ. Նոբելեան մրցանակի (գրականութեան) դափնեկիր է եւ հայոց Մեծ Եղեռնը ցեղասպանութիւն կը որակէ. իսկ Հայ ժողովուրդի արդար Դատի ականաւոր պաշտպաններէն իրաւաբան եւ գրող Ֆեթհիյէ Չեթինը իր «Մեծ Մայրիկա» գիրքով հաստատած է թէ իր մեծ մայրը ցեղասպանութենէն փրկուած հայուհի մըն է. այդ գիրքին հետեւեցաւ ուրիշ մը Ֆեթհիյէ Չեթինի եւ Այշա Կուլ Ալթինայի կողմէն «Թոռներ» խորագրով, ուր 25 թուրքեր յայտնած են իրենց հայու թոռներ ըլլալը: Հետեւանքը այն եղաւ որ շատ մը ծագումով հայեր այսօր անվախ կարտայայտուին իրենց ինքնութեան մասին եւ քանիներ վերջերս Տիգրանակերտէն եւ Տէրսիմէն Հայաստան հասան եւ Ծիծեռնակաբերդը այցելեցին: Գրող եւ բանաստեղծ Իլիֆ Շաֆախի «Իսդանբուլի պոռնկորդին» վեպը որը ցեղասպանութեան մասին է, Թուրքիոյ 2006թ լաւագոյն վաճառող գիրքն էր. Իլիֆ Շաֆախն ալ եւս դապարտուեցաւ Թուրքիոյ ատենախորհուրդի կողմէ եւ մահուան սպանալիքներ ստացաւ, եւ ներկայիս Եւրոպայ կապրի ու իր «Իսդանբուլի պոռնկորդին» կը բեմադրուի: Իրաւապաշտպան եւ հրատարակիչ Ռակիպ Ջարաքօլու, հատորներ հրատարակած է հայոց ցեղասպանութեան մասին եւ մեծ համարակութեամբ արտայայտուած

է անոր մասին եւ քանիցս այցելած է հայաստան, սակայն մեծ վնասներ կրած է, իր տպարանը հրկիզուած է, եւ քանի մը անգամ դատապարտուած եւ բանտարկուած է: Լրագրող եւ հրատարակախօս Հասան ձեմալ, տիրահաշակ ձեմալ փաշայի թուրք, երկար ժամանակ համոզուած էր, թէ ցեղասպանութիւնը տեղի չէ ունեցած, սակայն Ծիծեռնակաբերդի յուշահամալիրը այցելած է եւ հրատարակած իր «1915: Հայկական ցեղասպանութիւն» խորագրեալ գիրքը. Արուեստագէտ, պարուսոյց եւ իրավապաշտպան Ջէյնէպ Թանպէյ, 2010թ. «Թաքսիմ»-ի հրատարակի վրայ մասնակցած է ցեղասպանութեան տարեկիցի նշման հաւաքոյթին եւ արտայայտուած եղեռնի մասին, իսկ ուրիշ առիթով մը կոչ մը ստորագրած է Ապրիլ 24, 2014 Յեղասպանութեան ոգեկոչման կապակցութեամբ: Թուրք Տնտեսագետ, համալսարանի փրոֆէսոր, գրող եւ սիւնակագիր Ահմէտ Անսէլ հայոց իրաւունքներու աշխուժ կողմնակիցներէն է. ան ֆրանսացի գրող Միշել Մարեանի հետ միասին Հայոց ցեղասպանութեան մասին գիրք մը հրատարակած, եւ Հայաստան այցելեած գրքերու ցուցահանդեսի առիթով ուր իր գիրքն ալ վաճարուած է: Պատմաբան Հալիլ Պերթալ ըսած է թէ Թուրքիոյ պետութիւնը անհետացուցած է հայոց ցեղասպանութեան վերաբերեալ շատ մը փաստաթուղթեր, որը հաւանաբար եղած է նախկին դեսպան Մուհրէմ Նուրի Պուրճի կողմէ որ առիթով մը խոստովանած էր (մենք իրոք ջարդեցինք անոնց): Թուրք մտաւորական, ակադեմիական, թարգմանիչ, գրականագետ, սիւնակագիր, եւ քաղաքացիական իրավունքներու պաշտպան Մուրատ Պէլճ ծանօթ է իր ուսումնասիրութիւններով հայոց ցեղասպանութեան մասին. ան, ուրիշ մտաւորականներու հետ մէկտեղ, խորհրդաժողով կազմած է ցեղասպանութեան մասին Թուրքիոյ մէջ, հրատարակած է «Հայերը գրականութեան մէջ» գիրքը ուր կը պատմէ հայերու կատարած գրական ստեղծագործութիւններու մասին Օսմանեան կայսրութեան մէջ: Գրող, քաղաքական եւ մեկնաբան Ալի Պայրամօղլու, խումբ մը թուրք մտաւորականներու հետ (Թիւրք 200) հրատարակային ներողութիւն խնդրած են հայերէն 1915 Մեծ Եղեռնին համար եւ յաճախ կը մասնակցի Ապրիլ 24-ի ձեռնարկներուն Թուրքիոյ մէջ: Օսման Քոքիք հրատարակութիւններ ունի թրքահայերու մասին եւ (Միքելի Եղբայր) անունով ցուցահանդեսներ կազմակերպած է ուր ցուցադրած է հայերու վերաբերեալ նկարներու եւ բացիկներու հաւաքածոներ Օսմանեան կայսրութեան մէջ հաստատելով որ անոնք բնիկ տեղացիներ են: Իսկ ձենկիզ Աքթար արտայայտուած է թէ Թուրքիայն կորսնցուցած է ցեղասպանութեան շուրջ ճշմարտութեան ճակատամարտը եւ ինք անձամբ ձեռնարկած է ներում խնդրելու արշաւի մը ուրիշ մտաւորականներու հետ: Ահմէդ Ալթինի «Ահ Աղբարիկ» յօդուածը նուիրուած է ցեղասպանութեան նահատակներուն, Ալթինը թարգմանի թերթի առաջին էջին վրայ գրած է «1915ը Յեղասպանութիւն է», եւ անոր տեսակէտով



հայերը պէտք է որ նախ թուրք ժողովուրդը լուսաւորէն եւ անոնք են որ պիտի պարտադրէն պետութեան վրայ ցեղասպանութեան ճանաչումը: Մարդկային իրաւունքներու պաշտպան եւ իքական սեռի իրաւունքներու ջատագով Այշա Կուլնասու, մասնակցած է ցեղասպանութեան շուրջ հաւաքոյթներուն եւ շատ մը առիթներով դասախօսած է ցեղասպանութեան մասին. ըստ անոր եթէ 1915ի ցեղասպանութիւնը տեղի չունենար, հայ բնակչութեան թիւը 17 միլիոնի պիտի բարձրանար այսօր: Քաղաքագիտութեան փրոֆէսոր Այշա Քատիօղլու, 2012ի յօդուածի մը մէջ յիշած է, թէ Թուրքիոյ մէջ ցեղասպանութեան մասին դասաւանդելը արգիւտած է աւելցնելով (երբ առիթը ունեցայ անոր մասին կարդալու, գրեթէ զգացի որ ես ուրիշ մոլորակէ եմ): Թուրք ռազմական դատաւոր Ումիտ Քարտաշ մասնակցած է ստորագրութեան արշաւի մը (Յաւը մերն է) խորագրով որը կը վերաբերի հայ ազգի գոհերուն ու կորուստին. ան ունի նաեւ յօդուած մը (Իթիթհատ վէ թարաքքի) կուսակցութեան ցեղասպանութեան ծրագիրներուն մասին: Թուրք գիտնական Սաիտ Չէթինօղլու, ուսումնասիրութեան մը մէջ յիշած է թէ 1915ի ցեղասպանեան ընթացքին հանրապետական անշարժ գոյքերը որոնք վստահեցուած են հարեւաններուն թաւանուած կամ վաճառուած են անոնց կողմէն. ան գրած է նաեւ (Դրամագլխի Հարկ) ի մասին որը հիմնականով գործադրուած է փոքրամասնութիւնները սնանկացնելու նպատակով. Չէթինօղլու այցելած է Հայաստան եւ Ծիծեռնակաբերդը: Ումիտ Քարտաշ գիրքեր հրատարակած է հայոց ցեղասպանութեան մասին եւ անոր ուսումնասիրութիւնները կեդրոնա-

ցած են Այնթապի հայերու կալուածներու բռնագրաւման եւ իւրացումի մասին, այցելած է Հայաստան եւ 1915թ արիւնները պրպտած: Ուղուր Ինկիլը ճամբորդած է հայկական պատմական քաղաքները եւ Թուրք երէցներէն ցեղասպանութեան դէպքերը լսած ու արձանագրած ու գիրքեր հրատարակած: Օրհան Ահմետ, Քեմալ Քոփթաշ, Մեհմետ Օրաս, Սելիմ Տիրընկիլ, Այշա Հուր, Մուրաթան Մուսկան, Իսրա Մուսկան, Օյա Պայտար, Ֆաթիմա Կոչքեք, Ատալթ Աղաօղլու, Օրալ Քալլար, Ալբեր Կորմուշ, Մայա Արաքոն, ձէնկիզ Ալթան, Մէհմէտ Փոլաթէլ եւ շատ մը ուրիշներ եւս տարբեր առիթներով դրականօրէն արտայայտուած են ցեղասպանութեան մասին, իսկ մաս մըն ալ մասնակցած է Ապրիլ 24ի հաւաքոյթներուն ու բողոքի ցոյցերուն եւ այցելած՝ Հայաստան: Ներկայիս, աւելի քան որեւէ ժամանակ մենք կարիքը ունինք ողջամիտ մտաւորականներու աջակցութեան, եւ ի մասնաւորի Թուրք ազգութեամբ, որոնք մեր վիշտը կը մըբռնեն եւ մեր արդար դատը եւ պահանջները աւելը կը տարածեն, եւ այս պարագային Թուրք հասարակութեան մէջ, որոնք մեծ ամասնութեամբ տակաւին Օսմանեան մտայնութեամբ կը մնան: Մենք, իրաւունքի պահանջատէրեր ըլլալով, շատ աջակիցներ ունինք (պետութիւններ, կազմակերպութիւններ, մտաւորականներ եւ այլն), սակայն միշտ կարիքն ունինք արդարամիտ, ազատամիտ եւ մեր մորմոքը հասկցող կողմերու, իսկ մեզի կը մնայ օգտուիլ այդ մտաւորականներու դիրքորոշումներէն, ի մասնաւորի Հայոց Յեղասպանութեան 100ամեակին առիթով:

ԹՈՒՐՔ ՅԵՏԱԶՕՏՈՂ՝ ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ԱՌԵՐԵՍՈՒԻ ԵՇՄԱՐՏՈՒԹԵԱՆԸ

Թուրք հետազոտող, իրաւապաշտպան Սաիթ Չեթինօղլուն Repairfuture.net կայքում հրատարակուած յօդուածում թուրքերում է այն պատճառները, թէ ինչու է վնասների փոխհատուցումը բարոյական անհրաժեշտութիւն, եւ բացատրում թէ ինչու է պահանջուած, որպէսզի վերադարձուի թուրքական պետութեան կողմից բռնադրուած հայկական սեփականութիւնը: Յիշեցնելով, որ «հասարակութեան բոլոր շերտերն ու պետութիւնն իր բոլոր կառույցներն այս կամ այն կերպ ներգրաւուած են եղել ցեղասպանական գործողութիւններում եւ շահ հետապնդել»՝ Չեթինօղլուն նշում է, որ պէտք է աջակցել հայերին ու ցեղասպանութեան գոհ դարձած մնացած ժողովուրդներին, որպէսզի նրանք կարողանան որոշել իրենց կրած վնասների ու մարդկային կորուստների չափն ու պարտաւորեցնել դրանց «անվերապահ ու անարգել» փոխհատուցումը:



րունակութիւնն է առ այսօր: 100 տարի շարունակ իրական քաղաքականութեան պատանդը դարձած արդարութիւնը կապանքներից ազատելու եւ արդարութեան վերականգնման ժամանակը եկել ու անցել է՝ թէկուզ մէկ դար անց:

Յայտնի է, որ արդարութեան պահանջը բնական համընդհանուր իրաւունք է: Հայ հասարակութեան արդարութեան պահանջին համաշխարհային պատահանից նայելը եւ մարդկային ձեռքբերումները հաշուի առնելը հաւասարազօր է արդար գործելուն: Հարկաւոր է նաեւ մարդկութեան դէմ գործուած յանցագործութիւնների կատարողներին մաս կազմող ցեղասպանութեան յանցագործութիւնն էլ դիտարկել մարդկային ձեռքբերումների, այսինքն՝ համամարդկային արժէքների լոյսի ներքոյ: Թէեւ 1915-ի ցեղասպանութիւնից մէկ դար է անցել, սակայն այդ մօտեցումը արդարութեան վերականգնման գրաւականը կը լինի՝ դա նաեւ օգտակար կը լինի ինչպէս տուժող հասարակութիւններին, այնպէս էլ յանցաւոր հասարակութիւնների համար: Ինքնահաշտեցման հետ, դա նաեւ առիթ կը լինի այս տարածաշրջանում բացել համամարդկային արժէքների դուռը՝ դարձնելով այն տեւական:

Հայոց ցեղասպանութիւնը մի գործընթաց է: Այն պէտք է դիտարկել որպէս տասնամեայ մի գործընթաց, որը տեղի է ունեցել 1913-22թթ. ժամանակահատուածում: Բոլոր ցնցումներն այդ ընթացքում են տեղի է ունեցել: Դա 1913թ.-ին էգեյան շրջանում մի փորձարկումով [2] սկսուած տասնամեայ գործընթաց է: Աւելի ուշ տեղի ունեցած քեմալիստական միջոցառումները կարելի է բնութագրել որպէս մանր-մունր գործողութիւններ: Սա նշանակում է նաեւ, որ հայ ժողովրդի մասին մեր ասածները նոյնքան վաւեր են 1915-ի ցեղասպանութեան գործընթացում իրենց պատմական տարածքներից քշուած միւս ժողովուրդների համար:

Հակառակ այն տարածուած կարծիքին, ըստ որի ցեղասպանութեան գործընթացում կիրառուած գործողութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների մասին բոլորը չգիտէին [3], իրականում մեծամասնութիւնը տեղեակ էր այդ մասին, մեծ մասը մեղաւոր էր դրան: Ինչպէ՞ս մարդ կարող է չգիտակցել, թէ ինչ է անում: Միթէ փոխակերպումն իրականացաւ հասարակութեան բո-

լոր շերտերի ու կառավարական շրջանակների անգիտութեամբ: Հետեւաբար, պէտք է ընդունել, որ այստեղ առկայ է հաւաքական յանցագործութիւն:

Ողջ հասարակութիւնն է պատասխանատու

Այն, որ հասարակութեան բոլոր շերտերն ու պետութիւնն իր բոլոր կառույցներով մասնակցել եւ օգտուել են ցեղասպանութեան գործընթացից՝ մի իրողութիւն է, որ երբեք չի մոռացուի: Այդ օգուտը դեռ շարունակուած է:

Չնայած այն հանգամանքին, որ իրականութիւնն այնքան պարզ է, այդ մասին բարձրաձայնելը հակազդեցութիւնների տեղիք է տալիս: 2014թ. Դեկտեմբերի 9-ին Արմեդիայի Գրեոտա Աւետիսեանի հետ ունեցածս հարցազրոյցում հետեւեալ միտքն էի արտայայտել՝ «Երբ Եւրոպայում մի մարդ ասում է՝ «Ես պատասխանատու չեմ այն ամէնի համար, ինչ իմ պապն է արել», դա բաւարար է այդ մարդուն նացիստ անուանելու համար: Պատմական հայկական հողերը թուրքական համարելը, դրանք Քուրդիստան անուանելը հաւասարազօր է ցեղասպանութեան յանցանքի պտուղները քաղելուն: Սա նշանակում է, որ դու համաձայն ես պատմական Հայաստանի գաղութացմանը» [4]: Բոլորը կառնեցին խօսքերիս Քուրդիստանին առնչուող մասին: Անմիջապէս շօտ սարքեցին՝ նշելով, որ Քուրդիստանը քննարկուածից դուրս ենք թողել: Մինչդեռ, Եփրատից այն կողմ պատահածն այլ բան չէ, քան պատմական Հայաստանի ամաչացումը եւ գաղութացումը [5]:

Պէտք է աչքաթող անել այն կարեւոր հանգամանքը, որ այս ամէնի պատճառը ցեղասպանութեան գոհ դարձած ժողովուրդները չեն (հայերը, պոնտացիները, հելենները, ասորիները): Անհրաժեշտ է անվերապահ ընդունել այս իրականութիւնը եւ ըմբռնել, որ անարդարութիւնն առ այսօր շարունակուած է առանց որեւէ փոխհատուցման:

Մէկ այլ իրողութիւն էլ կայ, որ իրականութիւնը միայն մէկ ասպեկտով է ներկայացուած մինչ ջրի երես է հանուած մէկ իրակաւութիւն, իրականութեան միւս երեսը աչքաթող է արւում: Օրինակ, մինչ հանրութեանն է հրամայում նախագահական պալատի վերածուած Քասաբեան ընտանիքի տունը [6], պատմական Հայաստանի՝ Եփ-

րատից այս կողմ գտնուողների մասին խօսք անգամ չի լինում [7]: Այս երկակի ստանդարտից հրաժարուելով մենք կը սկսենք հարցին վերաբերուել արդարութեան գզացումով:

Ցեղասպանութեան գործընթացում տուժող հասարակութիւնների ներկայացուցիչներին սպանել են, նրանց գոյքը իւրացրել, որդիներին ստրկացրել, մշակութային հարստութիւնը ոչնչացրել, հողիները գողացել են:

Իրաւական լինելուց բացի, սա նաեւ խղճի հարց է: Դա միաժամանակ խօսում է այն մասին, որ հարկաւոր է փաստերին վերաբերուել արդարութեան չափանիշներով եւ արդարութեան համամարդկային սկզբունքների շրջանակներում:

Ի՞նչ կարող ենք անել, մեղմ ասած, այս պատմական անարդարութիւնը վերացնելու եւ արդարութիւնը վերականգնելու ուղղութեամբ:

Առաջին հերթին, կարեւոր է, որ մասնագիտական կազմակերպութիւնները կանգնեն արդարութեան կողքին եւ պետութեանն էլ ստիպեն այդ ուղղութեամբ գնալ: Թուրք բժիշկների միութեան, լրագրողների միութեան, նմանատիպ մասնագիտական ընկերութիւնների, արհեստակցական միութիւնների՝ կոտորածի ենթարկուած անդամների հանրութեանը ներկայացումը կարող է անկեղծութեան արտայայտութիւնը լինել: Այս պահուածքը՝ ցեղասպանութեան գործընթացում դատարան տանելու պատրուակով ճանապարհին սպանուած, խոշտանգումներից յետոյ մահապատժի ենթարկուած հայ խորհրդարանականների յիշատակին թուրքիայի Ազգային մեծ ժողովից խորհրդանշական մի արարողութիւն պահանջելու ուղղութեամբ կարեւոր քայլ կարող է լինել: Հնարաւոր է նման բան պարտադրել թուրքիայի խորհրդարանին:

Մենք գիտենք, որ այս տարածաշրջանում ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդների ներկայացուցիչների նկատմամբ արդարութիւնը վերականգնելու եւ դրամական փոխհատուցման պահանջների լայն շրջանակ գոյութիւն ունի՝ սկսած Ստամպուլի Հալասքարգազի պողոտան Հրանտ Դինքի անունով կոչելուց, վերջացած Մուրրոսի զինադադարից յետոյ գաւթուած 150 հազար քառակուսի կմ տարածքի վերադարձով:

Վնասների փոխհատուցումը բարոյական անհրաժեշտութիւն է:

Այդ լայն շրջանակի առաջացրած դժուարութիւնները յաղթահարելու համար դիմենք փորձագէտ/իրաւարարի կարծիքին:

ԱՄՆ-ի Վորչեսթերի (Worcester) համալսարանի ցեղասպանութեան հետազոտող Հենրի Թերիոն (Henri Theriault), Հայոց ցեղասպանութեան փոխհատուցման վերաբերեալ մի աշխատութիւնում, յտակօրէն նշելով հայերի կրած վնասների փոխհատուցման բարոյական անհրաժեշտութեան մասին, հետեւեալն է ասում՝ «Անկասկած, սպանութիւնների, բռնաբարութիւնների եւ այլ դաժանութիւնների կամ մշակութային, սոցիալական եւ այլ տեսակի վնաս ու կորուստների համար ոչինչ հնա-

ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ԱՌԵՐԵՍՈՒԻ ԾՆՍԱՐՏՈՒԹԵԱՆԸ

Շարունակում է 11-էն

րաւոր չէ անել, բայց ինչ-որ բան, ինչ-որ կարեւոր բան, վստահաբար հնարաւոր է»: Այս խօսքով, նշելով փոխհատուցման բարդութիւնները եւ արդարութեան վերահաստատման դժուարութիւնը, նա մասնակի հատուցման ու դրամական փոխհատուցման կոնկրետ առաջարկութիւններ է անում:

«Հայոց ցեղասպանութեան հատուցումը կարող է ներառել հետեւեալը: Նախ, բռնագրաւուած հողատարածքների եւ այլ հարստութիւնների վերադարձը կամ փոխհատուցումը: Բացի այդ, պէտք է հաշուի առնել նաեւ.

- 1) այլեւս գոյութիւն չունեցող, ոչնչացուած ողջ անշարժ ու շարժական գոյքը,
- 2) փաստացի նիւթական կորուստների վրայ հաշուարկուելիք տոկոսները,
- 3) հարկադիր աշխատանքների գինը,
- 4) մահացած եւ ողջ մնացած մարդկանց կրած տառապանքները,
- 5) 1,5 միլիոն մարդկանց ոչնչացումը, ինչպէս նաեւ՝
- 6) մշակութային, կրօնական եւ կրթական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները պէտք է ետ վերադարձուեն:

Երկրորդ, Թուրքիան՝ ինչպէս վերստին զարգացող Հայաստանի Հանրապետութեան, այնպէս էլ Յեղասպանութեան արդիւնքը հանդիսացող հայկական սփիւռքի (իր սոցիալական, քաղաքական, տնտեսական եւ այլ կառոյցներով ու կազմակերպութիւններով) վերականգնման ջանքերին աջակցելու եւ հայերի կորուստները հատուցելու ուղղութեամբ գործնական քայլեր պէտք է ձեռնարկի: Դա պէտք է ներառի տնտեսական աջակցութիւնը՝ ներդրումային եւ առեւտրային գործունէութեան միջոցով:

Երրորդ՝ Թուրքիայի կառավարութիւնը պէտք է ընդունի Յեղասպանութեան բոլոր փուլերը, պէտք է ապահովի պատմական ճշմարտութեան մասին թուրք ժողովրդի իրազեկումը եւ պէտք է ամէն ինչ անի, որ Հայոց ցեղասպանութեան մասին իմանալ ողջ աշխարհը:

Չորրորդ՝ նիւթական փոխհատուցման գուրահեռ, թուրքական պետութիւնը եւ հասարակութիւնը, հայերի նկատմամբ ունեցած նախապաշարմունքային վերաբերմունքին վերջ տալու նպատակով, այդ թւում՝ ցեղասպանութեան գաղափարախօսութեան ինստիտուցիոնալ պրակտիկաների եւ ականդոյթների բոլոր տարրերն արմատախիլ անելով եւ հայերի ու այլ խմբերի հանդէպ կայսերական առաւելութեան բարդութից ձեւաւորուած հեղեմն թուրքական ազգային ինքնութեան տարրերը վերացնելով, պէտք է ձեռնամուխ լինի ուժաբիւտացիայի գործընթացի: Այդ գործընթացը պէտք է ուղղուած լինի միայն կին լինելու պատճառով բռնութիւնների թիրախ դարձած հայ կանանց, նկատի ունենալով բռնաբարութիւնների եւ սեռական ստրկութեան համատեքստը[8], ինչը Հայոց ցեղասպանութեան բուն էութիւնն է կազմում»[9]:

Պետութեան սեփականութիւնը դարձած գոյքի անվերապահ վերադարձը պարտադիր է

Սակայն, այս ամէնի քննարկման համար կարեւոր է համապատասխան դաշտի ու միջավայրի ստեղծումը: Իւրաքանչիւր կողմի պահանջները լսելի դարձնելու ազատութիւնը, առանց սահմանափակումների ու վերապահումների քննարկում իրականացնելու պայմանների ապահովումը անհրաժեշտ է արդար ու առողջ արդիւնքներ ձեռք բերելու համար:

Այստեղ մի փակագիծ բացելով՝ նշենք, որ շատ հեշտ բան չէ փոխհատուցման մասին խօսելը, առաւել եւս այն պահանջելը: Քանի որ ցեղասպանութիւնից օգտուողներն ու ցեղասպանութեան զոհերի մի մասը միասին են ապրում: Չոհի վճարած հարկերն ու այս փոխհատուցման վճարումը խնդրահարուց եւ վիճելի փաստ է:

Բաւական հեշտ կը լինէր սակայն, վճարել (իրենց կրած կորուստների համար-իմք.) Յեղասպանութիւնը վերապրած հասարակութեան մի բուռ ներկայացուցիչներին: Չմոռանանք, որ այդ ուժի վերջը պտտեցիալ առումով մշտապէս առկայ է յանցանքներ գործած բոլոր հասարակութիւններում: Ազատութեան եւ անվտանգութեան դաշտի ու միջավայրի ստեղծումը կենսական նշանակութիւն ունի:

Առանց նախապայմանների վերադարձի իրաւունքի տրամադրումը, անարդար կերպով քաղաքացիութիւնից զրկուածների քաղաքացիութեան իրաւունքների վերադարձը եւ ցանկացողներին Թուրքիայի հանրապետութեան անձնագրի տրամադրումը, պղտոր աչքերով դիտած նրանց հայրենի տարածքների (մեր սիրելի Սեւան Նշանեանի խօսքով՝ «անուշամոռացած երկրի») հայկական անունների վերադարձը... Նման միջոցառումները պետութեան կողմից հեշտութեամբ արուելիք ժեստերի շարքից են:

Եթէ փորձագէտի տեսակէտին հետեւենք, ապա հարցի լուծման առումով շատ կարեւոր է, որ փոխհատուցումը սկսուի պետական հաստատութիւնների գոյքամատեաններում գրանցուած սեփականութեան անվերապահ վերադարձով:

Կորսուած գոյքի քանակը քիչ թէ շատ չափնի է պետութեան գրանցամատեաններում: Քանի որ սեփականութեան իրաւունքը հաստատող փաստաթղթերը թուրքացուած են, շատ հեշտ կը լինէր գնահատել դրանք եւ հետեւել գրանցամատեաններում արուած փոփոխութիւններին եւ սեփականութեան իրաւունքը հաւաստող փաստաթղթերի բռնագրաւմանը՝ սկսած 1913թ.-ից: Այդ գոյքերի մի մասը գրանցուած է մասնաւոր սեփականատէրերի, միւս մասն էլ՝ պետութեան հաշիւներին. պետութեանը համար ներկայում իր տնօրինածը անվերապահօրէն նրանց սեփականատէրերին վերադարձնելու ոչ մի իրաւական խոչընդոտ չկայ: Եթէ իրաւատէրը չկայ, ապա կարելի է պայմաններ ստեղծել, որպէսզի դրանք տուժող հասարակութեան հաստատութիւններին փոխանցուեն[10]:

Մասնաւոր անձանց ձեռքում գտնուող ունեցուածքի վերադարձի կամ դրա փոխհատուցման հարցում կարող են տարբեր իրավիճակներ առաջանալ, քանի որ դրանք բռնագրաւման կամ ձեռքբերման

տարբեր եղանակների արդիւնք են: Զաւթման մեխանիզմներից մէկը մահմեդական ընտանիքների կողմից հայ երեխաների (որք մնացած, ընտանիքը կորցրած) բռնի որդեգրումն ու բռնի իսլամացումը հայ աղջիկների հետ ամուսնութիւնն էր, ինչին հետեւում էր նրանց ընտանիքների հարստութեան իւրացումը[11]: Գոյքի գաւթման այդ մեխանիզմի գոյութիւնն է, որ մարդկանց մղում էր մահուան ճամբորդութեան հանուած հայերի շարասիւններից ընտրել հենց հարուստ ընտանիքների երեխաներին, աղջիկներին ու կանանց՝ ընդհուպ մինչեւ միմեանց հետ կուռելով նրանց համար: Հայերին փրկելու պատմութիւններն էլ սրա հետ են կապուած: Որոշ գոյքեր ուղղակի խլուել են, մի մասը պետութիւնից է ձեռք բերուել, մի մասն էլ կեղծ փաստաթղթերով անվանափոխուել են[12]: Սրանով է պայմանաւորուած գոյքերի վերադարձի կամ փոխհատուցման հետ կապուած խնդիրների բազմազանութիւնը:

Աւերեսումը բարոյական վարքագիծ է: Հարկաւոր է զարգացնել բարոյական արժէքները: (Թուրքական-իմք.) հասարակութեան բարոյականութիւնը զարգացել է այնպիսի համատեքստում, երբ կրթութեան եւ օրէնքների միջոցով քողարկուած են պատմական փաստերը: Ընտանիքը բռնի ամուսնութեան միջոցով հիմնած, տնտեսութիւնը թալանով կառուցած, հարեւանին սպանելով աներեւակայելի հարստութեան տիրացած մարդու

բարոյականութիւնը՝ 1915թ.-ի Հայոց ցեղասպանութեան համատեքստում ձեւաւորուած բարոյականութիւնը վերականգնելը (ուժաբիւտացնելը) չափազանց կարեւոր է: Ակնյայտ է, որ այդ բարոյականութիւնը այսօրուայ մեր ունեցած բոլոր խնդիրների աղբիւրն է: Քանի որ նման բարոյականութեան առկայութեան պայմաններում որեւէ հարցում արդարութիւն ակնկալելը միայն խաբկանք կը լինի: Քայքայումն անխուսափելի է: Այսօր, դրա հետեւանքները մեր աչքի առջեւ են: Պէտք է ձեռքբերուել նման բարոյականութիւնից ու վարքագծային կաղապարներից: Փոխհատուցումն այս առումով կը կատարի թերապիայի գործառոյթ, կ'ապաքինի հասարակութեանը:

Պէտք է վերջ տալ այն բանին, որ մարդիկ պղտոր աչքերով նայեն դէպի իրենց հայրենիքը, մարդիկ պէտք է կարողանան վերանայել իրենց այդ հայեացքը եւ ճշմարտութեանը նային պարզ աչքերով: Պէտք է մոռանալ, որ դա մարդկային պարտք է: Հրաժարուենք ուրացումից եւ համոզուած լինենք, որ արդարութեան վերականգնումը մեզ բոլորիս՝ հասարակութեան բոլոր հատուածներին կ'առողջացնի: Չմոռանանք նաեւ, որ լուսթիւնը խախտելը, իրապէս այդ հիմնախնդիրների մասին խօսելը, արդարութեան վերականգնման ջանքերը եւ այդ ամէնի՝ մարդկային վարքագիծ լինելու համոզմունքը խնդրի լուծման իրական բանալին է:

1. William A. Schabas, Uluslararası Ceza Mahkemesine Giris (Ուիլիամ Շաբաս, Մուտք Միջազգային քրեական դատարան), անգլերէնից թուրքերէն թարգմ. Gulay Arslan, Cambridge University Press, AI Turkiye Subesi, 2004, էջ 60:

2. 1914թ Յունուարին Ձեշմէի քայմաքան (կառավարիչ) Եշանակում ձիւմի Ուրանը բացայայտում է էթնիկ գտումների ծաւալը: Նա իր յուշերում առանձնապատուկ տեղ է յատկացնում Ձեշմէի ու շրջակայքի ահաբեկութիւններին:

«Ձեշմէի քայմաքանութիւնը ստանձնելու առաջին օրերիս՝ շատ զգուշաւոր մի քանի յոյն ընտանիքի յանկարծակի Ձեշմէից հեռանալու ու դէպի կղզիներ գնալը Ձեշմէի յոյների մօտ մեծ վախ էր առաջացրել եւ մի քանի օրում Ձեշմէում եւ շրջակայ գիւղերում սկսուած յոյների արտագաղթը անմիջապէս ամենուրեք տարածուել ու անգուպելի էր դարձել: Նոյնիսկ որոշ յոյներ, որ իրարանցումից՝ տնից դուրս գալու պահին շատ քիչ իրեր էին վերցրել, քանի որ նախաժամանակում սպասում էին, յանախակի տուն վերադառնալով նոր իրեր էին վերցնում իրենց հետ... Ի դէպ, այս գաղթը յանկարծ միջպետական ուշադրութեան արժանացաւ եւ երբ դեռ դրա դէմը չէր առնուել, Ստամբուլից Ձեշմէ էր ժամանել հետախուզող խառը մի պատուիրակութիւնը... Պատուիրակութիւնը Ձեշմէում բազմաթիւ յունական տներ էր այցելել, բազմաթիւ յոյների հետ էր հանդիպել... զիստաւոր թարգմանիչներից մէկը՝ կարծես արտագաղթի համար մի պատճառ փնտրելով, մի պահ դէպի ինձ շրջուեց ու մեղադրական հայեացքով սասց՝ «Մեմի որբի՛ վաստ չգտանք, բայց աղօթելով ֆառատուն հազար մարդ չի գնայ»: Այո, դա այդպէս է: Ճիշտ է, որ աղօթելով ֆառատուն հազար մարդ հենց այդպէս չի թողնի-գնայ, դրան պէտք է հաւատալ... մահուան հանդէպ վախն ահա այսպէս մի ամբողջ գիւղաբնակչութիւն էր հանում եւ մարդկանց անգուպելի ու անկասելի էր դարձնում: Ահա այսպէս սկսուեց եւ այսպէս աւարտուեց յոյների արտագաղթը, որը մի քանի շաբաթում ամբողջովի փոխեց Ձեշմէի դէմքը»:

Հիւմի Ուրան, Իմ յուշերը, 1959թ, էջ 68-71:

3. Յայտնի է, որ երիտթուրքերի կազմակերպած սպանութիւնները հաւաքական աջակցութիւն են գտել: «Իթթիհադ վէ թերաֆիի» պարագլուխներից Հալիլ Մեմբեշէն՝ «Անատոլիայում այս տեղահանութեան հետ չառնչուած թուրք գրեթէ չկայ» ասելով իրականութիւնը էր արտացոլում. տե՛ս Թաներ Ահմադ, Մարդու իրաւունքները եւ հայկական հարցը, Իմ գէ. հրատարակչութիւն, 2014թ, էջ 527:

4. Հայերէնը՝ (<http://armedia.am/?action=Exclusive-what=show&id=1247176618&lang=arm&lang=arm>), թուրքերէնը՝ <http://devrimcikaradeniz.com/dedemin-yaptiklarindan-sorumlu-degildir>

5. «Լեմկիների համոզմամբ՝ ցեղասպանութիւնը երկու կարելի փուլից է բաղկացած: Նրա խօսքերով՝ «Յեղասպանութիւնը բաղկացած է երկու փուլից. Ենչուած խմբի ազգային կերպարի ոչնչացում եւ Ենչող ազգի ազգային կերպարի պարտադրում: Այս

ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ԱՌԵՐԵՍՈՒԻ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆԸ

Շարունակում էք 12-էն

հարկադրումն իրականացում է կա՛մ ննջուող խմբի նկատմամբ՝ բոլորատեսակի նրան մնալ իր [ապրած] երկրում, կա՛մ [նրանց] հեռացումից եւ տարածաշրջանի ննջող ազգի ներկայացուցիչների կողմից գաղութացումից յետոյ միայն՝ տուեալ տարածքի նկատմամբ»: Այսինքն, Լեմկիների համար ցեղասպանութիւնը ֆիզիկական ոչնչացումից այն կողմ գնացող մի բան էր եւ ներառում էր նաեւ գրոհի ենթարկուած խմբի ու նրա հողերի ազգային-մշակութային առանձնայատկութիւնների ոչնչացումը».

6. 2014-ի նախագահական ընտրութիւնների շեմին՝ «Չանգայան ծանր բեռ է վերնագիրը կրող իր յոյուածում, բուրդ հեղինակն անդրադարձել է բռնագրաւուած նախագահական պալատին, որտեղ նա մասնաւորապէս ասում է. «Քասապեանների ընտանիքը ո՛չ Չանգայայի պալատը, ո՛չ էլ այլ գոյքերը ոչ մէկին չի վանառել: Ունեցուածքը բռնագրաւուել, իրացուել է: Նրանց է պատկանել ոչ միայն Չանգայայի առանձնատունը, այլ նաեւ Քեչիորէնում գտնուող ամառանոցը, որը գաւթել է Անգարայի Ուլուս թաղամասում խորհրդարանի շէնքը կառուցած Քոչ ընտանիքը... Այդ առանձնատան պատմութիւնը, ինքնութիւնը որեւէ վայրում նորից կենսի կոչելու խոստումն եմ ես ակնկալում նախագահի թեկնածուներից: Միւս երկուսից յոյս չունեմ բայց գուցէ դա անի նախագահի «մեր սիրելի՛ թեկնածու Սալահէդդին Դեմիրքաշը»: Հեղինակի շատ հեռու չգնացող այս թեթեւ ակնարկը, այնուամենայնիւ, Եփրատի միւս կողմի հետ կապուած ոչինչ չի ասում: Չեմք էլ լսել, որ նման բան ասած լինի: <http://www.bianet.org/biamag/diger/157141-cankaya-tasinmasi-agir-yuk>

7. Չանգայայի առանձնատունը, որը Մուստաֆա Քեմալից սկսած հանդիսացել է Թուրքիայի Հանրապետութեան նախագահների նստավայրը, գտնուում է մայրաքաղաքի սրտում՝ բարձունքի վրայ: Հանրապետութեան այս խորհրդանիշը նախքան Առաջին համաշխարհային պատերազմը պատկանել է Քասապեանների մեծահարուստ հայ ընտանիքին, որը բռնագրաւուել է: Ինչ անյաջողութիւն մեծամասամբ հայերի եւ միւս ոչ մուսուլման փոքրամասնութիւնների ունեցուածքի բռնագրաւման արդիւնքում հիմնուած պետութեան համար: Դժուար է այն որպէս յանցանք չտեսնել. Սակայն սա, անշուշտ, նաեւ անձեռնմխելիութեան զգացումի նշան է: Ինչեւէ, այս անհանգստացնող պատմութիւնը շրջապատում է լաւ հասկանալի լուրքեան պատով. տե՛ս Laure Marchand-Guillaume Perrier, *Turkiye ve Ermeni Hayaleti*, (Թուրքիան եւ հայկական ուրուականը), Ելքիշիմ հրատարակչութիւն, էջ 189-197:

8. 1915թ Հոկտեմբերի 7-ին Սիվերէկից (Սեւավերակ) մի խումբ մուսուլմանների ներքին գործերի նախարարութեանն ուղարկած հեռագրում հաղորդում է, որ Ցեղասպանութեան սկզբնական օրերին՝ կառավարութեան համաձայնութեամբ նրանք բռնի ամուսնացել են 14, 15 տարեկան դեռմե (իսլամացուած) աղջիկների հետ, որոշ ամուսնութիւններ արուել են երեք կամ չորս ամիս առաջ եւ այս պահին նրանցից շատերն ամենայն հաւանականութեամբ յղի են: Հեռագրի վերջում Ցեղասպանութեան արդիւնքում կանանց տիրացած մարդկանց մի ամբողջ ցուցակ կայ:

Անունները Ջամիլի Քեբիր թաղամասից՝ Էրուզեր Բուհարալը Օսման, Հաշան Չելէրի թաղամասից՝ Մահմուդ բին Մեհմեդ, Մահալլէի մեզֆիւրէից՝ Մուսթաֆա բին Մեհմեդ, Մահալլէի մեզֆիւրէից՝ Մեհմեդ բին Էլեուր, Հաջի Օմեր թաղամասից՝ Բեհի շէյխ Ջիւլֆիբար, Բեհիր Մուլա օղլի Բեհիր, Երուան օղլի Հուսէին, Քիւլաքի թաղամասից՝ Բրանգազ Հուսէին, Քիւլաքի թաղամասից՝ Ալի բին Մեհմեդ, Քարո Սալիհ, Դեռեմեզի շէյխ Յուսուֆ, Ջամիլի Քեբիր թաղամասից՝ Մահմուդ բին Սիմ օղլի Մեհմեդ, Մահալլէի մեզֆիւրից՝ Էլեուր Սաֆո, Ջալիլ թաղամասից՝ Քեռրիֆոզադէ Մեհմեդ, Քյուլաքի թաղամասից՝ շէյխ Մուսթաֆա բին Հուսէին, Հաջի Օմեր թաղամասից՝ Ալի բին Մուսա, Ջամիլի Քեբիր թաղամասից՝ Հաջի Օմեր, Ահմեդ բին Բեհիր, Չելերի թաղամասից՝ Ալի բին Մուսա, Ջամիլի Քեբիր թաղամասից՝ Մուսթաֆա բին Հաջի Արիդին, Ահմեդ բին Բեֆո եւ Քիւլաքի Բէյ: Տե՛ս Թաներ Աֆչամ, Հայերի բռնի իսլամացումը... էջ 210-211

9. Henry Theriault, "21nci Yuzyil T3rkiye'si igin Ermeni Soykirimi Sorunu: Sorumluluk ve Cuzume Yonelik Tazmin" Oncesi ve Sonrasi ile 1915 Inkar ve Yuzlesme icinde, ed. S. Cetinoglu, M. Konuk, Կոպա Yayinevi 2012. (1915-ից առաջ եւ յետոյ, ժխտում եւ առերեսում):

107 Իրաւատէրերի չյայտնուելու դէպքում, նիւթական փոխհատուցումներից հիմնադրամների ստեղծումով կարելի է մեխանիզմներ մշակել տուժող հասարակութեան վերականգնման, կողմնորոշման, եւ վերադարձի խթանման, կրթական եւ մշակութային հաստատութիւնների նորոգման, հրատարակչական օրգաններին... եւ այլ ոլորտներին աջակցելու նպատակով:

11. «Ուշադրութեան արժանի է մուսուլմանների կողմից հայ երեխաների որդեգրումը իրախուսելու համար մշակուած նախանձելի մի մեխանիզմ, որը կարելի է բնութագրել որպէս «ձուլումը իրարմէն ծրագիր»: Այդ մեխանիզմի էութիւնն այն է, որ որդեգրուած երեխաները եւ ամուսնացած աղջիկները համարուելու են իրենց ընտանիքների ժառանգորդներ: Այսպիսով, հայ երեխաներին իրենց տանն ընդունող կամ հայ աղջիկների հետ ամուսնացած մարդիկ ինքնաբերաբար այդ երեխաների հարստութեանն են տիրանալու: Այդ առումով շատ ուշագրաւ է 1915թ

Օգոստոսի 11-ին Լեւալ գոյքի յանձնաժողովին յղուած հեռագիրը: Այնտեղ հետեւեալն է ասում. Կրթութեան եւ դաստիարակութեան հարցերի կարգաւորման նպատակով կրօնափոխ եղած եւ ամուսնացած երեխաների օրինական ներկայացուցչին (պատասխանատուն) է անցնում այդ երեխաների անձնական ունեցուածքը եւ նրանց ընտանեկան ժառանգութիւնը: Տե՛ս Թաներ Աֆչամ, Հայերի բռնի իսլամացումը... էջ 203:

12. Իրաւարան եւ նախկին պատգամաւոր Մեհմեթ Ֆէյյատի պատմած՝ իր տարածաշրջանի վերաբերեալ իրողութիւնը բաւական խօսուն է՝ «Մահուան նախապարհին ընկածների՝ բռնագաղթի ենթարկուած հայերի անշարժ գոյքերը, հողատարածքները, տեղահանութիւններից յետոյ պետական գանձապետարանի կողմից մաս առ մաս վանառքի են հանուել: Քանի որ իմ հայրը այդ տարիներին փող է ունեցել, մեր այսօրուայ հողատարածքը գանձապետարանից գնել է 1926թ, երբ ես փոքր երեխայ եմ եղել: Այն ժամանակ բոլորը ծաղրել են հորս՝ տեղացի ֆէռդալները, բէյերը, շէյխերը, սէյիդները... «Մի՞թէ գանձապետարանին պատկանող տարածքի համար փող կը տրուի, գաւթի՛ վերջանայ», ասելով: Որոշ ժամանակ անց գաւթողներն այդ տարածքների տէրը դարձան: 1940-ականներից յետոյ, կաշառք տալով, բոլորն էլ իրենց անունով գրանցեցին՝ պատճառաբանելով, որ դրանք իրենց հորերից, կամ պապերից են մնացել: Այդ տարածաշրջանում, գանձապետարանին պատկանող ու անտէր մնացած ոչ մի անշարժ գոյք փողով չի գնուել, եթէ կայ անգամ՝ շատ հազուադէպ է: Հողերը կա՛մ բռնագրաւուել են, կա՛մ էլ դատական կարգով հաշուառման են արուել: Ոչ ոք հորից չի ժառանգել, հայերից են մնացել այդ անշարժ գոյքերը (էջ 20-21): Վանում հայերից մնացած գանձապետարանի հողերն ամբողջութեամբ թալանուեցին դատական կարգով: Ինչպէս արդէն նշեցի, բոլորն էլ «հորիցս, պապիցս է մնացել» ասելով՝ բռնագրաւուած սեփականութիւնն օրինականացրին: Քիմիաս Քարթալի գերդաստանն էլ 1920-ականներին Վան է գաղթել Ռուսաստանից: Նրանք Ռուսաստանի քրդերից են: Բիրիֆան գերդաստանին պատկանող այդ աշիրեթի մի մասն էլ Կարս է գաղթել: Իսկ 1950-ականներին Քիմիաս Քարթալը եւս իր յափշտակած գանձապետարանի հողատարածքները (պետութեան բռնագրաւած հայերի գոյքերը) դատարանի միջոցով, պապից ժառանգելու պատճառաբանութեամբ, գրանցեց իր անունով»: Տե՛ս Mehmet Feyyat, *Halkin Savcisi, Scala Y* (Մեհմեթ Ֆէյյատ, Ժողովրդի դատախազը), 2012թ, (էջ 231):



Armenian National Philharmonic Orchestra
Concert of Remembrance

Eduard Topchjan, Artistic Director and Principal Conductor
 Anush Nikoghosyan, violin

KHACHATURIAN Spartacus Suite
MANSURIAN Violin Concerto
SHOSTAKOVICH Symphony No. 5

The worldwide ambassadors of Armenian music will perform for the first time at Walt Disney Concert Hall. Don't miss this very special evening.

Tue MAY 12 7:30pm



I REMEMBER AND DEMAND

Directions & Parking Info: Walt Disney Concert Hall is located in Downtown Los Angeles at 151 S. Grand Avenue. On-site parking is available for \$9.

WALT DISNEY CONCERT HALL

Tickets: \$33-\$125
 LAPhil.com | 818.491.8989 The Armenian
 323.850.2000 | 818.265.0506 ticketmicket.com

LA PHIL

Programs, artists, prices and dates subject to change

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ ՇԱՐՎՈՐԾՈՒՄ Է՝ ԾԱԾԿԵԼՈՒ ՅԱՍԱՐ ՀՅՈՒՄՆԻՇԻԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՌԴ-ԻՆ» ԱՐԱՔՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Մեր գրողակիցն է 1994-97 թռակաճաններին Հայաստանի նախագահի առաջ խորհրդական, ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Ժիրայր Լիպարիտեանը



- Պարոն Լիպարիտեան, 100-ամեայ տարեկիցի առիթով Հայոց ցեղասպանութեան հարցը միջազգային ասպարեզում յաւուր պատշաճի ներկայացնելու խնդրով ՀՀ Առաջին նախագահը բաց նամակով դիմեց նախագահ Սերժ Սարգսեանին՝ ներկայացնելով իր առաջարկները հռչակագրի հիման վրայ շրջաբերական ուղերձ կառուցելու շուրջ: Այն դեպքում, երբ նա աւելի վաղ քննարկատել էր Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարեկիցի համահայկական հռչակագիրը: Այն խորհրդակցական յանձնաժողովը, որը պետք է ստեղծուէր, ըստ Տէր-Պետրոսեանի, պետք է ընդգրկէր նաեւ Ձեր մասնագիտական կարծիքը: Ինչպէ՞ս էք գնահատում ՀՀ իշխանութիւնների կողմից կազմուած հռչակագիրը, որը, ըստ Տէր-Պետրոսեանի, խայտառակ փաստաթուղթ է:

- Ցեղասպանութեան հարցում Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշումը վերջնականապէս յստակեցուած է վաղուց: «Անկախութեան մասին հռչակագրի» 11-րդ կէտն է դա, որում յստակ ասուած է. ՀՀ-ն աջակցում է Ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին: Դրանից անդին արուած քայլերը, անշուշտ, հակասում են այդ հռչակագրի տարրին ու ոգուն: Այսինքն՝ այն, ինչ Ցեղասպանութեան 100-րդ տարեկիցի հռչակագրով ասուել է, փոխում է Ցեղասպանութեան դերը մեր արտաքին քաղաքականութեան մէջ: Ուրեմն՝ եւ կարականապէս փոխում է մեր արտաքին քաղաքականութեան հիմքերը:

- Ըստ Ձեզ՝ Տէր-Պետրոսեանի առաջարկներն այն հիմքն են, որի վրայ կարելի է կառուցել Ցեղասպանութեան հարցում ՀՀ-ի վերջնական դիրքորոշումը:

- Շարունակելով առաջին հարցի իմ պատասխանը՝ նշեմ, որ առաջին նախագահը հենց դա է պարզաբանել. մեր արտաքին քաղաքականութեան հետ հակասութեան հարց կայ: Դժուար թէ հնարաւոր լինի հակառակուել այդ տրամաբանութեանը:

- Լեւոն Տէր-Պետրոսեանը նաեւ նշել է մի քանի կարեւոր, սակայն ընդհանուր մտահոգութիւններ այդ կապակցութեամբ: Ես լիովին համաձայն եմ Ցեղասպանութեան հռչակագրի վերանայման նպատակով Տէր-Պետրոսեանի առաջարկած հիմքերի հետ:

Այստեղ չեմ ուզում մանրամասն ներկայացնել այն բոլոր վտանգները, որոնք այս փաստաթուղթը ներկայացնում է, սակայն անհրաժեշտ է նշել հետեւեալը: Մենք մեր հանրապետութեան անկախութիւնը կառուցեցինք՝ պայքարելով Ռուսաստանի ստեղծած պարտադրած Սովետի ու նրա տիրապետութեան դէմ: Իսկ մենք այնպէս ենք խօսում ու այնպիսի քայլեր ենք ձեռնարկում, որ կարծես թուրքիայից ենք բաժանուել:

Արտաքին քաղաքականութիւն ենք մշակում, որը ձեռնոց է նետում թուրքիային, երբ Ռուսաստանն է, որ սպառնում է մեր անկախութեանը, ու մենք ինքնիշխանութիւնը

փոքր քայլերով յանձնում ենք Ռուսաստանին: Ցեղասպանութիւնն ու նրա հարիւրամեակը շահագործուած է՝ ծածկելու համար այն, ինչ կատարուած է զուգահեռաբար: Մեր քաղաքական մտածելակերպը, հետեւաբար՝ նաեւ այդ հռչակագրի իմաստն ու հետեւանքները չենք կարող հասկանալ ու գնահատել, եթէ ինքնորոշման կորստի ու Ցեղասպանութեան տրուած դերի միջեւ օրգանական կապը չտեսնենք:

- Տէր-Պետրոսեանի առաջարկները շրջանառութեան մէջ դրուեցին ներքաղաքական կեանքի բաւակային անկայուն փուլում, եւ կարծիք կայ, որ նա՝ կանխատեսելով իրադարձութիւնների նման ընթացքը, փորձեց կոծկել իր պարտութիւնը ներքաղաքական բեւեռում: Այս մասին ի՞նչ կարծիք ունեւք:

- Եթէ ես այն կարծիքին լինէի, որ ներքաղաքական բեւեռում պարտութիւն եմ կրել ու կարիք ունեմ նոր ուժ ներդնելու իմ կազմակերպութեան մէջ, չէի անի մի յայտարարութիւն, որն այնքան էլ պոպուլիստական չէ ու վստահաբար պիտի նոր քննադատութեան ենթարկուի: Սա է իրականում ենթատեքստը: Տէր-Պետրոսեանը միշտ էլ հետեւողական է եղել այս հարցում: Հնարաւոր է, որ ներքաղաքական նոր կացութեան մէջ ինքն աւելի հանգիստ է զգում իրեն՝ այս հարցին մանրամասն ու հիմնաւորապէս անդրադառնալու համար:

- Արդէն հիմնականում երեւակուած են այն բոլոր միջոցառումները, որոնք Հայաստանը պատրաստուած է իրականացնել Ցեղասպանութեան 100-ամեայ տարեկիցի գլխաւոր միջոցառումը՝ Ապրիլի 24-ին ընդառաջ: Միջոցառումները, հռչակագիրը, Ցեղասպանութեան գոհերի սրբադասման կարգը, այս ամէնն ա՛յն էր, ինչ Դուք էիք սպասում: Այս տարի եւ ընդհանրապէս այս հարցում ինչի՞ վրայ պետք էր դնել շեշտը:

- Սպասում էի, որ արուէին նոյն գործերը, ինչ միշտ էլ արել ենք, միայն թէ՛ աւելի մեծ մասշտաբով: Կարծես այդպէս էլ ստացուած է: Կան, իհարկէ, նորութիւններ: Օրինակ՝ Ռուբէն Վարդանեանի եւ Նուբար Աֆէեանի ծրագրերը: Յանձնաժողովի հռչակագիրը նորութիւն էր, թէեւ զարմանալի չէր: Մենք սիրում ենք հռչակագրերը: Սակայն ես պատրաստ չէի ընթերցելու մի փաստաթուղթ, որն ամբողջում է արտաքին քաղաքականութեան բնագաւառում արդէն մի քանի տարի շարունակ ընթացող մեր անկախութեանը սպառնա-

ցող վտանգաւոր փոփոխութիւնները: Ձոհերի սրբադասման հարցը նոյնքան վտանգաւոր չէ, որքան այդ հռչակագրի դրոյթներն են, սակայն նոյնքան մտահոգիչ է:

Սրբադասումը մտահոգիչ է, որովհետեւ եկեղեցականացում է մեր պատմութիւնը, կրօնականացում՝ Ցեղասպանութիւնը: Պատմութեան ընկալումն ու մեկնաբանութիւնը կարեւոր գործօններ են մեր ներկայի ընկալման ու ապագայի կերտման տեսակէտից: Կայ նաեւ մի այլ հարց: Ցեղասպանութեան գոհերի սրբադասմամբ մենք յետմահու քրիստոնեայ Առաքելական Հայ եկեղեցու դաւանանքն ու ծէսն ենք պարտադրում հայ գոհերին, որոնք պատկանում էին կաթոլիկ դաւանանքին ու տարբեր ձեւով էին ընկալում սրբացումը, բողոքական հայ գոհերի, որոնք ընդհանրապէս սրբերի չէին հաւատում, եւ այլ հայերի, որոնք եկեղեցուց կամ ընդհանրապէս կրօնական հաւատից հեռու էին:

Սրբացումը կարծես առիթ է տալիս եկեղեցուն՝ խուսափելու մեր այսօրուայ պատասխանատուութիւններից: Իմ կարծիքով՝ գոհերի նկատմամբ աւելի մեծ յարգանք ցոյց տուած պիտի լինէինք, եթէ այսօր մեր եկեղեցին սովորական հոգածութիւն ցուցաբերէր Հայաստանի աղքատներին, քաղցածներին, որբերին: Իսկ եթէ հարցը 100-ամեակի ծրագրերի շեշտադրութեան մասին է, աւելի կարեւոր եմ համարում Ցեղասպանութեան կապակցութեամբ հիմնադրել գիտահետազոտական կենտրոններ, պատրաստել գիտնականներ ինչ սերունդ, որը կը կարողանայ միջազգային մակարդակով տէր կանգնել մեր պատմութեանը՝ ամէն տեղ, եւ մանաւանդ՝ Հայաստանում, ունենալ համապարփակ ծրագիր, որը կարող է համակարգուած ձեւով, գիտական հիմքերով ու քաղաքական հաստեղծութեամբ հակադարձել թուրքիայի ժխտողական քաղաքականութեանը:

Հարիւրամեակը նաեւ առիթ պէտք է լինէր խորապէս քննելու այն բոլոր պատճառները, որոնք մեզ հասցրին ցեղասպանութեան, եւ այն պայմանները, որոնք մեզ հասցրին այն վիճակին, որի դէպքում ցեղասպանութիւնը հնարաւոր դարձաւ: Սակայն մենք աւելի հանգիստ ու բաւարարուած ենք զգում մեզ, երբ օտարից խնդրում ենք Ցեղասպանութեան ճանաչում:

Կարծես թէ դա աւելի հարագատ է մեր քաղաքական մշակոյթին: Սակայն չենք անդրադարձել, որ նման մօտեցումն ունի իր ծանր ազդեցութիւնն այսօրեայ մեր քաղաքականութեան վրայ: Կամ էլ նախընտրում ենք նման մօտեցում՝ առկայ իրավիճակի պատասխանատուութիւնից խուսափելու համար: Այս թերի գործունէութիւնը, ըստ իս, բացատրուած է նրանով, որ սովորութիւն ունենք անելու այն, ինչ անհրաժեշտ է մեզ լաւ զգալու եւ ոչ անպայման գործը ճիշտ նպատակին ծառայեցնելու համար: Կարծում եմ՝ 100-ամեակն իմաստաւորելու լաւագոյն ձեւը պիտի լինէր Հայաստանի ժողովրդի նկատմամբ մի քիչ յարգանք ցոյց տալը, վերաբժխեալութիւնը մեր պետականութեան իմաստը՝ այդ ժողովրդի համար արժանապատիւ կեանք ապահովելով: Ի՞նչ իմաստ

կամ լեզուի մոլորութիւն ունի թուրքիային հայհոյելն ու նրանից այս կամ այն պահանջելը, երբ չենք կարողանում մեր ունեցածն արժեւորել՝ սկսելով մեր ժողովրդից: Ձէ՞ որ մեր այսօրուայ Հայաստանի ժողովրդի մի շատ կարեւոր մասը այդ նոյն Ցեղասպանութիւնը վերապրողների սերունդն է: Այդ մարդիկ նրանք են, ովքեր այսօր չեն կարողանում իրենց ընտանիքների հիմնական կարիքները հոգալ:

- Պարոն Լիպարիտեան, լարուած է իրավիճակը հայ-ատրպէյճանական սահմանին եւ դարաբաղատրապէյճանական հակամարտ գործերի շփման գծում: Հայաստանը դարձաւ ԵՏՄ անդամ, որի վերաբերեալ պաշտօնեաները յայտարարում էին, թէ ԵՏՄ անդամակցութիւնը ՀՀ-ի անվտանգութեան երաշխիքն է: Այսօր մենք հակառակ գործընթացի ակամատեսն ենք: Այս ուղղութեամբ ի՞նչ ելք էք տեսնում: Ինչպէ՞ս ստեղծել այլընտրանք, որի մասին խօսում են շատերը:

- Նախեւառաջ՝ մենք որեւէ երաշխիքի համար ԵՏՄ-ին անդամագրուելու կարիք չունէինք: Ռուսաստանի հետ ունենք պայմանագիր եւ ՀԱՊԿ անդամ ենք: ՀՀ-ի անվտանգութեան հետ ԵՏՄ-ի կապն այլ հարթութիւնում է: Լաւագոյն պարագայում այնտեղ ասուել է՝ եթէ չմիանաք ԵՏՄ-ին, սա կամ նա կը լինի: Ուրեմն՝ սա սովորական շանտաժ է ու սպառնալիք, եւ ոչ՝ անվտանգութեան երաշխիք: Երկրորդ. Ռուսաստանի հետ կապուած մեր երաշխիքները վերաբերում են ՀՀ տարածքին եւ ոչ Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեանը կամ նրա հակալիզի ներքոյ գտնուող տարածքներին:

Երրորդ. նոյնիսկ այդ իսկական երաշխիքները պայմանական են եւ ոչ աւտոմատ կամ պարտադիր: Բացարձակ երաշխիք որեւէ տեղ չկայ: Ենթադրենք՝ Հայաստանի տարածքը յարձակման է ենթարկուած, եւ Հայաստանը դիմում է Ռուսաստանին կամ ՀԱՊԿ-ին: Նրանք խորհրդակցում են, եւ յետոյ ռուսները որոշում են՝ որեւէ բան անել կամ ոչ:

Եթէ պատասխանը դրական է, որոշելու են, թէ ինչ են անելու: Իսկ այսօր ՀՀ-ի տարածքը ենթակայ է յարձակման, ու ՀՀ-ն չի դիմում նոյնիսկ այդ պայմանագրի պայմաններից օգտուելու համար: Ինչ վերաբերում է այլընտրանքին, այո, ես այդ հարցը բարձրացրել եմ:

Եթէ չեմ սխալուած՝ 1993-ին էր, երբ, բացի նախագահականից, մի որոշակի ժամանակահատուած նաեւ Արտգործնախարարութիւնում էի, ինձ համար յստակ դարձաւ հետեւեալը, որի մասին այն ժամանակ խօսեցի մի հարցազրոյցում: Հայաստանի արտաքին քաղաքականութեան նպատակը պիտի լինի այլընտրանքների ստեղծումն ու պահպանումը:

Մենք դրա հիմքերը դրեցինք ու աշխատեցինք այդ ուղղութեամբ: Իսկ 1998-ից ի վեր ամէն բան արուել է նման այլընտրանքն անկարելի դարձնելու ուղղութեամբ: Եւ այժմ ասում ենք, թէ այլընտրանք չունենք: Հիմա էլ տակաւին կարող ենք քայլեր ձեռնարկել, որոնք մեզ երկրորդ շանտ տան անկախութիւնն արժեւորելու համար:

ԹՈՒՐՔԻԱՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ՉՈՒՆԻ, ՈՐՔԱՆ ԾՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿՈԾԿԻ ԱՌԱԻԵԼ ԿԸ ԽՐՈՒԻ ԾԱՅԻՃԻ ՄԵՋ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Թուրքիան որքան ճիգ ու ջանք թափի, իրեն գերմեծերի գիրկը նետի, քաղաքական գործիչներ եւ պատմաբաններ կաշառի, այլ եւ այլ սաղորիչ ծածուկ գործերի ձեռնարկի, ցեղասպանութեան ճանաչման ճամբին խուժ ու պատնէշ դառնայ, հերքման ստահոտ տեղեկութիւններ տարածի, սպառնալիքներ կարգաւ արդարադատ երկրների եւ հեղինակաւոր անձանց հասցէին, Հայաստանը տնտեսական շրջափակման վիճակում պահի, Ատրպէյճանի թիկունքին կանգնած գիւտորական ծառայութիւններ մատակարարի, սրանք բոլորը անօգուտ եւ ապարդիւն են, քանի որ երկրներ ստոյգ տեղեկացուած՝ փաստերի հիման վրայ ճանաչում եւ դատապարտում են պետականօրէն ծրագրուած եւ գործադրուած ցեղասպանութիւնը օսմանեան երիտթուրքերի միջոցով, սակայն հետագայ թուրքիոյ հանրապետութեան յաջորդական իշխանութիւնները չքմեղանքի քաղաքականութեամբ ուրանում են կատարուածը, դեռ պնդելով հայերն են թուրքերի նկատմամբ ցեղասպանութիւն գործել: Ինչ ցիւնիկ յանցանքերի պաշտպանութիւն:

Թուրք իշխանաւորներ՝, եթէ ձեռնարկուած իշխանութիւնը ամենախոր ընդերքում նոյնիսկ թաքցնէք, կամ նոյնիսկ երկնքի ծիր կաթին բարձրանաք, որին՝ երկնքին, երբեք ու երբեք արժանի չէք, քանի դեռ ձեր եղեռնագործ պապերի արարքը չէք դատապարտել, որոնք աստղահամար անմեղ մարդկանց արիւններ են թափել: Նրանք միայն հայերի արիւն չեն թափել, այլ տարբեր ժողովուրդների դժբախտութեան պատճառ են դարձել՝ հրաշք անձնաւորութիւններ, ընտանիքներ, սերունդներ ոչնչացնելով: Ջարդարարները թուրքիան միատարր դարձնելու համար կոտորել են քրիստոնեաներին, անագորիւնօրէն ցեղասպանութիւն գործել:

Թուրք իշխանաւորներ՝, որքան սար ու ձոր ընկնէք ձեզ արդարացնելու համար առաւել տատակներով էք պատելու ձեզ եւ ձեր ժողովրդի ապագան էք պղտորում վարկազուրկ դարձնելով, քանի շուտ է առերեսուէք ձեր պատմութեան հետ, որպէսզի ժողովուրդների մօտ առաւել խայտառակ չլինէք, գիտեմ եւ լաւապէս ըմբռնում եմ ձեր անդրդուելի ստի կեցուածքը, յոյսեր կապելով որ հայերը պայքարից կը յոգնեն եւ կը հաշտուեն իրենց ճակատագրի հետ, շատ էք սխալուում, հայութիւնը իր բոլոր գաւակներով, քաղաքական կուսակցութիւններով, հարիւր տարուայ անցելով ու պայքարով աննկուն ու կուռ հաւատքով ու համոզումով շարունակելու են արշաւը հասնելու արդարութեան, որին նաեւ միանում են թուրք առաջադէմ մտաւորականութիւնը եւ ժողովրդական կազմակերպութիւնները:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը խեղճ ու ողորմելի վիճակում չենք ոգեկոչում, այլ՝ յարութիւն առած այդ կործանիչ ողբերգութիւններից ծառի նման կանգուն, սաղարթախիտ ու պտղատու չիշում ենք մեր նահատակներին, պայքարում եւ պահանջում ենք արդարութիւն: Հարիւր տարիներ, անցած տարիներ, բայց թարմ ու անժամանցելի տարիներ,

դեռ անդադրում ու անկոտրում ողջ հայութեամբ միատեղ շարունակուելու է կենդանի ու անմոռանալի պահելու յիշատակն ու պահանջատիրութիւնը հայ ժողովրդի մէկ ու կէս միլիոնից աւելի մեր քոյր ու եղբայրների, արդար ու անմեղ, հաւատարիմ ու Աստուածավախ, աշխատասէր ու գործունեայ գաւակների հայրենի տնից ու օրրարանից տեղահանութիւնը, կոտորածն ու ջարդը պետականօրէն կազմակերպուած, ծրագրուած ու հրահրուած մի ողջ ազգի ու ժողովրդի ցեղասպանութիւնը:

Ինչի համար այս ահասարսուռ մարդասպանութիւնը, հայասպանութիւնը ո՞ր մեղքի համար, ո՞ր յանցանքի համար, ոչ մեղք կար ոչ յանցանք, այլ անմարդկային նպատակներ, քրիստոնեայ հայերին վերացնել երկրի երեսից, նրա ունեցուածքը թալանել, կերտածն ու կռուցածը սեփականացնել, հայտագի կոթողները աւերել, տունն ու երկիրը բռնագրաւել փանթուրքիստ կառուցելու, ծաւալուելու դէպի միջին ասիական թրքախօս ու մուսուլման երկրները կայսերական նկրտումներով ու նպատակներով:

Յօդս ցնդեցին իթիհադատականների, թուրք մոլեռանդ իշխանաւորների երազանքները, հայը մնաց, ծիւրեր արձակեց, ծիւրերը սաղմերի վերածուցին, սաղմերը հաստաբես բունների, որոնք ի լուր աշխարհին պայքարի ու պահանջատիրութեան բռունցքները սեղմած ոչ թէ ի մահ թուրք ժողովրդի, այլ մարդասիրութեան նպատակներով պահանջուում է արդարութիւն՝ ցեղասպանութեան ընդունում, հատուցում եւ բռնագրաւուած հողերի վերադարձ, շատ մարդկային, շատ արդարադատելի եւ շատ տրամաբանելի:

Պայքարի ոգեպնդիչ արդիւնքները լսող՝ պարզ ու յստակ արձագանքները թուրքիայից, թուրք ժողովրդի մտաւորական դասի, հայոց ցեղասպանութիւնը ճանաչող մարդասէր կազմակերպութիւնների մեզ մղում են առաւել աշխուժացնել եւ թափ տալ պահանջատիրութեան աշխատանքները պետականօրէն եւ ժողովրդականօրէն: Մեր դատը արդար է, անհերքելի ու անուրանալի:

Մեր հարիւրամեայ պայքարում շատ-շատ անձնաւորութիւններ՝ քաղաքական-հասարակական գործիչներ, գիտնականներ, գրողներ, պատմաբաններ, մտաւորականներ եւ բարձրաստիճան հոգեւորականներ ահանատեսի աչքերով, պրպտումներով ու ուսումնասիրութիւններով ճշմարիտ փաստերի հիման վրայ ներկայացրել են հայոց տեղահանութիւնները եւ կոտորածները, յաւելեալ այդ բոլորին մեր այս օրերին կաթոլիկ Աշխարհի կրօնապետ՝ Ֆրանցիսկոս Պապի յայտարարութիւնը եւ հաւաստիացումը ցեղասպանութեան բացառիկ աշխարհացունց ազդեցութիւն եւ դերակատարութիւն ունեցաւ այնպէս որ՝ թուրք վերնախաւի մօտ վրդովմունքի, ցասումի եւ բողոքների լքելով ու դարձաւ, այժմ, ճշմարտութեան կոծկման բացառապատեման հետեւանքը իրապատականութիւն է: Թուրք իշխանաւորներ քանի ձեր վիճակը առաւել չի ծանրացել ընդունէք եւ դատապարտէք ձեր պապերի անմարդկա-

յին ոճիրները եւ բռնագրաւումները, այսպիսով փրկէք ձեզ խաղաղութեամբ եւ բարի դրացիական հաշտ ստեղծագործական կեանքով ապրելու համար: Հայ ժողովուրդը խաղաղութիւն է սիրում, բոլոր ժողովուրդները նոյնպէս, թող մեր

թուրք հարեւան երկրները լաւ գիտակցեն, որ թշնամութիւն անելով խաղաղութեան չենք հասնի, խաղաղութիւնը յառաջադիմութեան, բարեկեցիկ կեանքի, բարի դրացնութեան առհաւատչեան է:

ԾԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Հարիւրամեակ ,
Ողբերգութիւն մեծ,
Ջարդ ու կոտորած,
Ծով վիշտ ու տառապանքի
տարիներ,
Վերածննդեան, վերագունման,
Կազմակերպական տարիներ,
Պայքարի, ճանաչեցման,
Պահանջատիրութեան
տարի-ներ:
Եւ ահա հարիւր տարիներ
Յամառ ու անկոտորում,
Բիւրաւոր Նահատակաց
Անմոռաց յիշատակում:

Ահա երկրներ՝
Մարդասէր ու արդարադատ,
Ճանաչեցին եւ դատապարտեցին
Ահաւոր ցեղասպանութիւնը:
Առաջինն էր Ուրուգուէն,
Եւ այս հարիւրամեակի
օրերին
Հենց ինքը դարձեալ,
Ազնիւ ժողովուրդ,
Հեզաբարոյ նախագահ՝
Խոսէ Մոխիքան
Պատմական որոշում
կայացրեց՝
Ցեղասպանութիւնը միջազգայնօրէն
ճանաչում պահանջեց:

Արդարեւ՝
Ուրուգուէ երկիրն ու ժողովուրդը
Անմոռաց կը յիշատակուեն՝
Մարդասէր արարքով վեհ,
Արդարադատ կեցուածքով
քաջ,
Առաջին ճանաչումը կոտորածների,
Անմեղ ու արդար նահատակների:

Ահա գործն այդ սուրբ,
Մղում է մեզ երախտագիտութեան,
Շնորհակալութեան գլուխ խոնարհել,
Ի մասնաւորի հռոմի Մեծ Պապ
Ֆրանցիսկոս Կրօնապետի,
Բոլոր-բոլոր այն երկրներին,
Ժողովուրդներին ու իշխանութիւններին...
Որ դատապարտել են ցեղասպանութիւնը:
Մեր հարիւրամեակի այս ոգեկոչման օրերին՝
Մեր գովասանքի խօսքն ենք նուիրում
Ֆրանսայի ժողովրդին
Նախագահ՝ Ֆրանսուա Օլանդին,

Եւ շատ երկրներին:
ԱՄՆ-ի նախագահ՝ Բարաք Օբաման,
Յուսով գալիք օրերին
մեզ յուսախափ չի անի,
Թէ՛ իր հօգի մերկայութեամբ,
Թէ՛ իր բացառիկ ելոյթով,
Կարտայայտի ճշմարտութիւնը ցեղասպանութեան:
Եթէ արդարութեան դէմ անցողական շահը խօսի
Կորուստ կը լինի վստահութեան,
Աշխարհի խաղաղ կեանքի կայացման:

Հայաստանի նախագահ՝ Սերժ Սարգսեանի հրաւերով
Երկրների էլիտար ընտրանու
Ներկայութիւնը Երեւանում,
Ծիծեռնակաբերդում
Ապրիլ 24-ի օրը,
Պատմական հանդիպում՝
Աշխարհացունց արձագանք
Քաղաքական դեմոնստրացիա:

Ի՞նչ սպասելիք հաւաքից՝
Դատապարտումը ցեղասպանութեան,
Հատուցում եւ հողերի վերադարձ
Սա է չարչրկուած մեր ժողովրդի պահանջը:
Ո՞ր չափով մեր պետական այրիք կը յաջողեն,
Այս անարդար աշխարհում,
Իրականացնել հայութեան պահանջը,
Ապագան վստահ ցոյց կը տայ արդիւնքը:

Մեր անցեալի հպարտութեամբ գօտեպնդուած
Թափ տանք մեր պայքարին
Ոչ ձեռնածալ նստել եւ յոյս կապել,
Անշեղ հայեացքով նպատակաւալաց
Պէտք է պայքարել եւ առաջ գնալ,
Իշխանութիւն եւ ժողովուրդ,
Հայաստան, Արցախ եւ Սփիւռք,
Միասնական ոգով,
Անկոտորում կամքով,
Կուռ հաւատքով,
Կշռուած ու դատուած,
Քաղաքականութիւն վարեն Առանց ընկրկելու,
Քանգի յաղթութիւնը Մերը եւ աշխարհինն է լինելու:

ԿԻԼԻԿԻՈՅ ՊԱՐՊՈՒՄԸ

ԿԻԼԻԿԻՈՅ Տ.Տ. ՍԱՅԱԿ Բ. ԽԱՊԱՅԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՅՐԱԺԵՇՏԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԴԵԿՏԵՄԲԵՐ 192

ԴՈԿՏ. ԶԱԲԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Երկու Ուղղութեամբ

Յեղասպանութեան հարիւրամեակի այս օրերուն հայոց պատմութեան անաւոր ընթացքը երկու ուղղութեամբ թեքուեցաւ 1915-ին եւ 1918-ին՝ դէպի Արեւմտեան եւ դէպի Արեւելեան Հայաստան: Թուրքիոյ թաքուն ոճիրը որ այսօր համատարած ճանաչում գտած է արդէն որպէս շառաչուն ապտակ թուրք պետական ղեկավարութեան, սկիզբ առաւ թրքական հողին վրայ, սպանդով եւ աքորով, քանդելով հայուն տունն ու մշակոյթը, Արմաշն ու Սիսը, եկեղեցիներն ու թեմակալ Առաջնորդները ու համայն հայութիւնը, անցնելով սահմանէն անդին եւ Արեւելեան Հայաստանն ալ նոյն ճակատագրին մատնել փորձելով: Սարգստապետի ճակատամարտը սակայն ետ շարտեց խիզախ հայորդիներու վճռակամ դիմադրութեամբ՝ հռչակելով Հայաստանի Հանրապետութիւնը 1918 Մայիս 28-ին: Նոյնը չեղաւ սակայն թրքահայոց պայրագային:

Երկու հոգեւոր պետերն ալ ամենէն վճռական պահուն մնացին ամուր եւ պահեցին հայուն մնացորդաց բեկորները: Անոնք էին ծերունացարդ Հայրապետները Տ.Տ. Գէորգ Ե. Վշտալի Կաթողիկոսը Ամենայն Հայոց, եւ Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը Կիլիկիոյ: Առաջինը մնաց իր Աթոռին վրայ աներեր՝ հակառակ թշնամիին մօտալուտ ներխուժումին, իսկ երկրորդը թուրքին եւ Եւրոպայի երկու պետութիւններուն՝ Ֆրանսայի եւ Անգլիոյ խաղաղիք դառնալով թափառեցաւ անտուն եւ անօթեւան, մինչեւ որ իր դիմացկուն եւ աննահանջ քաջութեամբ վերակերտեց իր Աթոռը Լիբանանի մէջ: Սոյն գրութեամբ Սահակ Բ. Հայրապետի ողիսականը գրի կ'առնեմ ու իր չիշատակին կ'ընծայեմ Յեղասպանութեան Հարիւրամեակի ճիշդ այս օրերուն:

Յրաժեշտը

Երջանկայիշատակ Տ.Տ. Սահակ Բ. Կիլիկիոյ Կաթողիկոսը 1920 թուին աքորէն Կիլիկիան վերադարձաւ այն յոյսով որ պիտի վերակերտէր իր Աթոռը: Լման տարի մը մնաց Ատանա, 1920 Նոյեմբերէն 1921 Դեկտեմբեր, եւ ապա անդարձ մեկնեցաւ Կիլիկիայէն եւ Սիսի իր Աթոռէն, միշտ մնալով իր ժողովուրդին գլուխը, երբ արդէն 72 տարիքը լրացուցած էր: Սահակ Հայրապետ գնաց բնակութիւն գտնելու Հալէպ, իր կարեւոր թեմերէն մէկուն մէջ, ուր վտարանդի հասած էին նաեւ Կիլիկեցիք:

Հայութենէ պարպուած էին Սիսը, Ատանան ու Այնթապը, Մարաշն ու Զէյթունը: Վերապրողները եղած էին գաղթական, անտէր, անտունի՝ ցրուած Պաղեստին, Սիւրիա, Լիբանան եւ Յունաստան, լքուած իրենց բախտին, իրենց ձեռքերով կերտելու համար իրենց տունը:

Ի՞նչ էր Նախընթացը

Կիլիկիոյ տարաբախտ պարպումին նախընթացը եւ պատճառը Եւրոպական դաւաճանող քաղաքակրթութիւնն էր: Առաջին համաշխարհային Պատերազմի ժամանակ Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ 1916 Մայիս 16-ին գաղտնի համաձայնու-



թիւն մը կնքուեցաւ Օսմանեան Թուրքիոյ որոշ տիրոջութիւնը բաժնելու մասին, եւ այդ համաձայնագիրը ընդունուեցաւ Ռուսիոյ Կայսեր կողմէ եւ ստորագրուեցաւ Լոնտոնի մէջ: Ըստ տուեալ պայմաններուն Ֆրանսայի պիտի յանձնուէր Կիլիկիան, նկատի ունենալով անոր ռազմավարական կարեւոր դիրքը: Հայկական Լէզէտը գտաւ իր հովանաւորը՝ Ֆրանսան, որուն հետ հայեր պիտի կուէին թուրքերուն դէմ եւ յաղթութեան պարագային Կիլիկիա ինքնավար պիտի դառնար եւ տրուէր հայերուն: Ըստ այնմ, Հայկական Լէզէտը 1918 Սեպտ. 19-ին Արարայի ճակատամարտին մասնակցեցաւ ու Ֆրանսա յաղթական դուրս եկաւ:

Առաջին Նշանները

Առաջին նշանները լաւ էին եւ սակայն շատ կարճատեւ: Ֆրանսա արտօնեց հայկական գունդին մուտքը Կիլիկիա շուրջ 6000 զինեալներով, որոնք ցամաք ելան Ալեքսանտրէթ, եւ Մերսինէն մտան Կիլիկիա: 1919-ին արդէն մօտ 120,000 հայեր կ'ապրէին Կիլիկիոյ մէջ, իսկ տարի մը ետք թիւը բարձրացած էր 160,000-ի: Գաղթականի ճամբուն վրայ հոն էին նաեւ հայրա Եղիա Արզումանեան, երկու քոյրերն ու մայրը, որոնք էվէրէկէն բռնի գաղթի ճամբան բռնած էին չորս տարիներէ ի վեր: Մեծ մայրս երիտասարդ տարիքին մահացած է Բագրատի մէջ, իսկ երեք զաւակները Լիբանանի ուղղութեամբ ապահով հասած են Եգիպտոս: Սակայն Ֆրանսական հոգատարութիւնը լուրջ եւ մնայուն միջոցներ ձեռք չառաւ հայերու անվտանգութիւնը ապահովող: Ֆրանսայի հաւանութեամբ տեղ-տեղ թուրք պաշտօնատարներ սկսան իշխանութեան գլուխ անցնել, մինչ անդին միեւնոյն ատեն Քեմալական շարժումը կը սողոսկէր Կիլիկիայէն ետք Իզմիրի եւ Յունական ծովերուն տիրանալու վճռակամութեամբ: Սակայն անոնց համար Կիլիկիան առաջ կուգար՝ յետոյ միւսները:

Կիլիկիոյ

Ինքնապաշտպանութիւնը

Հայեր իսկոյն ինքնապաշտպանութեան խիզախ փորձերու ձեռնամուխ եղան, որոնք սակայն շուտով թուրքերուն ձեռքը ինկան՝ ջարդի եւ կոտորածի մատնուելով: Այսպէս, 1920-ին Մարաշ դիմադրեց 20 օրեր եւ կորսնցուց 11,000 հայորդիներ: Մնացած 8,000-ը գաղթեց Սիւրիա: Հաճըն պաշարուեցաւ 7 ամիս եւ հերոսաբար դիմադրեց թշնամիին, եւ սակայն 1920 Հոկ-

տեմբեր 15-ին յանձնուեցաւ անոր: Հաճընը բազմաթիւ հայութեան միայն 380 զինուորներ կրցան ճեղքել թշնամիին բանակը եւ ազատիլ: Ո՞ւր էին Ֆրանսացիք: Ինչի՞ ծառայեց անոնց դաշինքն ու համաձայնութիւնը: Անպատիւ քաղաքականութեան, սուտի եւ կեղծիքի գոհ գացին հայորդիք:

Մուսթաֆա Քեմալ 1920-ի Ապրիլ 1-ին պաշարեց Այնթապը, եւ 15 օրուան հերոսական ինքնապաշտպանութենէ ետք 18,000 այնթապցի հայեր փրկուեցան կոտորածէ ու գաղթեցին Հալէպ: 1919-ին Զէյթուն վերադարձած էին 1058 տարազիր հայեր, որոնք դժբախտ վախճան մը ունեցան, եւ այս ձեւով Կիլիկիոյ հայութիւնը անգամ մը եւս գոհ գնաց միջազգային քաղաքականութեան, խաբուելով Ֆրանսայէն եւ Անգլիայէն, որոնք աւելի պէտք ունէին թուրքին քան թէ հայուն:

Աւելին եւ դատապարտելին եղաւ այն որ Ֆրանսա ոչ միայն չկատարեց իր կնքած դաշինքը, այլեւ 1921 Հոկտեմբեր 20-ին Անգարայի դաշնագրով Կիլիկիան յանձնեց Թուրքիոյ:

Սահակ Բ Կաթողիկոսի Վերջին Ծիզը


Նոյն այդ տարիներուն Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս կը ջանար Ատանա իր հօտին գլուխը մնալ, ուրկէ կը վարէր իր թեմական գործերը իր կողքին ունենալով Եղիշէ Կարոյեան եւ Պետրոս Սարաճեան եպիսկոպոսները, յուսալով որ հոն պիտի մնար ու հաստատուէր: Սակայն վերոյիշեալ արագընթաց եւ դաւաճան դէպքերը խորապէս յուսալքեցին ծերունի Հայրապետը, որ կրկին կը ստիպուէր թողուլ Կիլիկիան եւ դիւանագիտական այցի երթալ Փարիզ՝ 1920 Մարտ 13-ին, տեսակցելու Ֆրանսայի նախագահին ու վարչա-

պետին հետ: Կաթողիկոսը ձեռնունայն Փարիզէն Պէյրութ մեկնեցաւ, ուր Ֆրանսայի Բարձր Քոմիտեիին հետ բանակցեցաւ ու ապա վերադարձաւ Ատանա Նոյեմբերի 1-ին՝ ութ ամիս բացակայելէ ետք: Ձինք կը փոխարինէր Եղիշէ Եպս. Կարոյեան որպէս թեմի առաջնորդը: Սահակ Կաթողիկոս եւ եպիսկոպոսներ Ատանա մնացին լման տարի մը եւս եւ Կիլիկիոյ վերջնական պարպումը տեսնելով իրենք եւս իրենց հօտին հետ գաղթեցին Հալէպ 1921 Դեկտեմբերին: Այս անգամ վերջնականապէս: Արթուն եւ Անվիատ Յայրապետը

Հակառակ յուսահատութեանց եւ յուսախաբութեանց, դաւաճանութեանց եւ անարդարութեանց Տ.Տ. Սահակ Բ. Խապայեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ընթացաւ յառաջ՝ խաչը ձեռքին եւ ձեռքը մածին վրայ: Սիսի պատմական Աթոռին վերջին Գահակալը եղաւ ան: Իր կեանքն ու երկարատեւ գահակալութիւնը վերջալոյս չբերին իր այնհեր կեանքին: Ընդհակառակը, արշալոյս մը բացին իր տոկուն կենցաղին եւ անխախտ հաւատքին շնորհիւ: Սահակ Կաթողիկոս տեսաւ վերընձիւղումը իր Աթոռին՝ ի՞ր ձեռքով, եւ ո՛չ թէ օտարին աջակցութեամբ:

Թէեւ իր պատմական Աթոռէն հեռու, սակայն ապահով Լիբանանի Անթիլիաս աւանին մէջ Սահակ Կաթողիկոս ի՞նք անձամբ հաստատեց Կիլիկիոյ Աթոռը 1930 թուին, իրեն աջակից ունենալով Տ.Տ. Բաբգէն Ա Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոսը որ կարճ ժամանակի ընթացքին նոր ստացուած թեմերը կազմակերպեց, Դպրեվանքին հիմը դրաւ, հրաւիրեց Շահէ Եպս. Գասպարանը որպէս Տեսուչ, զինք եպիսկոպոսացուց, աշակերտներ հասցուց եւ սակայն կանուխ վախճանեցաւ՝ ծերունի Սահակ Հայրապետէն երեք տարի առաջ՝ 1936 թուին:

Սահակ Բ Կաթողիկոս սրտաբեկ եւ սակայն խոհուն, հիմքը դրաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին, եւ առանց տեսնելու անոր կառուցումը վախճանեցաւ 1939 թուին խոր ծերութեան մէջ, 90 տարիքը լրացուցած եւ 36 տարիներ գահակալելէ ետք: Իր Փոխանորդը եւ ձեռնասունը, Հաճընոյ երախտարժան Առաջնորդը՝ Պետրոս Արքեպս. Սարաճեան կառուցանել տուաւ Մայր Տաճարն ու Նահատակաց Մատուռը, եւ արժանի կերպով եղաւ յաջորդ Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ որպէս Պետրոս Ա Հայրապետ:



May 11, 1918: In a letter from US President Theodore Roosevelt to Cleveland Hoadley Dodge

... the Armenian massacre was the greatest crime of the war, and the failure to act against Turkey is to condone it . . . the failure to deal radically with the Turkish horror means that all talk of guaranteeing the future peace of the world is mischievous nonsense.

Theodore Roosevelt 26th President of the United States

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Մասիս»-ի ներկայ բիւիւն ցեղասպանութեան 100րդ բացառիկին առթիւ, ստորեւ կու տանք նուիրատուներու ցանկը, որոնց համար խմբագրութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:

Նոր Սերունդ Մշակութային Միութիւն	\$2000
Հ.Մ.Մ. Տիկնանց Օժանդակ Մարմին	\$1500
Ս.Գ.Հ.Կ. Արսէն Կիտուր Մասնանիւղ	\$1000
Լուիզիանայի Ժիրայր Մուրատ Մասնանիւղ	\$1000
Ս.Գ.Հ.Կ. Արսէն Կիտուր Մասնանիւղ	\$1000
Տէր Գառնիկ Աւագ Բահանայ Հալլանեան	\$1000
Տէր եւ Տիկին Զոհրապ եւ Արփիմէ Զոլաքեան	\$500
Տէր եւ Տիկին Յարութ եւ Լուսին Պոյաճեան	\$500
Տէր եւ Տիկ. Գեորգ Գալէնտէրեան	\$500
Տէր եւ Տիկին Վահան Թումասեան	\$200
Տէր եւ Տիկին Յարութ Գասպարեան	\$200
Տէր եւ Տիկին Յարութ եւ Մայտա Եղազեան	\$200
Տէր եւ Տիկին Կարպիս Պալմեան	\$200
Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նորա Գալթաբեան	\$200
Տէր եւ Տիկին Վարդիվառ Անթոնեան	\$100
Տօթք. եւ Տիկ. Սարգիս եւ Սիլվա Գարայեան	\$100
Տէր եւ Տիկին Արթին Գալփաբեան	\$100
Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Վարդուհի Զոլաքեան	\$100
Տէր եւ Տիկին Հենրիկ Անասեան	\$100
Տէր եւ Տիկին Վարդան Լիպարիտեան	\$100
Տէր եւ Տիկին Հէրի եւ Շուշան Վարդանեան	\$100
Տիար Ալպէրթ Մինասեան	\$100
Տէր եւ Տիկին Սարգիս Թոփալեան	\$100
Տէր եւ Տիկին Սիմոն Սիմիթեան	\$100
Տէր եւ Տիկ. Բիւզանդ եւ Անահիտ Մէլմարեան	\$100
Տէր Վրթանէս եւ Անահիտ Գալայեան	\$100
Տիար Յակոբ Սարաֆեան	\$100
Տէր եւ Տիկին Յակոբ եւ Նեֆթար Տէրեան	\$60
Տէր եւ Տիկին Կարպիս Տաւոյեան	\$50
Տէր եւ Տիկին Հրանդ Սաֆարեան	\$50
Տիկին Վեհանուշ Պուլպուլեան	\$50
Տիկին Գոհար Գէսեան	\$50
Տէր եւ Տիկին Աւետիս Փափագեան	\$40
Վեր. Ճոն եւ Տիկ. Ժանէթ Մելիոնեան	\$25




Աննախընթաց Արուեստի Երեկոյ



Կազմակերպութեամբ՝

Նոր Սերունդ Մշակութային Միութեան Պարախումբի Վարչութեան



(Երգ, պար, ամուսն, զանեշտ)
Տեղի կ'ունենայ՝
Շաբաթ, 9 Մայիս 2015, Երեկոյան ժամը 7-ին
First Church of the Nazarene
3700 E Sierra Madre Blvd, Pasadena, CA



ՆԱԽԾԻՐԸ՝ ՀԱՅ ՄԻՏՔԻՆ ՈՒ ԳԻՐԻՆ ՀԱՆԴԵՊ ՍԱՐԳԻՍ ՎԱՅԱԳՆ

«Ահաւոր բաց մը այնտեղ կը կատարուի մութի մէջ...»
Վահան Թեֆեան

«Երբ մշակոյթ բառը լսեմ, ատրնանակ կը բաշխեմ...»
Կեօպելս

«Մահ ու աւեր... Թուրքը անցաւ այդ տեղէն»
Վիքոր շիւկո

Խորաթափանց մեր բանաստեղծ եւ բառերու հմուտ կախարդ Թէքէեանն իսկ պահ մը կը սահմուկի, խոստովանելով իր անկարողութիւնը, «Դժոխային տրաման այս, ինչպէ՞ս կրնայ պատմուիլ...» բացականչելով:

Դար մը ամբողջ, մենք ալ, վտարանդի ու անդաստական՝ կատարուածի աստուածութեանը դիմաց շքման, լոկ հծծիւններ կրցանք թոթովել: Այո՛, ինչպէ՞ս պատմել անպատմելին, ինչպէ՞ս երեւակայել ու երկնել աներեւակայելին, երբ ամենագոր բառերն իսկ անգոր



կը դառնան կատարուածի ասագունութիւնը ընդգրկելու համար: Ինչպէ՞ս հաւատալ, թէ, 1915, Ապրիլի շարագուշակ այդ գիշերը, երբ, անտեղեակ մեր հաւաքականութիւնը, հակառակ 1909-ի Կիլիկեան ջարդերու կանխանշանին, տակաւին լաւատեսութեամբ կ'օրօրուէր, հաւատալով իթիֆհատի ազատութեան ու հաւասարութեան ստապատիր խոստումներուն, մինչդեռ ան, թուրք պետականութիւնը, անակնկալ ձեւով, նենգ ու դաւադիր ճշգրտութեամբ սադրանքած եւ ծրագրած՝ կը ձեռքադրէր Պոլսոյ գրեթէ մեր ամբողջ մտաւորականութիւնը, ընդգրկելով գրողներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, ազատ սապարէզի անձնակազմները, կրօնականներ եւ գործիչներ՝ մօտ 250 հոգի, որ յաջորդ քանի մը օրերուն պիտի հասնէր 1000 թիւին: Աքսորելու պատրուակով գրեթէ բոլորը քշուեցան եւ նահատակուեցան անասելի խժոժութիւններով Չանդըրի եւ այլ շարագուշակ ձորերուն մէջ: Նման նախճիր չէ եղած ոչ մէկ տեղ, ոչ մէկ ատեն: Միայն արիւնարբու թուրքը ժպրհած էր սադայէլական սառնասրտութեամբ իրագործել այդպիսի եղեռնագործութիւն մը: Որոշած էին նախ գլխատել ազգին ուղեղն ու անոր առաջնորդը ընտրանին, որպէսզի հեզասահօրէն կարենան զանգուածին սպանդի եւ կողոպուտի հաշուեյարդարը գործադրել, հայութիւնը արմատէն բնաջնջելու մտադրութեամբ: Համաշխարհային պատերազմ էր, մեծ պետութիւնները գերգաղութեան էին գլխուր յօշոտել-սպանելով: Պէտք էր օգտուիլ այդ իրենց համար նպաստաւոր պարագութեան առիթէն

եւ միանգամ ընդ միշտ լուծել «հայկական հարց» կոչուող թնջուկը:

Թուրքը իր նենգ հաշիւներուն մէջ սակայն սխալեցա՛ւ: Ան հաշուի չէր առած հայու յաւերժական եւ աննկուն ոգին որ փիւնիկ այն թեւաւորին հանգոյն անընկճելի յատկութիւնը ունէր իր մոխիրներէն իսկ վերյառնելու: Ճի՛շդ է, անճիտուեցանք պահ մը, կորսնցուցինք տուն ու հող, ինչք ու հարստութիւն եւ արեան մեր տուրքը եղաւ անչափելիօրէն յորդ: Դարձանք աստանդական Սփիւռք: Բայց, աշխատանքով, աննկուն կամքով, մեր իտէալներով եւ երազներով վերականգնեցինք արժանապատուութեան մեր գոյավիճակը: Ենթոհիւ մեր հայրենիքի անկախութեան եւ պետականութեան ստեղծումին, այսօր մենք ապրող ազգութիւններու հաւաքականութեան բանակի կողքին շարք բռնած ենք նոր հպարտութեամբ տոգորուն: Հարիւրամեակի այս օրերուն, սկսած ենք նոյնիսկ առաւելութեան կէտեր արձանագրել, յանձինս կաթողիկէ եկեղեցիներուն գերագոյն պետին, նորին սուրբ օծութիւն Ֆրանսիզ Պապի շրթներով իսկ ցեղասպանութեան խարանդ անգամ մը եւս դրոշմելով թուրքիոյ պիղծ ճակատին:

Այս սիրանքը սակայն պէտք չէ մեզի բնաւ մոռցնել տայ մեր մեծագոյն կորուստներէն հանդիսացող, այն անփոխարինելի իմացական գանձերը զորս տակաւին պիտի տային մեզի, իրենց երիտասարդ հասակին մէջ կեանքէն խլուած բազմատաղանդ մեր գրողներն ու բանաստեղծները, արուեստագէտներն ու գիտնականները, որոնք արդէն որպէս նախաճաշակ եւ երախայրիք մեզի պարգեւեր էին նոր ոսկեղաք մը, իրենց վեհ ու շքեղ ստեղծագործութիւններով: Այսպէ՛ս, անդարձ կորսնցուցինք տակաւին ստեղծագործութիւնը գանձերգերը կոմիտասին գորս ան, հայ հոգիին խորերէն լոյս աշխարհ պիտի բերէր, նաեւ այն բանաստեղծական գոհարները, որոնցմով, հասուն տարիքի վարուժանը, Սիւսմանթոն եւ Ռուբէն Սեւակը պիտի նոր շքեղութեամբ օժտէին մեր քերթողութիւնը, իսկ Ջոհրային, Երուխանին, Արտաշէս Յարութիւնեանին նոր վէպերն ու պատմուածքները պիտի պեղէին հայ ոգին, նոր ակօսներ բանալով, սոհմիկ Ռուբէն Ջարդարեանը, Հրանդը, Թլկատիւնցին մեր գաւառներուն համըն ու բոլոր նոր հմայքով ծաղկեցնէին պիտի գրական մեր մեղրահամ մրցատանները: Տակաւին, ինչպէ՞ս կրնանք մոռնալ մեր նոր ծլարձակ տաղանդները Գեղամ Բարսեղեանին եւ Տիգրան Չէօկիւրեանին, որոնց հազիւ ընտիր նախաճաշակ մը տալու առիթը ընծայուեցաւ միայն: Եւ դեռ հազիւ ծնած եւ ծնուելիք հաւանական գալիք հանճարներուն կորուստը...:

Ողբալու համար չէ որ թուեցինք այս բոլորը: Այլ անոնցմով զօրանալու, գօտեպնդուելով, ցեղին ջահը միշտ վառ ու բարձր պահելու վերանորոգ երդումը տալու համար միայն: Որովհետեւ, յիշել կը նշանակէ շարունակել: Վառ պահել անոնց յիշատակը՝ անմահութեան ուղեգիր տալով անոնց: Եւ մանաւանդ, մասնաւորաբար եւ գլխաւորաբար պահանջատէր մնալով:
Առաջին անունը, որուն յիշա-



տակին պարտինք դնել հպարտութեան եւ հիացումի մեր ծաղկեպսակը, գեղադէմ ու ազնուահոգի Դանիէլ Վարուժանն է, հանճարեղ բանաստեղծը: Մեծ հոգիով, վեհանձն, առաքինի, ուղղամիտ անձնակորութիւն մը՝ մարդասէր, հայրենասէր եւ գեղեցիկ յաւերժական սպասարկուն:

Բուն անունով Դանիէլ Չպուրեան ծնած է Սեբաստիոյ Բրզնիկ գիւղին մէջ, 1884ի ապրիլ 20-ին: Տաներկու տարեկանին կը դրկուի Պոլիս, գտնելու համար պանդիտացած հայրը՝ բանտի ճաղերու ետին:

Ծանր, ճնշիչ տպաւորութիւն երախային վրայ: Բարեբախտաբար, շուտով հայրը ազատ կ'արձակուի եւ որպէս խանի մը դռնապան գործ կը գտնէ եւ զաւակը կը տեղաւորէ Միսթարեան հայրերու ուսումնարանը, ուրկից 1902-ին կ'ուղարկուի Վենետիկ, Մուրատ-Ռաֆայէլեան երկրորդական վարժարանը: Միսթարեաններու հայաբոյր մթնոլորտին մէջ, Հայր Ղեւոնդ Ալիշանի տակաւին թեւածող բանաստեղծական շունչով կը կերտուին վարուժանի միտքն ու հոգին եւ կու տան «Սարսուռներ» առաջին հատորը, որ արդէն կը յայտնաբերէ քերթողական իր տաղանդին ծննդոցը:

1905-ին ան Վենետիկէն կ'անցնի Պելճիքա, Կանտի հռչակաւոր համալսարանը, ուր կը հետեւի քաղաքական գիտութիւններու եւ գրականութեան դասընթացներու, խորանալով եւրոպական գեղագիտական նուաճումներու ուսումնասիրութեան մէջ եւ կրելով մասնաւորաբար այդ օրերու փայլուն գրական աստղերուն՝ էմիլ Վերհարնի եւ Մոռիս Մեթերլինկի բարերար ազդեցութիւնները, որոնցմով ան առաջին անգամ ըլլալով արեւմտահայ բանաստեղծութեան կը բերէ ընկերովարական արձագանգներ եւ կը մտցնէ նաեւ՝ քաղաքներու նոր ըմբռնումներն ու խմորումները: «Բանուորուհին», «Սպասում», «Մեռնող բանուոր», «Մայիս մէկ» եւ այլ քերթուածներ կ'ընդլայնեն մեր քերթողութեան նեղ շրջագիծը դէպի եւրոպական եւ համամարդկային հնչականութիւն:

Այսօր ամէն հայ որ կ'այցելէ Կանտի համալսարանը, յուզումով եւ հպարտութեամբ կը դիտէ վարուժանի դիմաքանդակը, գետեղուած մեծ գրադարանի մուտքին եւ կը կարդայ անոր քանդակուած պատգամը.

«Ինչ փոյթ կեանք մեռնող, երբոր երազը կ'ապրի, երբոր երազն անմահ է:»

1909-ին ան կը վերադառնայ Սեբաստիա, ուր Արամեան վար-

ժարնին մէջ երկու տարի կը պաշտօնավարէ որպէս ուսուցիչ: Հոն է որ կը սկսի յղանալ եւ մեծ մասամբ իրագործել իր նրբակերտ եւ մարգարտաշար «Հացին Երգը» շարքին քերթուածները, պատկերելով հայ գիւղին եւ մշակներուն ոգեղինացած իտէալական աշխարհը, անոր անաւարտ վիճակով իսկ նոր էջ բանալով իր եւ հայ քերթողութեան անդաստանէն ներս, ուրկից՝ շովեր կ'անցնին:

Ու ցորեաններս յուշիկ, յուշիկ կ'արթնան.

Իրենց խորքէն կը հոսի դող մը անասեման:

Գեղադալար կողերն ի վար թուրիմ
Ծովեր կ'անցնին:»

Թող ոչ ոք առարկէ, թէ վարուժանի գիւղը հեռու էր հայ գիւղի իրական պատկերէն: Մեր բոլորէն աւելի ան գիտակից էր ողբերգական անոր վիճակին, հոն ապրած ու տեսած ըլլալուն: Վարուժանի երազանքն էր հայ գիւղը ունենալ Եւրոպայի մէջ իր տեսած գիւղերու նման, խաղաղ, արարչական աշխատանքով եռուն, արեւավառ հանգրուան մը որպէս, ուր մշակը որպէս ազատ ու ներդաշնակ մարդ ապրէր արժանապատուութեամբ եւ բարիք ստեղծէր:

Իր ծննդավայրին մէջ, ան նաեւ կ'ունենայ սոսկալի բախումներ շրջապատի տգէտ ու ամբարտաւան ջոջ աղաներուն, ինչպէս նաեւ իր սիրած աղջկան ծնողքին հետ, որոնք չեն կրնար հանդուրժել իր մաքուր սիրային եւ ամուսնական առաջարկին: «Վարժապետը ի՞նչ իրաւունքով սիրել յանդուրժի»-ի մաշած, քաղքենի մտայնութիւնն է խոչընդոտը: Որպէս հետեւանք, 1911-ին, վարուժան իր սիրած օրիորդին հետ կ'ապաստանի Եվդոկիայի Թոքատ քաղաքը եւ հոն պակուելով կը կազմէ իտէալական բոյն մը, ուր՝ «Աղուոր, աղուոր, աղուոր վարդն իմ գարունին, որ սրտիս վրայ բացուեցար...» հրաշալի քնարական այս երգը պիտի հիւսէր, որպէս պակուած իր երջանկութեան: Արժամաբար, կը պաշտօնավարէ տեղուցն ճեմարանին մէջ, մինչեւ որ, յաջորդ տարին, կը հրաւիրուի Պոլիս, որպէս տեսուչ Բերայի ազգային վարժարանին, ուր կը մնայ մինչեւ 1915, իր ձեռքադրած գիշերը:

Մինչ այդ՝ վարուժան կը հրատարակէ իր երկու անմահ գլուխ գործոց երկերը՝ «Յեղին Սիրտը», 1909-ին եւ «Հեթանոս երգեր»ը, 1914-ին, որոնք ամբողջութեամբ կը յեղաշրջեն մեր քերթողական արուեստը իրենց հզօր կառուցով եւ նոր, նկարչազեղ գեղապաշտութեամբ: Այսինքն՝ բերեղեայ լեզուով: «Յեղին Սիրտը» իսկապէս որ համատարած արտայայտութիւնն է հայոց դժոխակ իրավիճակին, տառապանքին, ոգորումներուն եւ իտէալին: Առանց լաց ու կոծի, ասպետական իր ոգիով հպարտ ու վեհանձն, վարուժան վերակերտած է հայ հոգիին ամենացայտուն եւ նուաճուած տեսլականը, որ կը հասնի իր լրումին, յաջորդ հատորին՝ «Հեթանոս երգեր»ուն մէջ: Հոն կը տողանցեն մեր հեթանոսական շրջանի չաստուածութիւնները՝ Անահիտը ոսկեմայր, Վահագնը դիւցազնաշունչ, Աստղիկը գեղածին, Վանատուրը

ՆԱԽԾԻՐԸ՝ ՀԱՅ ՄԻՏՔԻՆ ՈՒ ԳԻՐԻՆ ՀԱՆՂԵՊ


Շարունակում էք 18-էն

բերքառատ, որոնց քերթողը կը դիմէ վերածնունդի ակնկալութեամբ, քաջութեան, ոյժի եւ գեղեցկութեան որպէս մարմնացում:

«Յանուն Ոյժի, յանուն Գեղի, մտիր մեհեանն Աստուածներուն, Ձախը ձեռքիդ՝ քաղցն քաղցն համապիտէ՛ հոս եւ արիւն: ... Զի մեհեանն Սէրի, յանուն Սերմի, բու հիւն Տեղիդ Մարմարէն կոյս, Մեհեան, գաւակներդ օգոստափառ, պիտի կերտեն՝ նոր Արշալոյս:»

Այս կապակցութեամբ կ'արժէ յիշատակել նաեւ «Կերթամ աղբիւրը լոյսին» սքանչելի քերթուածն ալ՝ որպէս վարուժանեան գեղագիտական հանգանակը:

Տակաւին շատ երկար կարելի է խօսիլ եւ գրել վարուժանի բերած բազմապիսի արժանիքներուն եւ նորութիւններուն մասին, բայց հարկ է նաեւ անդրադառնալ մեր միւս լուսապսակ նահատակ բանաստեղծին՝ Սիւսանի մասին ալ: Դպրոցական մեր գրասե-



ղաններէն սկսած, վարուժան եւ Սիւսանի կարծէք անբաժանելի երկուորեակներ ըլլալին, մինչ իրենց մեծութիւնը կը կայանար ոգեկանի նոյնութեան հետ նաեւ՝ ձեւականին զգալի տարբերութեան մէջ:

Սիւսանի ալ հանդիսացաւ մեր ազգային ողբերգութեան, կոտորածներուն, վշտին ու կոծին ամբողջական երգիչը: Եթէ պահ մը ջնջենք իր քերթուածներու թուականները, եւ մոռնանք իր ողջակիզման պարագան ալ, կրնանք անվերապահօրէն զինք հռչակել որպէս մեր Մեծ Եղեռնի վաւերական վիպերգողը՝ տանիժական փոթորկումով ընկալուած եւ Նարեկացիի շունչով ճենձերուած: Ան, կողմնակի կարծուած սպանդներուն ետին իսկ նախատեսած էր ահաւոր ուրուականը որ պիտի պայթէր մեր ազգի գլխուն, իր խողխողումէն սկսելով: Ան, Կիլիկեան ջարդերէն յետոյ չի հաւատաց երիտթուրքերու «ազատութեան եւ հաւասարութեան» ստապատիր բեմադրութեան եւ զգոնութեան, պայքարի մարտնչող շեփորահարը եղաւ:

Արդարեւ Սիւսանի քերթողութիւնը եկաւ հակառակ հեղեղումի մը անկասելի յորձանապտոյտներով, իր ահեղացունց բառերու եւ պատկերներու շառաչիւնով մըրկեց հայոց ընդարմացած հոգիները, ոչ թէ լաց ու կոծի հրաւերով, այլ ընդվզումի եւ վրէժի շիկացումով: Ժիշդ է, հեռուորականութիւնը իր կարեւոր գէն-

քերէն մին հանդիսացաւ, բայց մահու կենաց կռիւի երած մարտիկին համար, ընտրութեան նրբութիւնները տեղ չունէին այլեւս: Սիւսանի չեղած հեռուորականութիւնը արդիւնք էր իր վառ երեւակայութեան, որ կը սաւառնէր իր ամբողջ քերթողութեան համակարգին վրայ եւ անոնց կու տար կշռոյթ ու շնչառութիւն՝ ցնցող պատկերներու շառաչութեամբ:

Սիւսանի «Ատոմ Եարձանեան ծնած էր մեր սքանչելի, ժողովրդաբոյր հայրեններու ակնադբիւր Ակն քաղաքին մէջ, 1878-ի Յունուար 1-ին: Իր մանկութիւնը կ'անցնէր Եփրատ գետի փրփրադէզ ջուրերուն մնացուն շառաչին ունկնդիր: Նախնական ուսումը կը ստանայ Ներսէսեան վարժարանին մէջ: 1892-ին, ընտանքը կը տեղափոխուի Պոլիս, ուր ան, նախ կը յաճախէ Միլիթանեան վարժարանը եւ ապա կ'ամբողջացնէ ուսումը Պէրպէրեան երկրորդականին մէջ: 1896-ի ջարդերու հետեւանքով, ան հարկադրուած կը փախչի դէպի Եգիպտոս եւ ապա տարի մը վերջ կ'անցնէր Ժնև, ուր պահ մը կը հետեւի համալսարանի ծաղկաբուծութեան դասընթացներուն: Դժգոհ՝ վերջապէս կ'անցնէր Փարիզ եւ երեք տարիներ կը յաճախէ հռչակաւոր Սորպոն համալսարանի բանասիրական բաժանմունքը, ուր կը ծանօթանայ եւրոպական արդի գրական հոսանքներուն եւ դէմքերուն: Անշուշտ հարց պիտի ծագի, թէ ի՞նչ միջոցներով եւ ինչպիսի պայմաններու տակ ան կրցաւ այս թափառումներուն եւ ուսումնական ծախքը ապահովել: Պատասխանը պարզ է. թշուառութեամբ եւ անասելի տառապանքներով, գրկանքներով եւ նուաստացումներով: Երկրորդ դժոխք մը հանդիսացաւ Եւրոպան ուսանող Սիւսանի չեղած համար եւ ուր քանդուեցաւ իր առողջութիւնը եւ տկարացաւ կամքն ու կորովը: Իրեն օգնել փորձեցին Փարիզէն Արշակ Չօպանեանը եւ նոյնիսկ Դանիէլ վարուժան, եղբայրական զգացումներէ մղուած գնաց մինչեւ Ժնև գինք ոգեւորելու եւ սրտապնդելու համար, անոր ինքնավստահութիւն եւ յարատեւելու կամք ներշնչելով: Այս տարապայմաններու տակ իսկ, Սիւսանի երկնեց իր հոգեցունց քերթողագիրքերը, հետզհետէ լոյս աշխարհ ընծայելով՝ 1902-ին «Դիւցազնօրէն»ը, 1909-ին՝ «Հայրենի Հրաւէր»ը: 1910-ին, երբ արդէն համարիկա հասած էր մաս կազմելու համար «Հայրենիք» ամսագրի խմբագրութեան, Պոսթոնի մէջ լոյս կ'ընծայէր իր «Ամբողջական Գործ» խորագիրով ժողովածուն: «Հոգեվարքի եւ Յոյսի Զահեր»ը, «Կարմիր Լուրեր Բարեկամէս»ը եւ «Հայրենի Հրաւէր»ներու շարքը լրիւ յատկացուած են կոտորածներու եւ անոնց հետեւանք աքորի, պանդխտութեան եւ կարօտի աչրող ապրումներուն, սքանչելի յուզականութեամբ նկարագրուած:

«Գիւտին Փառքը» պոէմը տարբեր որակի եւ գոյնի ստեղծագործութիւն է, ուր Ս. Մեսրոպի պանծալի անձնաւորութիւնն ու գիրերու գիւտը կը փառաբանուին դարձեալ հեղեղանման եւ շլացուցիչ բառակերտումներով եւ փոխաբերական շքեղ պատկերներով, որոնց նմանը չէր տեսնուած Նարեկի ծննդոցէն ի վեր:

«Մեսրոպ, Հայ դարերու դիմաց կեցող ազամանդե՛աց ապա-

ռաժ...» պիտի գոչէր ան, հայ գիրերու ստեղծման 1500 ամեակի հանդիսութեան մեծ փայլ տալով, այնքան հզոր եւ վարակիչ իր պատկերներով, որոնցմով վարուժան համարուած, փոքր առեւելով վիրգիլիոսի տողերը, պիտի գոչէր. «Պատիւ ըրէք վսեմական քերթողին»:

Այս ալ գրական եղբայրակցութեան հրաշալի երեւոյթ մը՝ որ ցոյց կուտայ վարուժանի բացառիկ վեհանձնութիւնը:

Բանաստեղծութեան մարգին չափ մեծ է նաեւ մեր կորուստը արձակ գրականութեան: Հոն ալ ունէինք գրական տիտաններ յանձինս անկրկնելի եւ խորթափանց Գրիգոր Զոհրապին, լուռ ու համեստ, բայց ներհուն Երուստան Երուանդ Սրմաքեշխանյանին, նրբաճաշակ եւ բժախնդիր քննադատ Արտաշէս Յարութիւնեանին, Ռուբէն Զարդարեանին, Թլկատինցիին, Հրանդ-Մելքոն Կիւրճեանին եւ Մշոյ Գեղամ տէր Կարապետեանին: Իսկ տակաւին հասունացումի չհասած, բայց արդէն իրենց տաղանդին նախանշոյլները սուած Գեղամ Բարսեղեանին ու Տիգրան Չօկիւրեանին, որոնք անպայման կու գան յաւելելու նահատակ արձակագիրներու ընտրանիին ցանկը: Յոյժ փափաքելի պիտի ըլլար լայնօրէն անդրադառնալ նաեւ այս բոլոր արժանաւորներու կեանքին եւ վաստակին ալ: Բայց ժամանակի սղութեան պատճառով կը հարկադրուիմ ներկայացնել միայն երկու վիպական ներկայացուցիչներ, հակիրճ հպումներով, իրենց նոր ուղիներ բացած ըլլալուն համար:

Անոնցմէ, վիպագիր եւ նորավիպագիր Գրիգոր Զոհրապին անունն ու կերպարը կը մնայ մեր արդի գրականութեան լուսաւոր դէմքերէն մէկը, իր վիթխարի եւ մնացուն վաստակով:

Բնիկ պոլսեցի, ան ծնած է 1861 թիւի Յունիսի 26-ին: Միջնակարգ կրթութենէն ետք ան կ'աւարտէ երկրաչափական եւ իրաւաբանական գոյգ համալսարաններու բաժանմունքները, ստանալով երկրաչափի եւ փաստաբանի վկայականները եւ ապա կը նուիրուի իրաւաբանի գործունէութեան եւ կը տիրանայ մեծ հռչակի, համեմտով մինչեւ խորհրդարան: Փայլուն իմացականութեան տէր, զօրաւոր անհատականութիւն եւ հիանալի ճարտասան, ան նաեւ կանուխէն կը ներգրաւուի գրականութեան սէրով եւ իր առաջին փորձերը կը կատարէ բանաստեղծութեամբ: Սակայն իր իսկական տաղանդը շուտով կը դրսեւորուի պատմութեան, իր բարեբերով՝ նորակէպի սեռին մէջ, դառնալով այդ սեռին անգերազանցելի վարպետն ու յառաջապահը, իսկ անհրաժեշտութեան պարագային ալ խիստ ու կծու՝ իր քննադատական նշըրակը գործածելով, ան սուած է ժամանակաշրջանի մը՝ տասնութերորդ դարի կէսերու հայկական Պոլիսի ամբողջական եւ կենդանի կենսապատկերը, անոր լրիւ ընկերային կերտուածքով, իր «անունուական» վսեմաշուքներուն կեղծի-

քով եւ անկումով, գիւղերէն բերուած խեղճ սպասուհիներու տիպարային ողբերգութեամբ, պարզունակ միամտութեամբ եւ լեզուական հիւթեղ յատկանիշներով, եւ «ձիտին Պարտքը»ին նման պատմուածքներով՝ կեանքի ծանր պայմանները կրող խոնարհ դասակարգին ողբերգութեամբ:

Զոհրապի մեծագոյն նուաճումը սակայն կ'ըլլայ բացառապատմը կանացի բազմադէմ եւ բարդ ներաշխարհներուն ներթափանցումը, գունագեղ եւ ճշգրիտ նկարագիրներու հոյակերտումով:

Զոհրապի իրապաշտութիւնը հիմնովին կը տարբերի Արփիարեանի մը կամ Փաշայեանի մը նպատակադրուած եւ բռնադատեալ յղացումներէն անդին անցնող, նրբօրէն թելադրական իր ձեւակերպումներով: Այսպէս, իր նորավէպերը, միշտ սուր դիտողակա-



նութեամբ, նրբութեամբ, հիւմուրով պարուրուած, անպայման խիտ ու սեղմ ոճով կոճկուած, պատմելու հիւթեղ եւ ճշգրիտ իր լեզուով քանդակած են ամբողջ աշխարհի մը՝ Պոլսոյ հայութեան ժամանակաշրջանի հոգեկերտուածքն ու դիմագիծը: Հոն են բոլորը. ամիրան ու լուծապիտիւր, վաճառականն ու կրպակատէրը, գրագիր պաշտօնեան ու գործակատարը եւ անշուշտ բազմադէմ կիներու տեսականին: Զոհրապի բազմատեսակ սիրային պատմութիւնները դիտուած են միշտ տարբեր տեսանկիւններէ եւ մատուցուած այլազան եւ տարօրինակ իրենց բնոյթով ու յայտնաբերումներով, ուր կը բացայայտուին կանացի բարդ հոգեխառնութիւններ՝ գունագեղ նկարագիրներու տիրապետուած վրձինումով: Այսպիսի այլատեսակ սէրերու նուճումներ են, օրինակ՝ «Ռեհանը», «Անդրշիրիմեան Սէր», «Մամայիդ Բարեւ Ըրէ» եւ այլ բազում պատմուածքներ:

Զոհրապի տիտանական եւ շքեղ հասակին քով, թէեւ բաւական անշուք կը մնան Երուստան, Երուանդ Սրմաքեշխանյանին անձն ու գրական կերպարը: Բայց եթէ Զոհրապ լուսաշող Բերայի տիպական ծնունդն էր, Երուստանն ալ, արգասիքն էր, Պոլսոյ ամենէն անշուք թաղամասին, ձկնորսներու խասգիւղին, ուր ծնած էր ան 1870 թիւի Յունիս ամսուն: Իր անձին պէս իր վաստակն ալ համեստ է, առանց շուռայնքի ու մեծ փայլի, բայց սովորն՝ իր ընդգրկած խաղաղ աշխարհին պէս՝ հարազատ եւ ապրող տիպարներով եւ կենցաղով:

1886-ին ան կ'աւարտէ Ներսէսեան թաղի վարժարանը եւ կ'ընդունուի Կեղերոսական երկրորդականը՝ գոր չի յաջողիր աւարտել, աննպաստ պայմաններու հարկադրանքով: Բայց գրականութեան սե-

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷ ՎԵՐԱՊՐԱԾ ՈՐԲԻ ՍԸ ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԵՏՔԵՐՈՎ ՄԱՐԳԱՐ ՍԵԴՐԱԿԵԱՆ (1907?-1973)

ՈՎ ՍՏԻՊԵՑ ԱՇԽԱՐՀԻՆ ԽՈՍՏՈՎԱՆԻԼ ԹԵ «ԳՈՆԵԱԿԸ ՀԱՅԵՐԷՆ Է ԽՕՍՈՒՄ» ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Հայոց Ցեղասպանութենէ փրկուած Հայ մանկան մը ողիսականն է հարիւրամեակի խորքէն եկած:

Մեծ եղեռնի ճիրաններէն փրկուելու «բախտաւորութիւնը» ունեցող Մարգար Սեդրակեանի:

Վանեցի Մարգար, դեռատի տարիքէն ճաշակած է կեանքի դառնագոյն փորձառութիւնները, ապրած ու մահացած է հայրենիքի մէջ:

Յաջողած է եղեռնի գեհնէն վերապրիլ եւ բնածին քաջութեամբ ու փորձառութեամբ ապահովել արժանավայել կեանք մը, որպէս հայրենի կոնեակագործութեան անուանի համտեսի վարպետ Մարգար Սեդրակեան:

Ամուսնանալով վերապրող վանեցի աղջկան մը հետ կազմած է յաջող ընտանիք մը եւ եղած չորս բարձրագոյն կրթութեան հասած գաւազներու հայր եւ բազում թոռներու եւ ծոռներու մեծ հայր:

Իր ասպարէզի մէջ նուաճած է մեծ յաջողութիւններ եւ արժանացած է «Սովետական սոցիալիստական աշխատանքի հերոս» մակդիրին եւ միջազգային բազմաթիւ մրցանակներու, ոսկի եւ արծաթ մետալներու:

Այո, այս այն փոքրիկ Մարգարն էր, որ Վանի ինքնապաշտպանութեան օրերու թէժ կռիւներուն, փամփուշտներու տարափին տակ, գինամթերք կը հասցնէր լեռ բարձրացած ֆետայիներուն:

Մահ, եղեռն, արհաւիրք, Արեւմտահայաստանի հայթափումն ու աւերումը՝ համագոր էր դժոխքի, երկրային դժոխք, արդիւնքն էր, մէկուկէս միլիոն հայ անմեղ նահատակներ եւ հազարաւոր «բախտաւոր» վերապրողներ, որոնք մահուան ընթերքէն որպէս փրկուիլ թուիչ քանակներ անձամբ եթերներ, եւ ամէն օր մահանալով յաղթեցին մահուան. Յաւր խթանեց ու կորուստը գոտեպնդեց զանոնք ու անոնք ապրեցան, եւ իւրաքանչիւր աշխարհացրիւ որբ՝ իր յատուկ ոճով ոտքի կանգնեցաւ ու դարձաւ գիտաւոր աստղ եւ որպէս փարոս լուսաւորեց նոյնիսկ երբեմն իր ցաւին հանդէպ անտարբեր ու խուլ մարդկանց մտքերն ու հոգիները:

Այդ գիտաւոր աստղերէն մէկն ալ եղաւ փոքրիկ Մարգարը.....

1915-ի ահաւոր օրերն էին, վանեցիք ինքնապաշտպանութեան համար լեռ բարձրացած էին, ութնամեայ Մարգար վար իջած էր լեռնէն տնեցիները տեսնելու, վանայ շէն գիւղերէն խորակոնիսն էր իր ծննդավայրը, սակայն որքան որ մօտենար գիւղին, այնքան աւելի անբնական կը զգար, լուռութիւնը աւելի ծնշիչ եւ սահմուկեցուցիչ էր եւ ահա Մարգար գիւղի մուտքին, դէմ յանդիման կուգար ամայութեան..... սարսափելի էր գիւղը, այդ անվախ մանուկը՝ Մարգար, որ կեանքի գնով լեռներու բարձրունքին գինամթերք եւ սննդամթերք կը փոխադրէր, սոսկաց. ակնապիշ կը դիտէր ամայացած երբեմնի երջանիկ գիւղը, դուները բաց, տունները թալանուած եւ փողոցները անմարդ էին, իրենց տան բակը լքուած էր, վայրագ ձեռքեր այրտեղէն անցած էին, արեան հետքեր իր քայլերը ուղղեցին դէպի



սնեակներ, ուր գտաւ իր ծնողները արիւնլուայ եւ անշարժ, անոնք շատոնց մահացեր էին: Մարգար փորձեց խօսիլ անոնց հետ, անօգուտ, ան սկսաւ ծանր-ծանր շնչել, աչքերը չարեցան արիւնոտ պատերուն, ոտքերը երերացին, միտքը դադրեցաւ գործելէ եւ Մարգար ինքզինք գտաւ շրջապատուած անծանօթ հայրենակիցներով, որոնք կը փորձէին օգնել եւ զինք ճանշնալ:

Ձիւտոր մը գտած էր Մարգարի անշարժացած բայց կենդանի մարմինը եւ հասցուցած սահման ուրկէ ոստիկաններ զինք փոխադրած էին հայաստանի ամերիկեան մանկատուն, հոն շրջած տղեկը նոյնիսկ իր ազգանունը մոռցած՝ արձանագրուած էր իբր Սեդրակեան, որ իր հօր անունն էր եւ այնուհետեւ ան դարձաւ ցեղասպանեալ ժողովուրդի հազարաւոր որբերէն մէկը հայաստանի մանկատան մէջ:

Մարգար բախտաւոր որբերէն էր, որ նետուած էր հայրենի հողի վրայ, ուր պիտի հաստատուէր, ծիլ արձակէր, վերընձիւղուէր եւ իր արմատները պիտի երկարէր հայրենի հողին ընթերքը, արժեւորելով իր կեանքի ամէն մէկ վայրկեանը եւ դառնալով աշխարհահռչակ կոնեակագործ համտես վարպետ Մարգար Սեդրակեան՝ ճախողցնելով ցեղասպանի ծրագիրը:

Մարգար ամերիկեան մանկատան մէջ ապրեցաւ հայ որբին բաժին ինկած թէ դժուարութիւնները եւ թէ առաւելութիւնները: Ան, իր մէջ անթեղուած վանեցիի քաջութեամբ, շրջահայեացութեամբ եւ յանդգնութեամբ իր վաղ կեանքի իւրաքանչիւր օրը արժեւորեց այնպիսի հմտութեամբ, որ ան դարձաւ իր յառաջիկայ յաջող կեանքի ուղեւորութեան հիմքը, միշտ ներշնչուելով ապագայի յաջողութենէն, հաւատալով գալիք գարուններուն, եւ որպէս մղիչ ուժ ունենալով հայրենիքի սէրն ու տուն դարձի երազը՝ երիտասարդ Մարգար նուաճեց հորիզոններ եւ գրաւեց սահմաններ:

Մարգարի ուղեւորութիւնը մանկութենէն դէպի պատանութիւն եւ երիտասարդութիւն հեշտ չէր..... Մարգար՝ Վանեցի այդ որբուկը, թէեւ Հայաստանի մէջ էր եւ շրջապատուած հայրենակիցներով, միշտ առանձին զգաց, իր առանձնու-

թիւնը միակ ջերմացնողը ընթերցումն էր, ընթերցանութեամբ կը սնանէր եւ կը շնչէր այդ օրերու տիրապետող Միքայէլ Նալպանտեանի, Լեւոն Զաւէն Սիւրմելեանի, Չարենցի եւ Մահարիի գաղափարներով, որոնք զինք կը ներշնչէին, կը լիցքաւորէին միտքը, կը հասունցնէին գաղափարները, կը կերտէին իր հայրենասէր նկարագիրը եւ կը հունաւորուէր իր կեանքի ուղին միշտ վառ պահելով տուն դարձի իր երազը:

Հեշտ չէին նաեւ Մարգարի պատանութենէն դէպի երիտասարդութիւն ուղեւորութեան ժամանակաշրջանի քաղաքական պայմանները, ան ակնատես եղաւ Արեւմտահայաստանի եւ երբեմնի իր ծննդավայրի հայթափման եւ վայրագօրէն կողոպտուելուն, պահ մը ապրեցաւ հրճուանքը երկամեայ անկախութեան եւ հողին խայտաց տուն դարձի երազով, չուզումով ակնատես եղաւ մանուկ անկախութեան փլուզումին անոր հետեւող սովին, համաճարակին եւ քաջաբար դիմադրելով ամէն զրկանքներու, վկան դարձաւ Սովետական Հայաստանի իշխանութեան հաստատման, միշտ իր մտապատկերի մէջ ունենալով ապագայի հզօր եւ անկորնչելի հայրենիքի մը հեռանկարը:

Եւ զարմանալի չէր որ տասնութամեայ Մարգար վաղուան փայլուն եւ զօրաւոր հայրենիքի հեռանկարով որոշէր եւ մուտք գործէր գիւղատնտեսութեան համալսարանը, մինչ Հայաստանի մէջ կիսատով էր ու երկիրը կարիք ունէր տարբեր բնոյթի մասնագէտներու:

Երիտասարդ Մարգարի համար Հայաստան կիզակէտն էր նոր քաղաքակրթութեան կերտման, ան հաւատացած էր որ ըստ Սուրբ Գիրքին, Հայաստան գինեգործութեան օրրանն էր, երբ Նոյան Տապանը հանգչեցաւ Արարատ լեռան վրայ եւ Նոյ ուղղուեցաւ դէպի Հայաստան ան սկսաւ զբաղիլ գի-

նեգործութեամբ, սա նախախնամութեան կոչն էր, կամ երկնային հրաւէր էր, ուղղուած Հայ ժողովուրդին լաւագոյնս օգտագործելու տրուած այս երկնատուր ընծան՝ հայրենի հողն ու բնութիւնը:

Մարգար հաւատարիմ երկնային այս կոչին աւարտելով գիւղատնտեսութեան համալսարանը խոր ուսումնասիրելով հայրենի բնութիւնը, տիրանալով այգեգործութեան գաղտնիքներուն, խորանալով որթատունկի մշակման գործին մէջ եւ հմտանալով խաղողէն արեւահամ հիւթեր ստանալու գաղտնիքին՝ դիմեց Երեւանի կոնեակի գործարան եւ ամէն գնով ձեռք ձգեց հոն աշխատելու իրավիճակ:

Ան շուտով սկսաւ իր աշխատանքին, ինքամոռաց աշխատանքով տարիներու իր ուսումնասիրութիւններն ու փնտաւորները սկսան մարմին առնել կոնեակի գործարանէն ներս, նկատի առած որ մինչեւ 1937 թուականը խորհրդային միութեան մէջ տեսակաւոր եւ անուանակիր կոնեակ չէր արտադրուեր, կոնեակի արտադրութիւնը սահմանափակուած էր 3, 4, 4 թիւերով ըստ իրենց ստեղծուած տարիներուն: Երկարամեայ ուսումնասիրութիւններէն վերջ 1937 թուականին Մուսնդ առաւ՝ 30ամեայ երիտասարդ Մարգար Սեդրակեանի առաջին անուանի կոնեակը, որը ունէր տասը տարուան հնութիւն եւ 43% ալքոհոլ,



իսկ յատկանիշն էր իր կարմրակաղնիի գոյնը, սիկարի տուփի հոտը, մեղմութիւնը եւ յագեցուած ըլլալը: Սա կը փաստէր որ ան արդէն կանխորոշէր էր հայկական կոնեակի արարման աշխատանքին համար ստեղծած նոր դպրոցի առանձնայատկութիւնները հիմնաւորուած՝ իր այն համոզումներու վրայ որ կ'ըսէր՝ «հայկական կոնեակը իր մէջ պէտք է խտացնէր հայ մարդու ստեղծագործական խորքը, ճաշակի երանգաւորումները, նրբագոյն զգացումները, կեանքի հաճոյքի ըմբռնումները, Հայաստանի օդի, հողի, արեւի, ջուրի, խաղողի առանձնայատկութիւնները:

Այս հոգեբանութեամբ սկիզբ առաւ 20րդ դարու սկզբնաւորութեան հայկական կոնեակը այս

ԹԵ ԻՆՉՊԵՄ «ԶԵՅԹՈՒՆԸ» ԿԵՐԱՆՈՒԱՆՈՒԵՑ ՍՈՒԼԵՍԱՆԼԸ ԵՒ ՅԱՅՈՒԹԻՒՆԸ ԲՆԱԶՆՁՈՒԵՑ

ՓՐՈՑ. ԱԲԵՏԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Զէյթունցիները դարերից ի վեր ազատագրական եւ ինքնապաշտպանական մարտեր են մղել սուլթանական իշխանութիւններէ դէմ, որպէսզի պահպանեն իրենց կիսանկախ արտօնեալ վիճակը:

Դժբախտաբար այլ ելք ունեցաւ 1915 թ. Մեծ Եղեռնի ընթացքում գէյթունի հայ ազգաբնակչութեան ճակատագիրը, քանի որ չկարողացան պէտք եղածին պէս կազմակերպել ինքնապաշտպանութիւնը, տեղի տալով Կիլիկիայի Սահակ Կաթողիկոսի թուրքական զօրքերին չդիմադրելու յորդորներին:

Այնուհանդերձ ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան: Զէյթունի լեռներում ապաստանած քաջամարտիկները պայքարեցին եւ ինքնապաշտպանական մարտեր մղեցին, բայց ապարդիւն, քանի որ մինչ այդ թուրքական իշխանութիւնները խաբէութեամբ ժողովրդի մեծ մասից հաւաքել էին գէնքերը:

1915 թ. սկզբին գէյթունցիները տեղեկանում են որ Տէօրթ Եոլի բնակչութեանը թուրքերը քշել են դէպի հեռաւոր վայրեր: Նոյն ճակատագրին չենթարկուելու համար

մի խումբ արիասիրտ երիտասարդներ որոշում են պաշտպանուել եւ դիմադրել: Որոշ ժամանակ անց քաջամարտիկների խմբերն իրար միանալով ամրանում են Զէյթունի վանքում:

Թուրքական իշխանութիւնները աւելացնում են եղած զօրքի թիւը, որպէսզի հեշտութեամբ ճնշեն հայ ազատամարտիկներին:

Այդ օրերին Մարաշից մի գումարտակով Զէյթուն է ժամանում հազարապետ Սուլէյմանը: Թուրքական հրամանատարութիւնը որոշում է կայացնում որպէսզի վանքի վրայ յարձակում գործի հազարապետ Սուլէյմանը եւ ջախջախի հայերի պաշտպանութիւնը: Տեղի ունեցած հրաձգութեան ընթացքում լեռնականների փամփուռ շտաբներից սպանւում է հազարապետ Սուլէյմանը:

Այնուհետեւ թնթանալով դեպի գնդակոծումով թուրքերին յաջողւում է աւերել վանքի պարիսպը: Բայց մութն ընդկնելուց յետոյ ազատամարտիկները կարողանում են հեռանալ դէպի լեռները:

Այդ դէպքից յետոյ թուրքական զօրքերին յաջողուեց գրաւել Զէյթունը եւ հաշուեյարդար տեսնել տեղում մնացած հայ բնակչու-

թեան հետ ու բռնութեամբ տեղահանելով քշել դէպի Տէր Զօրի անապատները:

Ահա թէ ինչ է գրուած Հայկազ Պողոսեանի 1969 թ. Երեւանում հրատարակուած «Զէյթունի պատմութիւնը» 1409-1921 թ.թ. խորագիրը կրող գրքի 402 էջում:

«Թուրքական կառավարութեան ոճրագործ ծրագրի համապատասխան կարճ ժամանակամիջոցում դատարկուեցին ոչ միայն Զէյթուն գիւղաքաղաքն ու նրա գաւառակը, այլեւ Ալպիտանը, Մերսինը, Եարփուզը, Ատանա, Սիսը, Տարսուսը, Կէօքիւնը, Հաճընը, Այնթապը, Քիլիսը եւ Կիլիկիայի միւս հայաբնակ վայրերը: Այդ հայ բնակչութեան մի մասը ոչնչացուեց հենց ճանապարհին, իսկ միւս մասը զոհ հարձակ անապատի դաժան կլիմային, անօթութեանը եւ հիւանդութիւններին: Ազատուածների մի մասն էլ ցիրուցան եղաւ հողագնդի տարբեր մասերը: Տէր Զօրի անապատն ուղարկուած 7000 գէյթունցիներից եւ ոչ մէկը կենդանի չմնաց»:

Ինչպէս նկատեցիք վերելում Զէյթունն էլ վերանստանուեց Սուլէյմանը ի յիշատակ թուրք հազար

րապետին: Այս չարափաստիկ արարքը հաստատուեց Սուլթան Մեհմէտ Ռեշատի շատուկ հրամանագրով: Այսպէս. «կայսերական հրաման Մարաշի Սանճաքի ներսում Զէյթուն կազան Սուլէյմանը վերանստանուեց մասին»:

Մարաշի Սանճաքի ներսում «Զէյթուն» կազաքչի անունը պատշաճ է համարուել «Սուլէյմանը» վերանուանելու: Կայսերական այս հրամանի գործադրութիւնը հրամայուած է ներքին գործերի նախարարութեանը:

Սուլթան Մեհմէտ Ռեշատ, 8 Յունիս, 1915, (Տե՛ս «Dustur» (օրէնքների ժողովածու) արաբատառ հին թուրքերէն, հատ. 7 խթանապուր, 1918 էջ 615):

Միթէ՞ այս հայ ժողովրդի պատմութեան խեղաթիւրման մի բացառաւոր օրինակ չէ՞:

Հարկ է նշել, որ հայ ժողովրդի հերոսական ինքնապաշտպանութեան դրուագներից է նաեւ թուրք գաւթիչների ցուցաբերած Մուսա Լեբան քառասուն օրուայ հերոսամարտը: Այդ է պատճառը, որ յետագայում նոյն բախտին արժանացաւ նաեւ Մուսա Լեռը, դառնալով Սաման տաղը (նշանակում է Յարդի Լեռ):

100-ԱՄԵԱՅ ԿԵՐԱՊՐՈՂ ՈՒՒՏԸ ԱՐԱ ԱՅՐՈՆԵԱՆ

Հարիւրամեակ մը նշող պատմական թուականը արձանագրուած պիտի մնայ որպէս արիւնոտ բռնագրաւումներու եւ ոճրագարտ ցեղասպանութեան թուական: Թուրք բարբարոսները կը միտէին միայն զանգուածային կոտորածով ու տեղահանութեամբ, կրօնական ու ցեղային մոլեռանդութիւն գրգռելով՝ 1915-ին գործադրել հայութեան բնաջնջումի հրէշային ծրագիրը:

Անժխտելի իրականութիւն է այլեւս, թուրքը կը յուսար ոչնչացնել հայ ժողովուրդը ու բացարձակ տէրը դառնալ պատմական Հայաստանին: Բայց բարբարոսական եղեռնը գործադրուած հայ ժողովուրդին դէմ, չհասաւ իր նպատակակէտին: Համատարած աւերներէն ու գերեզմաններէն վերածնաւ հայ ժողովուրդը, իսկ Օսմանեան թուրքին յաջորդները, իրենց հինգ դարերու թալանէ ու ջարդէ ստեղծած հսկայ կայսրութիւնը, որ Կեդրոնական Եւրոպայէն կը տարածուէր մինչեւ Միջին Արեւելք ու Հիւսիսային Աֆրիկէ: Իսկ այսօր թուրքիան կծկուած կը մնայ Անատոլի մէջ, իր դարաւոր կողոպուտներու վերջին պատառին՝ հայկական հողերու պաշտպանութեան:

Բայց մենք անվարան կրնանք հաստատել պատմական խեղաթիւրուած ու սուտահիւս թրքական ռազմավարութիւնը, երբ արձանագրուած պատմական փաստեր ու փորագիր արձանագրութիւններ վաւերական կը փաստեն հայ ժողովուրդին արդար պահանջատիրութիւնը իր պապենական հողերուն:

Այլ օրինակ մը եւս թրքական այդ խեղաթիւրումին, կրնանք գտնել Գոլոմպիա Համալսարանի ընդարձակ համայնագիտարանին

«Թուրք»երու բաժնին մէջ, ուր թուրք ցեղը կ'որակուի «վաչկատու ու պատերազմիկ», որ Կեդրոնական Ասիայէն արշաւած է դէպի Արեւմուտք 11-րդ դարու կէսերուն ու Անատոլի հասած է 13-րդ դարուն (այսինքն հայ ժողովուրդի պատմական արձանագրութիւններէն շուրջ 18 դարեր ետք), ու Բիւզանդիոնի մայրաքաղաքը գրաւած 1453-ին: Այս կարեւոր պատմական արձանագրութիւնը մէկ բան կրնայ փաստել, թէ թուրքերը լուրջ մտահոգութիւն ունենալով կ'ուզեն խեղաթիւրել պատմական իրողութիւնները, ծանօթ ըլլալով նոյնանման անժխտելի իրականութեանց: Իսկ իր ներքին քայքայումն ալ ազատելու համար կը փորձէ խաբել Արեւմտեան պետութիւնները:

Այո՛, վերածնաւ հայ ժողովուրդը եւ ունեցաւ իր անկախ հանրապետութիւնը ու խորհրդայնացաւ՝ պահելով իր ազգային պահանջատիրութիւնը, աճելով ու հրաշալի վերելքով դարձեալ անկախացաւ, ապա լծուեցաւ թրքական ճիրաններէն հայ հողերու ազատագրումի հետապնդումին:

Թուրքը փորձեց որդեգրել նոր ռազմավարութիւն մը, որ նենգամիտ խաբէութեամբ կերտուած է, ու ձեռնարկեց պատմական խեղաթիւրումի, այլափոխելով իրողութիւնները, յերիւրեց անգոյ դէպքեր, փաստելու համար, թէ՛ թուրք ցեղը աւելի հին է քան հայկականը, թէ՛ անոնց մշակոյթը աւելի ճոխ ու արժէքաւոր է քան հայկականը եւ թէ՛ թուրք էին Անատոլիի այն բնակիչները, որոնք հիմնած էին հիթիթներու պետութիւնը:

Ուրեմն, ըստ այս անհետեւ վարկածներուն, հայոց գոյութենէն աւելի քան 10 դարեր առաջ, թուրք

քերը բնիկ տէրերը կը դառնան հայկական լեռնաշխարհին, որուն համաձայն անիմաստ ու անտեղի կը դառնայ հայկական պատմական հողերու պահանջատիրութիւնը թուրքերուն համար: Յայտնի է այլեւս լուրջ մտահոգութիւնը, որ անոնք ունին հայկական արդար դատին համար թափուող ջանքերը ու պետութեանց ճանաչումը Հայոց Յեղափոխութեան, որուն վարակիչ հետեւանքները կրնան արդարութեան ու իրականութեան յայտնու-

թեամբ դառնալ ի նպաստ հայ ժողովուրդին ու իր անժամանցելի պահանջատիրութեան հատուցման:

Մեծ Եղեռնի 100-ամեակը լաւագոյն առիթը պէտք է հանդիսանայ վերանորոգ ուխտով ու անվհատ կամքով դառնալու արդար պահանջատէր պատմական ու պապենական մեր հողերուն եւ իրաւունքներուն, որոնք հայաբոյր հողեր են ու կը մնան եւ պիտի շարունակուին մնալ անժխտելիօրէն հայկական:



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԵՆ ՆՇԽԱՐ ՄԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃԵԱՆ
(Երաժշտագետ, Պատույ Փրոֆ. ԵՊԿ-Ի)

Սոյն գրութեամբ պիտի անդրադառնամ անմահանուն Կոմիտաս վարդապետի չափազանց թանկագին նշխարներէն միոյն մասին, որ ոչ թէ միայն առերես մեծ արժէք ներկայացնող երկ է, այլ՝ եւ մանաւանդ, անոր ներկայացուցած այլաբանական առումով խորիմաստ խորհուրդին համար:

Այս տարին ըլլալով 100-ամեակը Մեծ Եղեռնին կամ Ցեղասպանութեանը, հետեւեալով թէ՛ հայրենի եւ թէ՛ Սփիւռքի մամուլին եւ հեռուստատեսութեան, արդէն իսկ սկսած ենք վկայել բազում ձեռնարկներ թէ՛ տեղական, հայրենի եւ թէ՛ համաշխարհային բեմերու վրայ, ինչպէս՝ գեղարուեստի ոլորտներէն ներս գրական, պատմական, գեղանկարչական, ցուցադրական, թատերական, շարժապատկերային, երաժշտական եւ այլն:

Մեր շօշափած նիւթը առընչուած ըլլալով երաժշտական ոլորտին հետ պիտի խօսիմ այդ մասին միայն:

Տեղեկացած ենք թէ՛ Հայաստանի Պետական սիմֆոնիք նուագախումբը ղեկավարութեամբ Եղուարդ Թօփճեանի, երիտասարդաց սիմֆոնիք նուագախումբը ղեկավարութեամբ Սերգէյ Սմբատեանի, շատ բազմազան տարի մը ունին, յագեցած «Նահատակաց յիշատակին նուիրուած» մակդիրներու ելույթներով թէ՛ Հայաստանի եւ թէ՛ արտերկրի մէջ, թէ՛ եւ ծրագիրներու բովանդակութեանց տեսակէտով Մեծ Եղեռնի նիւթին հետ անմիջական աղերսի գոյութիւնը չափազանց չնչին է:

Կան երաժշտական եռեակներ, քառեակներ, հնգեակներ, ութեակներ եւ սենեկային թէ՛ դասական եւ թէ՛ ժողովրդային խումբեր, որոնք եւս բազում ելույթներով, աւելի հայկական գործեր ներառելով իրենց ծրագիրներուն մէջ, կ'անցնին ազգային առաքելութեան: Նոյն պատկերը կը պարզուի երգչախումբերու պարագաներուն:

Դժբախտաբար, Սովետական վարչակարգի օրով Մեծ Եղեռնի նիւթը արգիւտուած նիւթերէն մին ըլլալով հայ ստեղծագործող երաժիշտներ չկարողացան գործեր յօրինել այս թէ՛մայով: Մինչեւ իսկ Հայաստանի «Կառավարութիւն»ը չէր կարողացած «Նահատակաց Օր» հռչակել Ապրիլ 24-ը:

Միայն Մեծ Եղեռնի 50-ամեակի առթիւ 1965ին կառուցուեցաւ Ծիծեռնակաբերդի փառահեղ յուշակոթողը ու այդ շրջանին էջմիածին պաշտօնաթերթին մէջ Աջ լոյս տեսաւ Ալեքսանդր Յարութիւնեանի «Գթա՛ Տէր» գանդաղան, որ յաճախ կը կատարէի Նիւ Եորքի Ս. Վարդան Տաճարին մէջ հոգեհանգստեան արարողութեանց ընթացքին կազմած մեծաւ մասամբ օտար արհեստավարժ երգչախումբով ու երգեհոնի նուագակցութեամբ:

Իսկ անկէ ետք, հակառակ հետզհետէ վարչակարգի խստամբերութեան մեծացումին շատ քիչ գործեր նուիրուեցան այս նիւթին:

Սփիւռքի երաժիշտներուն մօտ եւս, դժբախտաբար, Մեծ Եղեռնին նուիրուած շատ քիչ գործեր յօրինուեցան:

Ուստի, կրնանք ըսել որ, Մեծ Եղեռնին նուիրուած երկերուն թիւը շատ սահմանափակ է:

Սակայն, Կոմիտաս վարդապետ այս նիւթին մէջ եւս տուած էր իր քանքարը իր ժողովուրդին, այդ ալ 1915, Ապրիլ 24ին տունէն տարուելով ոստիկանատուն ու այլ 200 հայ մտաւորականներու հետ դէպի հեռաւոր Չանդըրը աքսորուելէ, թուրք ասկարներ անմարդկային, վայրենի եւ գազանաբարոյ վերաբերմունքը իր անձին վրայ կրելէ ետք, տեսնելով եւ վկայելով իր ժողովուրդին անպատմելի չարչարանքներն ու նահատակութիւնը, արուեստագետի զգայուն հոգին անասելի փոթորիկներէ անցնելով կորսնցուցած էր իր մտային ու հոգեկան հաւասարակշռութիւնը:

Ճիշդ է որ Պոլսոյ մէջ երեւելի անձերու միջամտութեամբ կառավարութիւնը զինք աքսորէն վերադարձուց Պոլիս: Բայց, արդէն ուշ էր: Այդ հրէշային եւ դժոխային աքսորի ճանապարհի ընթացքին դաժանութեան եւ վայրագութեան զարհուրելի բաժակը ցմրուր ըմպելով արդէն իսկ վարդապետը հոգեպէս խանգարուած կը վերադառնար Պոլիս: Ինք, իր բերնով կ'ըսէր՝ «Սիրտս փլած է»:

Այլեւս նոյն վարդապետը չէր: Կրակով լեցուն, գուարթախոհ Հայր Սուրբը չկար այլեւս:

Կոմիտաս վարդապետին յատուկ փայլատակող եւ ճառագայթող աչքերը այլեւս խամրեր էին, բան չունէին արտայայտելու բացի իր հոգիին քանդուած վիճակէն:

Այլեւս շատ քիչ պահեր կը պատահէր, երբ ինքզինք լաւ կը զգար: Այդ պահերուն իր սեղանագործելու գիտակցութիւնը վերադառնալով կը ջանար լաւագոյնս օգտագործել այդ ժամերը, որովհետեւ նկատած էր որ, հետզհետէ աւելի ուշ ժամանակամիջոցներով կու գան այդպիսի պահերը: Օրինակի համար, այդպիսի պահերուն ան աշխատեցաւ եւ վերջացուց իր դաշնակային գլուխ գործոց «Մշոյ Շօրօր (նայի, գուռնայի եւ թմբուկի ոճով)» պարանուագը:


Այսպիսի պահերու ստեղծագործութիւններէն մին ալ եղած է, մեծ խորհուրդ ներկայացնող Քրիստոսի կամ Քրիստոնէութեան սիրոյն թուրքին կողմէ ամէն տեսակի չարչարանքներու ենթարկուելով, իր ժողովուրդին նահատակութեան նուիրուած ստեղծագործութիւնը: Ի տես եւ ի լուր իր ժողովուրդին այսպիսի վեհագոյն կեցուածքին ի դէմս թուրքի անագորոյն մահուան, Կոմիտաս վարդապետի տանջուած եւ խռոված հոգին, հազարաւոր շարականներուն մէջէն ընտրելով Քրիստոսի սիրոյն ամենաչարչարալից կերպով նահատակուող Սրբոց Հռիփսիմեանց եւ Գայեանեանց կոչուեցող յիշատակին նուիրուած, 7րդ դարու Կոմիտաս Աղցեցի կաթողիկոս յօրինած, ԴԿ դարձուած քաջանկարչական մէջ ընթացող, «Անձինք Նուիրեալք» գեղեցկահիւս շարականը, մշակեց զայն եռաձայն երգչախումբի համար:

Ահաւասիկ լուսապատճէնը վարդապետի ձեռագրին, զոր մեզի տուած է հոգեբան՝ Դոկտ. Մէլինէ Գարագաշեան, որ հատորներ գրած է Կոմիտաս վարդապետի հոգեկան աշխտաբանական հարցերու մասին:




Դաշնաւորման ոճը շատ պարզ է եւրոպական առումով եւ եւրոպական առումով այս շարականը 6 ձայնասանդուխի մէջ ընթացող երգ մըն է: Հայկական ձայներուն անտեղեակ հայտն համար եւս այս դաշնաւորումը պիտի թուի ըլլալ պարզունակ գործ: Սակայն, միայն այսպիսի ակնոցով պէտք է դիտուի Կոմիտաս վարդապետին դաշնաւորած այս գործը: Որովհետեւ հանճարեղ վարդապետը ոչ թէ եւրոպական 6 ձայնասանդուխի մէջ ընթացող երգ մըն է որ դաշնաւորեց, այլ ԴԿ դարձուած քաջարական մը, որ իրեն պատկանող ձայնեղանակային իւրայատկութիւնները ունի, ինչպէս նաեւ տեսականօրէն (theoretical) ալ՝ իրեն յատուկ ձայնասանդուխի կազմուածքն ու օրինաչափութիւնները, այսպէս:

ԴԿ դարձուած քաջասանդուխը կազմուած է հետեւեալ երկու քառեակներով.



Այս քառեակներուն միակցումովը կ'ունենանք ԴԿ դարձուած քաջասանդուխը, այսպէս.



Այս երկու քառեակներով կազմուած ձայնասանդուխին բուն հիմնաձայնը (tonic) 6 ձայնահնչիւնն է: Սակայն, ի տարբերութիւն եւրոպական 6 ձայնասանդուխին, որ ունի մէկ հիմնաձայն, հայկականը ունի երկրորդ հիմնաձայն մը եւս, որ D ձայնահնչիւնն է:

ԴԿ դարձուած քաջասանդուխին տիրապետող (dominant) կամ ինչպէս կ'ըսուի դիմող ձայնը C ձայնահնչիւնն է. մինչդեռ 6 եւրոպական ձայնասանդուխին տիրապետող (dominant) ձայնահնչիւնը D ձայնահնչիւնն է:

ԴԿ դարձուած քաջասանդուխին B ձայնահնչիւնը թէ՛ բնիկ (natural) եւ թէ՛ կիսավար (flat) ձեւով կը գործածուի. նոյնպէս նաեւ E ձայնահնչիւնը: Շարականի մեղեդիի ընթացքին B ձայնահնչիւնին յաճախակի

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԵՆ ՆՇԽԱՐ ՄԸ

ԱՆՁԻՆՔ ՆՈՐԻՐԵԱԼՔ

Կոմպոզիտոր՝ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՄԵՆՅԱՆ (Ե զար)

Պրի առավ և ցարտակից նուստայի խոփի նախար
ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՄԵՆՅԱՆ (Ե զար. 1916 թ.)

Moderato $\text{♩} = 76$ Բնագրից փոխանցված Թ. Ա.

ԱՆ ձինք նր-վր-եալք սի - ռոյն Բիյու - տ - սի,
ԱՆ ձինք նր-վր-եալք սի - ռոյն Բիյու - տ - սի,
Եկ-նու - տր նա - նա - սալք և կու - սանք ի-մաս-տոնք,
Եկ-նու - տր նա - նա - սալք և կու - սանք ի-մաս-տոնք,

փոփոխութեամբը՝ կիսավարէն բնիկի եւ բնիկէն կիսավարի, Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոս, իր յօրինած շարականին, այսօրուան երաժշտական տարազներ գործածելով կ'ըսեմ. տուած է միտորամաժորային նկարագիր մը:

Դաշնաւորման յառաջատուական ընթացքը որքան որ եւրոպական կը կարծուի ըլլալ եւ պարզ, փոքրիկ զարտուղութիւններ կը պարունակէ: Այդ զարտուղութիւնները յատկապէս կատարուած են պահելու համար երկը հայկական ԴԿ դարձուած ք ձայնին յատուկ ոլորտային նկարագրին մէջ: Կոմիտաս վարդապետ ե՞րբ կատարեց այս մշակումը: Ձեռագրին վրայ վարդապետը նշած է թուականը, որ է՝ 27 Ապրիլ 1916: Այսինքն, Մեծ Եղեռնի առաջին տարելիցին: Կոմիտաս վարդապետ շատ լաւ իմանալով Սբց. Հռիփսիմեանց եւ Գալսեանեանց պատմութիւնը, անոր փոխաբերական գուգահեռականով մը, մեր ժողովուրդին նահատակութիւնը որպէս քրիստոնեաներու, նմանցնելով Հռիփսիմեանց եւ Գալսեանեանց կոյսերու նահատակութեանց, անոնց

ԿԱՆՈՆ
ՍՐԲՈՅ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՅ

ԱՆՁԻՆՔ ՆՐՎՐԵԱԼՔ սիրոյն քրիստոսի, Երկնաւոր նահատակք Եւ կուսանք իմաստունք. Ի պար- ծանրա ձեր բարձրացեալ տօնէ մայր սիրուն դըստերօքըն իւրովք:

Հռիփսիմէ՛
մե՛ծ խորհուրդ Եւ անուն ցանկալի,
ընտրեալ ի յերկրի Եւ դասեալ ընդ հրեշտակս. Եղեր օրինակ սրբու- թեան կուսանաց, վարդապետու թիւն արանց անուանոս:

ի պար-ծա նրս ձեր բարձ-րաց-եալ տօ - նէ
ի պար-ծա - նրս ձեր բարձ-րաց-եալ տօ - նէ
Մայր Սի - ովն դըս-տե - ռովն իւ - ռովն
Մայր Սի - ովն դըս-տե - ռովն իւ - ռովն
Հռիփ-սի - մէ, մեծ խոր-հուրդ ևւ ա - նուն ցան - կա - յի,
Հռիփ-սի - մէ, մեծ խոր-հուրդ ևւ ա - նուն ցան - կա - յի,

ըն-ծայ - եալ ի յերկ - րի և դաս-եալ ընդ հրե-տակս,
ըն-ծայ - եալ ի յերկ - րի և դաս-եալ ընդ հրե-տակս,
ե - դեր օ - րի-նակ սրբ-րու-թեան կու - սա - նաց,
ե - դեր օ - րի-նակ սրբ-րու-թեան կու - սա - նաց,
վար-դա-պե - տու - թին ա - բանց ար-դա-րոց:
վար-դա-պե - տու - թին ա - բանց ար-դա-րոց:

նուիրուած 7րդ դարուն յօրինուած շարականը, Մեծ Եղեռնի առաջին տարելիցին առթիւ մշակելով ու աւարտելով 27 Ապրիլ 1916ին, կը նուիրէ զայն իր ժողովուրդի նոր նահատակներու յիշատակին: Այժմ, Իջմիածինի 1961ի Փետրուարի թիւէն առնելով կը ներկայաց- նեմ մեծ երաժշտագէտ եւ Կոմիտասագէտ Ռոբերթ Աթայեանի կողմէ Կոմիտաս վարդապետի ձեռագրին վերականգնուած օրինակին լուսա- պատճէնը: Համեստ ինդրանքս է, որ մեր երգչախումբերը, գէթ այս տարի, հնչեցնեն շարժարեալ Կոմիտաս վարդապետէն մեզի հասած այս նշխարը, որ Մեծ Եղեռնի անմեղ զոհերուն նուիրուած գործերուն առաջինն է եղած: Մեծ Եղեռնի կամ Յեղասպանութեան 100 ամեակին առթիւ վշտակ- ցութիւններս կը յայտնեմ բոլոր ազգակիցներուս, անխտիր եւ եկէք բոլորիս գործերն ու ձայները միացնելով ըսենք ամբողջ աշխարհին: «Յիշում ենք եւ պահանջում»:

ԴԱՐԻՑ ԱՆՑ ԷԼ՝ ՆՈՅՆՆ Է ԹՈՒՐՔԸ ԱՐԱՍ ԵՆՈՔԵԱՆ

Շուրջ 15 տարի առաջ, մի կիսարնկերական փոքրիկ հաւաքոյթի ժամանակ, երբ թուում էր, թէ հարկաւոր կենացները խմուել են, սեղանակիցներից մէկը՝ մի սովորական, համեատ մարդ, քիչ յուզուած տեղից բարձրացաւ եւ ասաց, թէ ինքն ուզում է մի անսովոր կենաց ասել: Երբ հետաքրքրութեամբ բոլորս լռեցինք, նա փոքր-ինչ կերկերուն ձայնով, սակայն հաստատական ասաց. «Այս բաժակով խմում եմ թուրքերի երեխաների կենացը...»: Ցնցուցիչ եւ միանշեւ հոգուս ամենանուիրական լարերը վիրաւորուած՝ արդէն ուզում էի պատասխանել, երբ նա բացատրութեան պէս աւարտեց՝ «...որ իրենց պապերի նման արնախում ու բարբարոս չմեծանան, եւ մենք էլ նորմալ հարեւաններ կ'ունենանք»...

Սակայն՝ ահաւասիկ իրականութիւնը նոյնն է թուրքը, չի փոխուել՝ 1894-ից արդէն պետական մակարդակով կազմակերպուած եւ շուրջ երեք տասնամեակ իրականացուած հայ ժողովրդի ցեղասպանութեան ու հայրենազրկման գազաթնակէտ 1915-ից ուղիղ 100 տարի անց՝ իրենց ցեղասպան նախնիների այսօրուայ ժառանգներն Ապրիլի 24-ը ցինիկաբար հռչակում են ինչ-որ կռուի յաղթաւարտի օր:

Նոյնն է թուրքը, չի փոխուել՝ հայերի ցեղասպանութիւնը ժխտող, Քեսապ ու Սիրիա հայաթափող, Հրանտ Դինք սպանող, հայ-թուրքական արձանագրութիւն կորզող, պատմաբանների յանձնաժողովին 1915 վերապահող, «Արցախը՝ Ատրպէյճանին» տալու դիմաց սահմանի բացումը պայմանաւորող, կովկասեան թաթարների հայասպանութիւնն օժանդակող, հայկական քաղաքակրթութեան մասունքները վերացնող, իսլամական դահիճապետութիւնը սնուցող:

Նոյնն է թուրքը, չի փոխուել... «Ամէն ինչ պղծուած է եւ աւերուած՝ այստեղով թուրքն է, անցել»:

Վիկտոր Հիւզօ

Թուրքերն իրենց հրէշաւոր՝ հայկական տարածքների բռնազաւթման եւ հալածիչ քաղաքականութեան կենսագործման համար միշտ էլ գտան դաշնակիցներ: Մեզ համար ամենակորստաբերը լենինեան ինտերնացիոնալ բոլշեւիզմի հետ գործարքն էր, ինչի շնորհիւ թուրքերը 1921թ. Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերով փաստացի իւրացրեցին մեր հայրենիքի գագաթի մասը (Նախիջեւանն էլ նուիրաբերելով կրտսեր ցեղասպան եղբօրը՝ թաթար-ազերուներ): Հայ ժողովրդին պատկանող տարածքների հաշուին կնքուած այդ աղաղակող ապօրինի դաշնագրերի վիճարկումը եւ դադարեցումը պէտք է ներառուի Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգում՝ համահասարակական Լեւոնային Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման հետ:

Թերեւս, դժուար է պատկերացնելը, թէ ինչպէս պէտք է՝ Արցախի տարածքները «մարդի-դաբար» բանակցած, Ռուսաստանի ստորկը դարձած, մեղադրուող ուսուին հայ իրաւապահներին յանձնելու ԱԺ յայտարարութեան նախագիծը տապալած, ֆուտբոլային

թուրքադիւանագիտութիւն խաղացած իշխանագողերը համարձակուեն գործել Կրեմլի եւ մերօրեայ Բարձր դուան դէմ: Սակայն ակնյայտ է նաեւ, որ քաղաքական ու քաղաքացիական լայն քննարկումների եւ հանրայնացում հրամայականի շնորհիւ միայն հնարաւոր կը լինի ինդիի հասունացումն ու ներառումը հայկական քաղաքական օրակարգում: Որքան լռենք՝ այնքան Փութիւնն աւելի շատ կը կարօտի Աթաթուրքին, եւ ուսու-թուրք-ազերի եղբայրութեան նորանոր փայլատակումները Հայաստանի եւ Արցախի գլխին այլ փորձանքներ կը բերեն:

Հայ ժողովրդի իրաւատիրութեան բարձրաձայնման եւ կենսակոչման ուղիներից մէկն էլ, անշուշտ, օրէնքով հռչակելն է Հայաստանի իրաւունքների տարածումը թուրքիայի կողմից բռնազաւթուած հայկական տարածքների նկատմամբ:

Հայոց պատասխանը թուրքին, ուսուին, թաթարին...

Ապրիլի 2-ին ներկայ էի իմ կողմից չափազանց յարգուած Չարուհի Փոստանջեանի ներկայացրած օրէնքի նախագծի հանրային քննարկմանը (կազմակերպիչը «Ժառանգութիւնն» էր): Զարուհու հեղինակած օրինագծի անուանումն է՝ «Թուրքիայի Հանրապետութեան կողմից հայրենի բնօրրանի՝ Հայաստանի տարածքների բռնազաւթումը (օկուպացիան) եւ հայերի Մեծ հայրենազրկումը դատապարտելու մասին»: Ըստ իս՝ ահա այս օրինագծի քննարկումը եւ ընդունումը ՀՀ ԱԺ-ի կողմից լի-իրաւ կը հանդիսանայ որպէս հայրենատիրութեան իրաւական հռչակում (նաեւ պատասխան՝ յաւերժ ցեղասպաններին):

Օրինագծում ներառուած իրաւաքաղաքական եւ պատմական հիմնաւորումները, հայրենի բնօրրանի նկատմամբ հայրենատիրութեան անօտարելի իրաւունքի ճանաչումը, տարածքային, նիւթական եւ բարոյական պահանջատիրութեան իրացմանը հետամուտ լինելը եւ թուրքիայի կողմից բռնազաւթուած Հայաստանի տարածքներում Հայկական պետականութեան վերականգնման իրաւունքի մասին դրոյթները հիմնաւոր պատկերացում են տալիս օրէնքի նախագծի բացառիկ կարեւորութեան մասին: Եւ սա առաջին դէպքն է, երբ թուրքիայի բռնազաւթած հայկական տարածքները վերաբերելու Հայաստանում նման իրաւական փաստաթուղթ է ստեղծուած: Այդ տեսանկիւնից՝ օրինագիծը, ըստ իս, իր կարեւորութեամբ համեմատելի է միայն Անկախութեան հռչակագրի հետ:

Այս օրինագիծը, իմ խորին համոզմամբ, արտայայտում է բովանդակ հայ ժողովրդի նուիրական իղձերը: Օրէնքի նախագծի քննարկմանը ելույթ ունեցողներից (բոլոր բանախօսներն էլ ողջունեցին օրինագիծը) բաւականին դիպուկ արտայայտուեց «Մոդուս վիվենդի» կենտրոնի հիմնադիր Արա Պապեանը՝ նշելով, թէ այս օրինագծի ընդունումը շատ կարեւոր է, եւ հայրենատիրութեան, վնասների հատուցման եւ Հայաստանի Հանրապետութեան տարածքային ամբողջականութեան վերականգնման տեսանկիւնից որպէս առաջին եւ նուազագոյն պարտա-

դիր քայլ՝ խորհրդարանը պէտք է ընդունի այս օրէնքի նախագիծը (ըստ իս, գուզահեռ՝ հանրային օրակարգ պէտք է բերուեն նաեւ Մոսկուայի եւ Կարսի պայմանագրերի դադարեցման մասին քաղաքական եւ իրաւական քննարկումները):

Իշխանութիւնները պարտաւոր են ընդունել վերոնշեալ՝ գերուած Հայրենիքի ազատագրման իրաւունքի իրացումն ամբողջ օրէնքի նախագիծը: Դա նաեւ հայրենապատուութեան հարցն է: Բոլորս ենք յիշում, թէ ինչպէս ՀՀ քաջերը հինգ տարի խորհրդարանում պահեցին հայ-թուրքական արձանագրութիւնները (ի դէպ, նոյն Զարուհին էր, որ ի տարբերութիւն կողմից ցուցաբերուած լուրջ «ազգայնական» դաշնակցականների, իւրաքանչիւր

նստաշրջանի սկզբում կոչ էր անում ԱԺ օրակարգից հանել այդ խայտառակ արձանագրութիւնները): Խորհրդարանից այժմ հանուած այդ ԱՄՕԹ-ին պէտք է փոխարինի եւ 131 կողմ ձայներով ընդունուի ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ՝ Զարուհու հեղինակած օրէնքի նախագիծը, որն իրաւատէր եւ արժանապատիւ հայ ժողովրդի օրինագիծն է:

Յ.Գ. ...Մեզ գինաթափեց «կենաց-մարդկանքն» ասող մարդու սրտաբուխ անկեղծութիւնը, եւ այն, որ մի պահ անըջեցինք, թէ՛ յիւրաւի, իսկ որ ժողովուրդը (յատկապէս՝ հայերս) չի ցանկանայ ունենալ խաղաղ եւ անշար դրկից հարեւան: Սակայն՝ ահաւասիկ իրականութիւնը ... դարից անց էլ՝ նոյնն է թուրքը...

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԼԲԵՐՏ ԳՐԲԱՇԱՐԵԱՆ

... Եւ ինչ որ մի օճի ծնունդ, Էնվէր, Թալիաթ, թէ Քէօր օսման, Յօշոտեցիմ աղօթքն ու խունկ Սրբուրբիւնը քո յայրութեան:

Այդ ինչ ձեռքեր դժոխային Արգանդներում միւսադիւրի, Զուլեյլեմ ձեռք մէկը-միւսին Նոյնման նշգրիտ ու անթերի:

ԴՕՂԱՆՁ ԶԱՐԹՕՆՔԻ ՆՇԱՆ ԵՂԱՆ

ԶՖնէ՛ք, քաջեր, հայոց աշխարհի, Նաեւ կտրիճներ հեռու սփիւռքի, Գայլի վոհմակը խաւարն է սիրում Թա՛ւ քո սոցնեք ու մ դաւադիրներին:

ԶՖնէ՛ք հայեր, Արցախ աշխարհի, Եւ դու՛ք՝ մարտիկներ մեր սահմաններին:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԵՐԳԵՅ ՇԱՅՆՈՒԲԱՐԵԱՆ

Քսաներրորդ դարի երկրորդ տասնամեակ... Օսմանյան Թուրքիան հստակ որոշեց. «Հայ ազգը պիտի ջնջել, վերացնել» - Զլսուած մի քան, որ Ցեղ.Ա.ՍՊԱՆՈՒԹԻՒՆ կոչուեց:

Միլիոն ու կէս անմեղ հայեր՝ Կիմ, տղամարդ, մանուկ թէ ծեր, Ընկան թուրքի եաթաղանից, Օտարութեան սով նամբէ՛րին:

Քանի-քանիսն էլ մեր Հայ Մտքի խոշտանգուեցիմ ու սպանուեցիմ՝ Յանուկ լեզուի, սուրբ հաւատքի, Պապեանական բնօրրանի:

Բոլոր նրանք՝ ովքեր ընկան, Զրկուած նրանք մի պարզ մահով, Նրանք ընկան ընկան սրբապատուած, Սրբութիւնը էքրադասած:

Քանգի ծնուած-սնուած էին

Հապաթէ ոչ, մայր ինժպէդ Լիմէր իրօք գազիր այնքան Որ ոչ մի գայլ, կամ այլ գազան, Նոյնիսկ փորձէր հասնել նրան:

... Բայց Հայրենի արտերի մէջ Ահա նորից մեր երկնային «Հացիմ երգ»ն է որ լոյսի պէս Բաշխուում է ողջ աշխարհին:

Մեր ոսոխները կացինն են սրում, Բազմացնում ցեղը Սաֆարովների:

Թող հնչի, ձայնս ի լուր հայերի, Իմանանք յարգը արիական ազգի, Զկրկնենք սխալը մեր անցած դարի, Որ չի վնուում հարիւր տարի:

Նախնիների սուրբ արիւնով՝ Կովի դաշտում յաղթանակած, Խաղաղ կեանքում եւ շէնացնելով:

Նրանք ընկան արեգակի Վառ լոյսերի շողերի տակ, Ընկան անվախ, լոյսերի մէջ Տեսան ՀԱՅՐԱՅՆ վերածնունդ:

Հարիւր տարի եկաւ-անցաւ Սարսափելի գեներալից, Բայց մեզ համար կենդանի է՛ք,

Ու կը մնաք միշտ անմոռաց: Խոնարհուում ենք մեզ Զեր առաջ, Օրհնում Զեր հոգիները սուրբ, Օրհնում յանուն Հայաստանի, Հանուն մեր լոյս ապագայի:

Օրհնում է ողջ հայութիւնը մեր՝ Ծլած-ծաղկած աշխարհի ու մէկ, Հայաստանը կենտրոն դարձած, Եւ ազոյնն է պարզում վեր:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ԶԵՆՐԻ ՄՈՐԳԸՆԹԱՈՒ-Ի ՅՈՒՇԵՐԸ

ԹՈՒՐԲԻԱ-ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՊՈԼՍՈՅ ՄԷՋ ՊԱՇՏՕՆԱՎԱՐԱԾ ԱՏԵՆ 1913-1916 ԹՈՒՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Դեսպան Մորգընթաու՝ Զանդիպուլմ Թալէաթի հետ
ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Բաւական ժամանակ էր, որ հայերի հանդէպ կատարուած եղեռնի սարսափազդու դէպքերի մանրամասնութիւնները հասել էին Պոլսոյ Ամերիկեան ղեսպանատուն: 1915 թուականի Յունուար եւ Փետրուար ամիսներին պատահած դէպքերը հասել էին պատահածին նման, անկարգութիւնների վկայութիւններ էին յայտնի եղել: Այդ ամիսներին ղեսպանատուն հասել էին Ուրմիայի տեղեկագրերը, Թալէաթ ու Էնվէր նրանց իսկութիւնը ժխտելով, նկատել էին որպէս անմիտ չափազանցութիւններ: Մորգընթաուն առաջին անգամ էր լսել ու տեղեկացուել Վանայ «շփոթութիւնների» մասին, նրանք նորէն յայտարարել էին, որ պատահածները «խուժանի» ծայրայեղութիւններ էին, խոստացել՝ անմիջապէս մարել այն: Թուրք կառավարութիւնը ջանացել էր նման տեղեկութիւնները երկար ատեն գաղտնի պահել արտաքին աշխարհից, որպէսզի հայերի բնաջնջումը կատարուելուց յետոյ միայն իմացուէր Եւրոպայի, Ամերիկայի մէջ:



որոնցից այնքան ազդուած էին եղել, որ հիւանդացել էին:

Նրանցից ոմանք, տարբեր հիւպատոսներից նամակներ էին բերել, որոնց մանրամասնութիւնները հնարաւոր չէր հրապարակել: Մորգընթաուն, այդ բոլորից եզրակացրել, որ հայերի հանդէպ թուրքերի անգթութիւնը անասման էր: Նրանք Մորգընթաունին ասել էին, որ ուրիշ յոյս չկայ՝ մօտաւորապէս 2,000,000 հայերը ջարդէ, անօթութիւնէ փրկել՝ եթէ ոչ «Միացեալ Նահանգների բարոյական ազդեցութիւնը»: Հայերի բանազնացները յայտարարում էին, եթէ ամերիկեան ղեսպանատունը չկարողանար համոզել թուրքերը «սանձ» դնելու իրենց վայրագութիւններին, ապա ամբողջ մի ցեղ սպանուելու է: Ամերիկացի ու Գանատացի միսիոնարներ եւ նոյնիսկ նրանց գերման պաշտօնակիցներ խնդրել էին Մորգընթաունին՝ միջամտել: Նրանք ամբաստանել էին իրենց հայրենիքը, որ այն գութ չունէր, նրանք չէին թաքցրել իրենց «նուստացումը» որպէս գերմանացիներ, մեղադրում իրենց հայրենիքը՝ նման «անմարդ» ժողովուրդի դաշնակիցը լինելուն, իմանալով Գերմանիայի չեզոք մնալու մասին, ասում էին, որ միայն Ամերիկեան կարող է ջարդերը կասեցնել:

Որպէս պետութեան ներքին խնդիր, իբր ոչ ոք իրաւունք ունէր միջամտելու իր հպատակների հանդէպ կատարուած եղեռնի (իր ժամանակին բնորոշում) համար: Մորգընթաուն խոստովանում է, որ քանի դեռ նման վարմունքից իր երկիրը ու նրա մարդկանց չահերը չէին վնասուել, ինք ուղղակի չէր միջամտել տեղի ունեցած դէպքերին: Թալէաթը այդ մասին իրեն չի շեղարած էր եղել: Արդեօք ղեսպանի երկրի շահերից չէ՞ր, որ նպաստել թէ՞ հրահրել էին «Արաբական Գարուն» անուան տակ երկրներ քանդուէին: Իրենց շահի համար միջամտել էին ուրիշ շատ երկրներ՝ ներքին գործերին, գէնք տրամադրել հակադիր կողմերից մէկին, դրացի կղզի երկրի հանդէպ երկարամեայ տնտեսական շրջափակում իրականացնել, իրենց շահերին հակառակող պետութիւնների հանդէպ տնտեսական պատժամիջոցներ կիրառել, որոնցից խիստ տուժում են նրանց մարդիկ: Այդ ինչ շահերից է, որ մինչեւ հիմա էլ ժխտում են, որ իրենց ղեսպանի նկարագրած թուրքը՝ իր իսկ հպատակների ցեղասպանութիւն է կատարել:



տարել: Մորգընթաունին այցելած երկու միսիոնարներ՝ նրան հաղորդել էին Գոնիայի գարհուրելի դէպքերի մասին, նրանց ունկնդրելուց յետոյ Մորգընթաուն, ուղղակի Բ. Դուռ է գնացել: Առաջին «ակնարկով» տեսել, որ Թալէաթը իր վայրագ տրամադրութեան մէջ է գտնուում: Նրա հետ այլ հարցերի մասին խօսելուց յետոյ, Գոնիայի հայերի դէպքերի վիճակի մասին էր սկսել խօսել: Մորգընթաուն հազիւ իր առաջին խօսքն էր արտասանել, Թալէաթը կռուարարի վարմունք էր ցոյց տուել, աչքերը բոցավառած, ծնօտները սեղմած, դէպի իրեն ծռել ու կտրուկ շեշտով բացականչել՝

«Ամերիկացի» են անոնք: Արտայայտուելու հասարակ ձեւ էր այդ, Թալէաթը բացէ ի բաց շարունակել ղեսպանին ասել:

«Ձեռք կրնար հայերուն վստահիլ, յայտարարել էր նա, -եւ դրանից բացի, անոնց հանդէպ մեր վարուելակերպը Միացեալ Նահանգների գիտնալիք բանը չէ: Մորգընթաուն, նրան յայտնել, որ իրեն որպէս իրենց բարեկամը նկատելով հանդերձ, վրդոված է թուրքիայում հայերի հետ կատարուած վարմունքից: Թալէաթ, գլուխը օրօրելով, մերժել էր այդ մասին աւելի խօսել: Հայերին բարեխօսելու համար Թալէաթի հետ Մորգընթաունի տեսակցութիւնը դրական արդիւնք չէր տուել: Նա խոհեմ էր համարել մի այլ տեսակցութեան ընթացքին, Թալէաթի բարուօք տրամադրութեան ժամանակ, խօսք արձարծել հայերի հարցի շուրջ, որը նրան «ինքզինքից» հանում էր: Նման մի ուրիշ տեսակցութեան ատեն, Թալէաթ իրեն տեսնելուց, բացել էր սեղանի գրողը, մի բուռ հեռագիրներ էր հանել:

«Ինչո՞ւ համար այս դրամը մեզի չէք տար, կատակելով ասել էր:

«Ինչ դրամ, հարցրել էր Մորգընթաուն:

Թալէաթ ցոյց տալով մի հեռագիր, ասել, որ Ամերիկայից հայերու համար խոշոր գումար են դրկում ձեզի: Այն լաւագոյնս գործածելու համար, մեզի՝ թուրքերու, յանձնեցէք, մենք նրանց չափ դրամի պէտք ունենք: Մորգընթաուն առարկել էր, որ բան չէր ընդունել: Թալէաթը հաւատացրել էր, որ դրամը պիտի գար: Ճիշտ էր Թալէաթը: Ամէն առաւօտ Պոլիս հասած հեռագիրները, մինչեւ հասցեատէրերին յանձնելը ներկայացուում էին Թալէաթին, նա բոլորը

կարդում էր, նոյնիսկ եթէ երկրի ղեսպանատներին ուղարկուած լինէին: Մորգընթաուն չէր բողոքել, յարմար առիթ էր համարել իրեն արգիլուած նիւթի շուրջ խօսք սկսել:

Խօսակցութեան ընթացքին, Թալէաթ գոհ չէր մնացել Մորգընթաունի կողմից հայերու հանդէպ եղած շահագրգռութիւնից: Բացատրել էր, որ հայերը ուսաների հետ մշտական յարաբերութիւնների մէջ էին: Մորգընթաուն, Թալէաթի հետ վարած խօսակցութիւնից այնպէս էր տպաւորուել, որ նա էր հայերի ամենից անողոք թշնամին, նաեւ իր օրագրին մէջ գրել էր՝ «Թալէաթն է այս խեղճ մարդոց տառապանքների ամենակատարի թելադրիչը»: Նա Մորգընթաունին յայտնել էր, որ այդ քաղաքակրթութիւնը՝ «կառավարութեան պաշտօնական քաղաքականութիւնն է, եւ թէ «տարագրութիւնները աճապարանքով որոշուած բաներ չէին, այլ՝ նրանք արդիւնքն էին երկար ու լուրջ խորհրդակցութեանց»: Թալէաթը, լուրջ ու զայրացկոտ, մերժողական շեշտով պատասխանել էր Մորգընթաունի կողմից ի նպաստ հայերի եղած դիմումնագրերին:

«Մի օր ձեզի հետ բովանդակ Հայկական խնդրոյն վրայ խօսիլ, յետոյ ցածր ձայնով թուրքերէն ասել՝ -բաց այդ օրը երբեք պիտի չգայ»:

«Եւ յետոյ, դուք ինչո՞ւ համար հայերով հետաքրքրուած էք, Թալէաթը հարցրել էր մի ուրիշ հանդիպման ատեն, -Դուք հրեայ էք, այս մարդիկը՝ Քրիստոնեայ: Մահմետականները ու հրեաները շատ լաւ են իրարու հետ: Գանգատելու ինչ ունէք: Ինչո՞ւ համար չէք թողնում այդ քրիստոնեաներին մենք մեր ուզածը անենք:

Թալէաթի այդ միտքը, թուրք մտայնութեան արտացոլումն էր: Թուրքերը չէին մտածել, որ ցեղի եւ կրօնի նկատառումներից զատ ուրիշ բաներ գոյութիւն ունեն, ինչպէս՝ մարդասիրութիւնը, քաղաքակրթութիւնը, արդարութիւնը:

Մորգընթաուն պատասխանել էր, որ ինք այդտեղ չէր գտնուել Հրեայի հանգամանքով, այլ՝ իբր Ամերիկեան ղեսպան, որ իր երկրում բնակուում են 97 միլիոն քրիստոնեաներ եւ 3 միլիոն հրեաներ եւ որ ինք իր տիտղոսով ներկայացնում է եւ քրիստոնեաներին եւ հրեաներին: Նա Թալէաթին դիմած չէր եղել յանուն ցեղի կամ կրօնի, այլ յանուն մարդասիրութեան:

Թալէաթ առարկել էր, որ իրենք լաւ էին վարում ամերիկացիների հետ եւ չէր հասկացել ինչի համար էին զանգատում:

«Այդ հալածանքները, պատասխանել էր Մորգընթաուն, ամերիկացիների դէմ գործ դրուած անարգանք է: Անհրաժեշտ է մարդկայնական սկզբունքներով վարուել եւ չհիմնուել ցեղի տարբերութեան վրայ, եթէ ոչ՝ Միացեալ Նահանգները ձեզ՝ իբր բարեկամների հաւասար կողմ չեն նկատուել: Դուք արհամարում էք ամերիկացի միսիոնարները, իրենց աւել

ՀՈԳԵԽՈՑԸ ԵՒ ՀԱԼԱԾԱԽՏԸ

Ծարունակուած էջ 9-էն

պատճառով զարմանալի չթուի եթէ 1915-ի Ապրիլի 24-ին, Թուրքիոյ նախագահը էրտողան հանդէս գայ հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու յայտարարութեամբ, պարզապէս վերջ դնելու երկրի յառաջապահ մտաւորականութեան իր եւ մասնաւորաբար պետական քաղաքականութեան դէմ տարած պայքարին, այս քայլով նաեւ իբրեւ արդարամիտ եւ իր բոլոր մեղքերուն թողութիւն ստացած, ապաշխարհեալ դեկալար, ճամբայ հարթել Միջին Արեւելքի մէջ Թուրքիոյ պետութեան տարածաշրջանի գերիշխող ուժը դառնալու նպատակի իրականացման:

- Այս պատճառով իսկ, մանաւանդ մեկնելով այն իրականութենէն, որ ժխտումը այլեւս սնանկացած քաղաքականութեան գործօն է, ամէն գնով պարտինք կանխել, արգելադրել եւ արգելել հայոց ցեղասպանութեան ճանաչումով՝ հայ ժողովուրդը հոգեբանական պարտութեան մատնելու Թուրքիոյ հաւանական մարտավարութիւնը... Թոյլ չտանք, որ նման դաւադիր պահու մը հայոց ցեղասպանութեան 100-ամեակը դառնայ հայ ժողովուրդը պառակտող, կոտորակող դարադարձ, որովհետեւ անկարելի է «ճանաչում» ով հարցը

փակուած նկատել, այլ ընդհակառակը՝ բռնցքուած կամքով

Պահանջատիրութիւնը դարձնենք 100-ամեակի մէկ ու միակ կարգախօս, այս ուղղութեամբ Հայաստանի պետութեան ցուցաբերելիք կեցուածքը եւս կարելի է համարել ճակատագրական:

- Պոլմերանկի տրամաբանութեամբ, բոլոր հարթակներու եւ բոլոր բնագաւառներու մէջ կարեւորութիւն ընծայենք հայ-թուրք անհատական հանգամանքով հասանելի համախոհութեան եւ համագործակցութեան գործօնին, պարզապէս որովհետեւ թուրք յառաջապահ մտաւորականութեան իր պատմական յիշողութիւնը վերականգնելու գործընթացը կը սկսի հայոց ցեղասպանութեան բացայայտումով, իսկ այս առանցքին մէջ տարրուղ բազմաբնոյթ աշխատանքները մեծապէս կը նպաստեն թուրքիոյ ժողովրդային-հասարակական խաւերու լուսաբանումին եւ ճիշդ կողմնորոշման:

Եւ վերջապէս ամէն գնով ջանալ, որ հարցը ստանալ իրաւական տարագրում ... Թոյլ չտալ, որ փոխհատուցումը սահմանուի լոկ ինչքերու վերադարձը ձեւաբանող օրինակներով, այլ «Հայ Դատ» ի արդարացիութիւնն ու անժամանացելութիւնը ամրագրել իբրեւ համամարդկային հիմնախնդիր...:

ՆԱԽԾԻՐԸ՝ ՀԱՅ ՄԻՏՔԻՆ ՈՒ ԳԻՐԻՆ ՀԱՆՂԵՊ

Ծարունակուած էջ 1-էն

րը արդէն բոյն դրած է իր հոգիէն ներս եւ յամառ ինքնաշխատութեամբ եւ ընթերցումներով ան կ'ամբողջացնէ իր զարգացումը, նոյնիսկ տիրանալով ֆրանսերէն լեզուին, որով կը ծանօթանայ համաշխարհային գրական գոհարներուն:

Երուխան երկու երեսներով կը հարստացնէ մեր գրական անդաստանը: Նախ, վարպետութեամբ գործածելով իր գիւղին «ատաղձ»ը, կարճ պատմութեամբ քննարկ կը կենդանագրէ գիւղին համեստ, բայց տիպական մարդոց, ընդհարապէս ձկնորս կամ ձուկ վաճառողներու նկարչագեղ կերպարները անոնց ուրոյն կենցաղով, բարքերով հոգեխառնութեամբ, բարբառով եւ կեանքի տաժանակիր կուրծով: Խայտաբղէտ դիպրուածներով, կեցուածքներով եւ մանաւանդ իրապաշտ տեղական գոյնի նուաճումով համեմուած: Ամբողջ նոր եւ անտեսուած դասակարգ մըն է, որ կը մտնէ մեր գիրի անդաստանէն ներս, խոնարհներու պարկեշտ, վեհանձն աշխարհը՝ իր առօրեայ թշուառութեամբ:

Երկրորդ ներդրումը կը հանդիսանայ հոյակապ վէպի մը ծնունդը, զոր նախապէս գրեր էր Պուլկարիոյ Վառնա քաղաքի իր պանդխտութեան օրերուն, համեստ սրճարանի մը անկիւնը, կիսաքաղց վիճակի մէջ, եւ զոր անուաներ էր «Մերժուած Սէր» մելոտրամատիք խորագիրով, բայց եւ ապա Պոլիս վերադարձին վերամշակելով հրատարակած էր «Ամիրային Աղջիկը» տիտղոսագիրով: Միջավայրը դարձեալ Խասպիւղն էր, բայց այս անգամ ոչ միօրինակ ու համեստ իր երեւոյթով միայն, այլ՝ բեւեռացուած հակադիր երկու տարբեր աշխարհներու բախումով: Համեստ ձկնորսներու թշուառ աշխարհը

հոս կ'ընդհարուէր արդէն քայքայումի եզրին հասած «ազնուականութեան» ամիրայական մնացորդացին հետ:

Սիրոյ, ամուսնութեան, խարդաւանանքի եւ յուսախաբուութեան վրայ խարսխուած պամութիւն մը որպէս հիմք ունենալով, Երուխան կը յաջողէր վերականգնանայնել երկու դասակարգերուն ալ տիպական կերպարները, միջնորդան ու հոգեբանութիւնները եւ վարպետօրէն վրձինելով կու տար արեւմտահայ գրականութեան առաջին հոգեբանական յաջողած վէպը:

Եզրակացնելով, ոճիրը իր հաւեր կազմակերպութեամբ իսկ չկրցաւ անճիտել արեւմտահայ շքեղ մեր գրականութիւնը, շնորհիւ նախճիւրէն հրաշքով ազատած կամ պարագաներու բերումով թուրք-խայէն դուրս գտնուած, նոյն համաստեղութեան այն բախտաւորներուն, որոնք կը կոչուէին Թէքէեան, Յակոբ Օշակեան, Զօպանեան, Զապէլ Եսայեան, Լեւոն Շանթ եւ կոստան Զարեան: Անոնք իրենց ներկայութեամբ, հմայքով եւ նոր ներդրումներով ներշնչարանը հանդիսացան նոր սերունդի նոր գրողներու կազմաւորման, որոնք հակառակ սփիւռքեան աննպաստ պայմաններուն, իրենց կարգին ստեղծեցին փայլուն գրականութիւն մը, հայրենի արժանավայել գրականութեան կողքին: Անոնցմէ կը բաւականանամ միայն յիշելով անուները Շահան Շահնուրին, Շուշանեանին, Նիկողոս Սարաֆեանին, Համաստեղին, Արամ Հայկազին եւ Զարեհ Որբունիին որպէս փայլուն ներկայացուցիչները սփիւռքեան սերունդին:

Յարգանք բոլոր նահատակ գրողներուն եւ հանգիստ՝ իրենց անթաղ աճիւններուն: Հայ ժողովուրդն ու իր գրականութիւնը կան ու պիտի մնան առյաւէտ:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ ՇԱՐԱԳՈՐԾՈՒՄ Է

Ծարունակուած էջ 14-էն

Աւելի դժուար է, սակայն կայ ճանապարհ: Այն, որ չենք ուզում այդ հնարաւորութիւնը տեսնել կամ օգտագործել, արդէն ուրիշ հարց է: Այստեղ ճակատագրուած ոչինչ չկայ, թէեւ Յեղասպանութեան շահագործումն օժանդակում է, որ մենք այլընտրանք չտեսնենք կամ չփնտրենք:

- Դուք բազմիցս նշել էք, որ ԱՄՆ-ը կորցրել է Կովկասը: Վերջերս Կիւտորիա Նուլանդը տարածաշրջանային այցի շրջանակներում անդրադարձաւ տարածաշրջանի համար որոշ կարեւոր հարցերի, եւ եղան փորձագետներ, ովքեր պնդեցին, թէ ԱՄՆ-ը փորձում է «ետ նուաճել» Գարաւային Կովկասը Ռուսաստանի ազդեցութիւնից: Դուք տեսնո՞ւմ էք նման միտումներ:

- Սա արդէն որերորդ անգամ է, որ ԱՄՆ բարձրաստիճան պաշտօնէն է այցելում Հայաստան ու ինչ-որ հետաքրքրութիւն է ցուցաբերում մեր նկատմամբ, սակայն դա ոչինչ չի փոխում իրականում: Իսկ որ այս անգամ Վիկտորիա Նուլանդին են ուղարկել, ինձ համար մտահոգիչ է: Նրա անցեալն ու մտեցումներն ինձ մօտ աւելի շատ մտահոգութիւն են առաջացնում, քան՝ հանգստութիւն: Մենք մեր եւ այլ ժողովուրդների պատմութեան մէջ, ներառեալ՝ նոր պատմութեան, շատ ենք տեսել անուշ, բայց եւ ընդհանուր խօսքերի ծանր հետեւանքները: Նորութիւն չէ, որ մեծ պետութիւններն իրենց շահերն են հետապնդում, իրենց հարցերը լուծում ու փորձում մեզ հաւատացնել, որ մեզ մեծ շնորհ են անում: Յաւն այն է, որ մեզանում շատերը նման խօսքերին հաւատ ընծայելը դարձրել են քաղաքական մտեցման հիմք:

Խօսքս միայն ԱՄՆ-ի մասին չէ, անշուշտ: Իսկ Նուլանդի խօսքերին զնահատական տալը՝ առանց նրա անցեալին ծանօթանալու եւ ԱՄՆ-ի քաղաքականութեան մէջ նրա խաղացած վատ դերին լուրջ նշանակութիւն տալու, ոչ միայն

միամտութիւն է, այլեւ վտանգաւոր ու վնասակար: Հնարաւոր է՝ որոշ փորձագէտներ հաւատում են, թէ ԱՄՆ-ը փորձում է «ետ նուաճել» Հարաւային Կովկասը: Հնարաւոր է նոյնիսկ, որ ԱՄՆ-ը՝ ինքն էլ է հաւատում, որ փորձում է վերանուաճել Հարաւային Կովկասը: Սակայն դա չի նշանակում, որ իրականում այդպէս է: Փորձագէտը պիտի որ հասկանայ ու բացատրի այդ բոլորը, սակայն նաեւ որոշ անկախութիւն ցուցաբերի դերակատարների խօսքերից, արժեւորի յարաբերութիւնները ու ներկայացնի իր եզրակացութիւնը: ԱՄՆ-ը երբեք Հարաւային Կովկասը չի նուաճել: Նոյնիսկ, եթէ մի ժամանակ մեծ ազդեցութիւն էր ձեռք բերել, այս հարցում յստակ պիտի լինի, որ «վերանուաճում լայթ» ստուածը գոյութիւն չունի:

- Նման սցենարի դէպքում, ըստ Ձեզ, ԱՄՆ-ը պատրա՞ստ է ապահովել այս երկրների անվտանգութիւնը եւ ապահովագրել այդ երկրներին ռուսական սպառնալիքից:

- Հայաստանի կամ Հարաւային Կովկասի երկրների անվտանգութիւնն ու անկախութիւնը ո՛չ Ռուսաստանը կարող է ապահովել, ո՛չ էլ ԱՄՆ-ը: Միակ էլքը, որը կարող է ապահովել եւ՝ մեր անկախութիւնը, եւ՝ անվտանգութիւնը, մեր հարեւանների հետ մեր հարցերի լուծումն է ու տարածաշրջանային յարաբերութիւնների վերադասաւորումը:

- Ինչպե՞ս էք վերաբերում ՅՅ երկրորդ ճախագահ Ռոբերտ Քոչարեանի այն նկատողութիւններին, որ, բացի Լեւոն Տէր-Պետրոսեանից, նա նաեւ Ձեզ է մեղադրում ԼՂ-ին բանակցութիւններից դուրս թողնելու մէջ:

- Առաջին նախագահն արդէն հիմնաւոր եւ սկզբունքային պատասխան է տուել այդ ամբաստանութիւններին: Իմ պատասխանը պիտի լինի մի քիչ առելի ուշ, սակայն շատ աւելի մանրամասն: Այսօր կարող եմ նշել միայն. Քոչարեանի խօսքերը ցոյց են տալիս, որ նա զբաղուած է յիշողութեան մեքենայութեամբ:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel :----- Email: -----

**Ձեր Ծանուցումները Վստահեցե՛ք
 «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 Email: massis2@earthlink.net

ՆԱԽՃԻՐԸ՝ ՀԱՅ ՄԻՏՔԻՆ ՈՒ ԳԻՐԻՆ ՀԱՆՂԵՊ

Շարունակում էք 20-էն

իմաստով ան անհատականացուցեցաւ եւ ազնուականացուցաւ, եւ այս հիման վրայ վարպետն ուզեց իր երախայրիքը անուանել «Արմենիա», սակայն 1937 թուականին էր եւ Սովետական հայաստանի մէջ ապագա ճակատան միջոցով կը տիրէր, Աւետիք Իսահակեանի հայրական խորհուրդը Մարգարի արտադրած առաջին կոնեակի անուանումը փոխարինեց «Յոբելեանական» ու: Մարգարի համար տրամաբանական էր Իսահակեանի խորհուրդը՝ կարեւորը կանգուն մնալն ու արտադրելն էր, քաղաքական պայմանները կը փոխուէին ու նոր կոնեակներ կրնային ունենալ ազգային անուններ, այսպիսով կնքահայրութեամբ վարպետ Իսահակեանի ծնաւ «Յոբելեանական»ը որ հետագային պիտի արժանանար երեք ոսկի եւ երեք արծաթ մետաղներու:

Այս ոգիով վարպետ Մարգարի ամբողջ կեանքը եղաւ նուիրում, թէեւ երբեմն հանդիպեցաւ քաղաքական ընդդիմութիւններու, երբեմն հալածանքի, սակայն անոր վանեցիկ հաստատամտութիւնը, հայրենիքի սէրն ու ապագայի հանդէպ ունեցած հաւատքը՝ զինք պահեց հաստատ իր ուղիին մէջ եւ արարեց հայկական տասներեք կոնեակներ, որոնք 1937-էն մինչեւ 1973 թուականը նուաճեցին սահմաններ, եւ միջազգային ցուցահանդէսներուն մասնագէտներու արժեւորումներով արժանացան 39 ոսկի եւ 15 արծաթ մետաղներու:

Վարպետ Մարգարի մշակած կոնեակագործութեան նոր ճարտարարուեստով ստեղծուած կոնեակները իւրաքանչիւրն ունի իր պատրաստելու դեղատոմսը եւ յատուկ ձեւն ու աշխատելու դրոշմը: Բայց երբ վերջ կը գտնէր գիտելիքի սահմանը, հոն կը սկսէր մարդկային գործօնը՝ համտես վարպետի քիմքը, համտեսելու աստուածատուր կարողութիւնը: Վարպետ Մարգար Սեղրակեանի նման քիմք ունեցող համտես հագուազիւտ կը պատահի աշխարհի վրայ, պատահական չէր, որ կոնեակի հայրենիք Ֆրանսայի աշխարհահռչակ Քամիլու Camus կոնեակի հաստատութիւնը անոր «համտեսութեան Ապետ»-ի բարձր կոչումը շնորհեց եւ պարգևատրեց ընկերութեան արծաթէ մետաղով:

Մարգար Սեղրակեանի հռչակը արդէն ամէն տեղ էր օրինակ՝ միջազգային դէմքերէն Ֆրանսայի 1956-1958-ի վարչապետ՝ Պիո Բրիտտիան հայաստան իր այցելութեան ընթացքին, երբ իրեն ֆրանսական «Նափոլիոն» կոնեակով կը հիւրասիրեն՝ ան կը մերժէ եւ կը նախընտրէ օգտագործել հայկական անուանի եւ տեսակաւոր կոնեակները:

Իսկ 1943-ին Ստալինը միացեալ թագաւորութեան վարչապետ Ուինստոն Չերչիլին ճալթալի ժողովի ընթացքին կը հիւրասիրէ հայկական «Դուին» կոնեակով, Չերչիլ այնքան կը հաւնի կոնեակը, որ կը խնդրէ Ստալինէն իրեն անընդհատ մատակարարէ «Դուին»ով, եւ

այնուհետեւ Չերչիլն օրական կը խմէր մէկ շիշ Դուին փոխան ֆրանսասկանին:

Մարգար Սեղրակեան իր բոլոր յատկութիւններու կողքին նաեւ դիւանագէտ էր, Սովետական Հայաստան այցելող բոլոր բարձրաստիճան հիւրերը այցելութիւն կուտային կոնեակի գործարան եւ կը դիմաւորուէին վարպետ Մարգարի կողմէ, անգամ մը կովկասեան ուժերու զինավարժական փորձերէ ետք հրամանատարութիւնը, իրենց հետ ունենալով տասնեակ բարձրաստիճան զինուորականներ, կ'այցելէն կոնեակի գործարանը, վարպետ Մարգար կը հիւրասիրէ զիրենք իր պատրաստած անուանի ու հայկական կոնեակներով, եւ յարմար պահուելու բաժակը կը բարձրացնէ ու կ'ըսէ. -

«Ես կը խմեմ այն պահու կենացը, երբ ձեր հրամանատարութեան ներքոյ սովետական զինուորը կը հասնի վան եւ դրօշը կը բարձրացնէ վանայ բերդին վրայ»:

Բոլորը ծափահարութիւններով կը խմեն առաջարկուած կենացը:

Իսկ ուրիշ անգամ գործարան կ'այցելէ թրքական հանրապետութեան նախարար մը եւ խմելով հրամայուած կոնեակը շատ կը հաւնի ու գարմանք կ'արտայայտէ արտադրութեան քանակի շատ քիչ ըլլալուն, Մարգար բնաւ ինքզինք չի կորսնցնէր եւ յանդգնութեամբ կը պատասխանէ. -

« Այդ հարցի լուծումը ձեր ձեռքն է, յառաջացուցէք թուրքիոյ մէջ ընկերվարական յեղափոխութիւն, վերադարձուցէ՛ք մեր հողերը մեզի, մենք ալ տնկենք այգիներ, հասցնենք իւղողը, պատրաստենք զինի ու անկէ ստանանք համով կոնեակ՝ այն ատեն առատօրէն կը նուիրենք ձեզի»:

Այսպէս յարուցեալ հայ ժողովուրդի գաւակ վանեցի որբուկը՝ Մարգար Սեղրակեան վերապրելով ոտքի կանգնեցաւ, դարձաւ կոնեակագործ, համտեսի վարպետ, հայաստանի եւ խորհրդային Միութեան նոր իւրաքանչիւր ճարտարարուեստի հիմնադիր, որուն բաղադրատոմսը ստիպեց աշխարհին հաստատել, որ հայկական կոնեակը ֆրանսականին արժանի մրցակից է եւ ան նուաճեց ոչ միայն խորհրդային Միութեան սահմանները այլ անցնելով անկէ անդին հասաւ տարբեր երկիրներ եւ ըստ գրող Բորիս Պաստերնակի՝ Մարգար Սեղրակեան ստիպեց բոլորին որ խոստովանին թէ Մարգար Սեղրակեանի կոնեակը «Հայերէն է խօսում»:

Մարգար Սեղրակեան կոնեակի գործարանէն ներս շարունակեց իր աշխատանքը մինչեւ 1973, երբ աչքերը փակեց այս կեանքին առանց տեսնելու իրականացումը իր տուն դարձի երազին:

Բիւր յարգանք վարպետ Մարգար Սեղրակեանի վաստակին, խունկ ու մոմ կոնեակագործութեան նորարար նահապետի յիշատակին, թող որ իր քալած ուղին լուսաւորէ մեր երիտասարդ սերունդները եւ ներշնչէ զիրենք հայրենասիրութեամբ եւ հայրենակերտման վսեմ եւ վեհ գաղափարներով:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ՅԵՆՐԻ ՍՈՐԳԸՆԹԱՈՒ

Շարունակում էք 25-էն

տարանացումի գործը մեր երկրում գնահատուած է: Իրենք նիւթապաշտներ չեն, այլեւ համոզուած այլասէրներ եւ արդարութիւնը ու քաղաքակրթութիւնը տիեզերականօրէն տարածող: Ասում էք, որ պատերազմում յաղթանակած լինելու դէպքում ամբողջ աշխարհը պիտի արհամարհէ: Մորզընթաուն առարկել էր, որ Թուրքիան ամբողջ աշխարհի կարծիքի դիմաց պիտի գտնուի, մանաւանդ՝ Միացեալ Նահանգներին, շարունակելով աւելացրել:

-Եւ մեր ժողովուրդը երբեք պիտի չմոռնայ այս ջարդերը, այս գարշելի եւ կանոնաւոր քանդումը Թուրքիայի քրիստոնեաներուն: Իբր ոճրագործներ պիտի նկատէ նրանց, որոնք որ պատասխանատուներն են: Դուք այլեւս պիտի չկարողանաք խուսափիլ այդ պատասխանատուութիւնից, ասելով, թէ ձեր երկիրը շարժած է ներքին գործոց նախարարի հանգամանքով եւ երբեք իբր Թալէաթ: Մորզընթաունի դիտողութիւնները վերաւորական չէին թուացել, չէին այլափոխել նրան, անշունչ էակի նման լսել էր խօսակցին: Շրջանցելով դեպքանի առարկուածները, Թալէաթ մի ուրիշ հանգամանքի էր անդրադարձել:

-Հայերը, ասել էր նա, մերժել էին իրենց գէնքերը յանձնել, վանում ու Ձէյթունում դիմադրեցին իշխանութեանը, նրանք ուռուերի դաշնակիցներն են: Ինզինքնիս պաշտպանելու համար միակ միջոց մը կայ՝ տարագրութիւնն է այդ: -Ենթադրենք, թէ մի քանի հայեր դաւաճանած էին ձեզի դէմ, այդ պատճառ չէ, որ դուք ամբողջ ցեղը փշացնէք, կիներն ու մանուկները շարժարէք:

-Այդ անխուսափելի է, պատասխանել էր Թալէաթը:

Թալէաթը, միշտ նոյն պատասխանն էր տուել «Պերլինէր Թակէպրաթ»-ի թղթակցին, երբ նա նման հարցումն առել էր իրեն: -«Մեր երեսին են տալիս, թէ մենք տարբերութիւն չենք դնում անմեղ ու մեղաւոր հայերի միջեւ, այդ անկարելի էր, որովհետեւ այսօրուայ անմեղները՝ վաղուան յանցաւորները պիտի լինեն:

Թալէաթին հաճոյ չէր եղել այդ խնդրի շուրջ խօսելու, որովհետեւ դեպքանատան այն պաշտօնեան որ կողմերի միջեւ զրոյցների թարգմանի պաշտօնն էր կտարում՝ Հայ էր եղել:

Թալէաթ Մորզընթաունի լուր էր ուղարկել, հարցնելով իրեն առանձին ընդունել չէ՞ր կարող, քանի որ ցանկացել էր «հիմնապէս խօսել Հայկական հարցի մասին», յայտնելով նաեւ ով պիտի լինէր իր թարգմանը: Տեսակցութիւնը տեղի էր ունեցել երկու օր յետոյ, կարծես նախախնամութեան ընձեռած դիպուածով էր, որ իր վերջին այցելութիւնից յետոյ կտրել տուած լինէր մօրուքը: Դահլիճ մանելուց յետոյ, Թալէաթ հեզմանքով ասել՝ «Երի-

տասարդ էք դարձել, այնքան երիտասարդ, որ ձեզանից այլեւս խրատ, խորհուրդ չեմ կրնար հարցնել, ինչպէս որ երբեմն անում էի»:

-Ես մօրուքս կտրել տուի, պատասխանել էր Մորզընթաուն, որովհետեւ հայերուն հանդէպ ձեր պատճառած ցաւը բոլորովին ճերմկացուցին զայն:

Խօսակցութիւնը սկսելուց առաջ, Թալէաթ յայտարարել էր. □ Ես ինզրեցի այսօր գաք, փափաքելով որ ձեզի բացատրեմ հայերի հանդէպ մեր վարմունքը: Այն հիմնուած է երեք կէտերի վրայ: Նախ՝ հայերը հարստացած են թուրքերուն կորուստով, անոնք որոշած են մեր տիրապետութիւնից բաժնուիլ ու անկախ պետութիւն ստեղծել եւ որ բաց է ի բաց օգնած են մեր թշնամիներին, կովկասի մէջ օժանդակած ուռուերուն, որը պատճառ հանդիսացած է մեր ձախողանքներին: Մենք անդառնալի որոշում տուած ենք, պատերազմի վախճանէն առաջ անգոր դարձնել նրանց:

Մորզընթաուն գրում է, որ ինք կարող էր հերքել այդ առարկումների իւրաքանչիւրը: Ճարտարարուեստական կարողութեան տեսակետից է հայերի գերազանցութեան առաւելութիւնը՝ ծոյլ ու սահմանափակ թուրքերի վրայ: Հայերի առեւտրական մրցակցութիւնը քանդելու համար հայերին ջարդելու գաղափարը թուրքերի կողմից արժարժուած հասարակ գաղափար չէր: Նրանց գլխաւոր ամբաստանութիւնն էր, որ հայերը դաւաճանած էին թուրքերուն եւ գործակցած նրանց թշնամիների հետ: Հայերը երկար տարիների ընթացքում միշտ եւրոպական պետութիւններին էին դիմել՝ գողութիւնների, սպանութիւնների եւ թշնամիների դէմ իրենց պաշտպանելու համար: «Հայկական Հարցը» ցեղային բոլոր վէճերի նման հետեւանք էր երկար դարերի անարդարութիւնների եւ վատ վարմունքների: Դրա լուծումը կարող էր լինել ընդունել կառավարական օրէնսդրութիւն՝ հիմնուած բոլոր քաղաքացիների հաւասարութեան եւ որ ոճրագործները դատուէին որպէս պարզ անհատներ եւ ոչ թէ նկատի ունենային նրանց ազգային պատկանելիութիւնը: Մորզընթաուն երկար խօսել էր նման եւ այլ խնդիրների շուրջ:

Թալէաթ առարկել էր, որ նշանակութիւն ունէր փաստարկներ ներկայացնելը, Թուրքիան, հայերի երեք չորրորդի վիճակը արդէն «վերջացուցած» է, այլեւս ո'չ Բաղէշի, ո'չ վանի եւ ոչ էլ էզրում քաղաքի մէջ Հայ կայ: Երկու ցեղերի միջեւ ատելութիւնը բուռն է, մենք պարտաւոր ենք «կարգադրել» նրանց գործը, թէ ոչ ստիպուած ենք վախենալ նրանց վրէժխնդրութիւնից: Վախեցաւ այդ «Գորշ գայլեր»-ի վոհմակը, Հայ վրիժառուների կարմիր գնդակներով չեղուած իրենց պիղծ արիւնով՝ հատուցեցին ցեղին պատճառուած ցաւը:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save Support Sustain
Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Gleedale, CA 91209-1948
www.syrianarmenianreliefund.org

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!



Armenian Genocide

100 1915-2015 Years Of

REMEMBRANCE

**ACCEPT THE TRUTH
RECOGNIZE THE ARMENIAN GENOCIDE
RETURN OUR HISTORIC LANDS**

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

We Demand Justice!

"I should like to see any power of the world destroy this race, this small tribe of unimportant people, whose wars have all been fought and lost, whose structures have crumbled, literature is unread, music is unheard, and prayers are no more answered. Go ahead, destroy Armenia . See if you can do it. Send them into the desert without bread or water. Burn their homes and churches. Then see if they will not laugh, sing and pray again. For when two of them meet anywhere in the world, see if they will not create a New Armenia ."

William Saroyan

Kradjian Importing Co., Inc.
GLENDALE CA 91204
www.kraimpco.com

ACCEPT THE TRUTH
RECOGNISE THE ARMENIAN GENOCIDE
RETURN OUR HISTORICAL TREASURES!

ACCEPT THE TRUTH
RECOGNISE THE ARMENIAN GENOCIDE
RETURN OUR HISTORICAL TREASURES!